

Վեղի ջրամբարի և Վեղի գետի իշխման տակ գտնվող փորձնական տարածքներում ներտնտեսային ոռոգման ցանցի կառուցման լրամշակված նախագծի

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ
(լրամշակված)



Ձեռնարկող

ՄՈՒՆԻԷՆՍՈՒՆ

Հունվար, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	11
2.3.1. Մակերեսային ջրման եղանակները	12
2.3.2. Կաթիլային ջրման եղանակները	13
2.3.3. Անձրևացմամբ ջրման եղանակները	14
2.4.1. Ուրքցածոր համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի հատուկ պայմաններ	17
2.5.1. Ոռոգման ներտնտեսային ցանցերի էլեմենտները	17
2.5.2. Ջրի մաքրում/ֆիլտրացիա և ֆիլտրացիոն կայաններ	17
2.5.3. Ջրի ճնշման կարգավորման հանգույց	20
2.5.4. Ոռոգման ներտնտեսային ցանցերի բաժանարարների և ճյուղերի նախագծում	20
2.5.5. Հիմնական տարբերակի ընտրություն	20
2.5.6. Ջրաչափություն, ջրի բաշխման և կառավարման պլան	21
3. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ	22
4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	31
5. ԾՐԱԳՐԻ ԱՌՆՉՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	33
6. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	37
6.6.1. Մթնոլորտային օդը	45
6.6.2. Մակերևութային ջրերի որակը	45
6.7.1. Բուսական աշխարհը	46
6.7.2. Կենդանական աշխարհը	47
6.7.3. Պատմամշակութային միջավայր	56
6.7.4. Ազդակիր տարածքի պատմամշակութային հուշարձանները	56
7. ԾՐԱԳՐԻ ՏԵՂԱՄՍՍԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ	58
7.1.1. Ազդակիր համայնքներ	59
8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	62
9. ՄԵՂՄԱՅՄԱՆ և ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	66
10. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ	72
11. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	73
12. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ	75
13. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ	76
14. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	77
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	78
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ	85
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ Ձև	89
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԴԱՇԱՅԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ	90
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿԵՐ, ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՏԻՄ-ԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	94
ՀԱՎԵԼՎԱԾ 6.	107
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	109

Աղյուսակ 1-1 Նախագծման նախնական տարածքները	10
Աղյուսակ 2-1 Ջրօգտագործման արդյունավետությունը	12
Աղյուսակ 2-2 Ֆիլտրացիոն կայանները	19
Աղյուսակ 3-1 ՀՀ բնապահպանական օրենքները	22
Աղյուսակ 3-2 ՀՀ կողմից վավերացված բնապահպանական կոնվենցիաներն ու արձանագրությունները	27

Աղյուսակ 5-1 Էկոլոգիական ռիսկերի սխեմա.....	35
Աղյուսակ 5-2 Ծրագրի ազդեցությունները.....	36
Աղյուսակ 6-1 Բացառման չափանիշները ռոռզման ցանցի մշակման համար.....	37
Աղյուսակ 6-2 Օդի ջերմաստիճանը.....	42
Աղյուսակ 6-3 Օդի հարաբերական խոնավությունը.....	42
Աղյուսակ 6-4 Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը.....	42
Աղյուսակ 6-5 Քամի.....	43
Աղյուսակ 6-6 Կաթնասունների տեսակային կազմը.....	48
Աղյուսակ 6-7 Թռչունների տեսակային կազմը.....	49
Աղյուսակ 6-8 Ուսումնասիրվող տարածքում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված միջատների ցանկը	55
Աղյուսակ 6-9 Ուսումնասիրվող տարածքում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում և միջազգային կարմիր ցուցակում գրանցված կենդանատեսակներ.....	55
Աղյուսակ 7-1 Շահառու համայնքների ժողովրդագրական տվյալները 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ.....	61
Գծապատկեր 1-1 Ծրագրի ընդհանուր տեղադիրքը.....	5
Գծապատկեր 6-1 Ծրագրի տեղամասի տուպոգրաֆիա.....	37
Գծապատկեր 6-2 Փոշու մակարդակը.....	45
Գծապատկեր 6-3 Վեղի գետի ավազանը.....	45
Գծապատկեր 6-4 ՀՀ մակերևութային ջրերի որակը.....	46
Գծապատկեր 7-1 Արարատի մարզի քարտեզը.....	58

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՊ	Առողջապահության նախարարություն
ԲՄԿՊ	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԶՏԳ	Զարգացման ֆրանսիական գործակալություն
ծմբ	ծովի մակարդակից բարձր
կմ	կիլոմետր
կմ ²	քառակուսի կիլոմետր
հա	հեկտար
ՀԿ	Հասարակական կազմակերպություններ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
մ	մետր
ՄԱԿ ԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման կազմակերպություն
մլն մ ³	միլիոն խորանարդ մետր
ՄՊ	Մոնիթորինգի պլան
ՆԳՀ	Նախնական գնահատման հայտ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄՍԱԳ	Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում
ԶՏ ԾԻՄ	Զրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ
ԶՕԸ	Զրոգտագործողների ընկերություններ
ՎԳՊ	Վերաբնակեցման գործողությունների պլան
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
\$	ԱՄՆ դոլար

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՆԱԽԱԲԱՆ

Վեդի ջրամբարը կառուցվում է Արարատի մարզում՝ Վեդի գետի աջափնյա Կուտուց սելավատարի վրա, ջրամբարը լցնելու համար ջրաղբյուր են հանդիսանում Վեդի և Խոսրով գետերի ազատ/վարարային հոսքը:

Վեդի ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագիրն իր մեջ ներառում է Վեդի 29.4 մլն մ³ ընդհանուր ծավալով ջրամբարի պատվարների, օժանդակ կառուցվածքների, Վեդի և Խոսրով գետերի վրա ջրառ հանգույցների, ջրի փոխադրման համակարգի, ոռոգման համակարգի (մոտ 37 կմ երկարությամբ ճնշման խողովակաշար) ինչպես նաև փորձնական տարածքներում ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցման (նոր տեխնոլոգիաների կիրառման հնարավորությամբ) նախագծման և շինարարության աշխատանքներ:

Զարգացման ֆրանսիական գործակալության (ՋՖԳ/AFD) վարկային միջոցներով և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ 2017 թվականից մեկնարկել է «Վեդի ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցում» ծրագիրը, որը ներառում է Վեդի և Խոսրով գետերի վրա երկու ջրառ հանգույցների, ջրի փոխադրող համակարգի, պատվարի (ներառյալ օժանդակ կառուցվածքները) և ջրամբարից մինչև ջրթափային հանգույցներ ոռոգման համակարգի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում և շինարարություն/կառուցում: Ծրագրում ներառված են նաև ոռոգման համակարգից սկսվող և մինչև ֆերմերային տնտեսություններ/հողատարածքներ ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցումը (փորձնական տարածքներում) նույնպես:

Ամբողջությամբ կառուցված են Վեդի և Խոսրով գետերի ջրառ հանգույցները, ջրառ հանգույցները սկսվող ջրի փոխադրող համակարգը և ջրամբարից սկիզբ առնող ոռոգման համակարգը:

Ծրագրի իրականացման շրջանակներում մշակվել է Վեդի ջրամբարի և Վեդի գետի իշխման տակ գտնվող հողատարածքների (4000 հա) ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցման մանրամասն նախագծեր, որից նախատեսվում է 1200-1300հա փորձնական հողատարածքներում կառուցել ոռոգման ներտնտեսային ցանց՝ ոռոգման նոր տեխնոլոգիաների կիրառման հնարավորությամբ:

1.2. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

ՀՀ կառավարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (այսուհետ՝ ՏԿԵՆ), ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (այսուհետ՝ ՀՏՁՀ), ՏԿԵՆ Ջրային կոմիտե, «Արտաշատ» և «Արարատ» ՋՕԸ-ներ, «Ջրառ» ՓԲԸ և շուրջ 8 համայքների 7000 ջրօգտագործողներ:

Լրամշակված նախագիծը պետք է ներառի նաև ԲՄԿՊ-ը և ՄՊ-ը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը պատասխանատու կլինի ծրագրի ընդհանուր ղեկավարման, իսկ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղը» (այսուհետ՝ «ՋՏ ԾԻՄ»), որպես Պատվիրատու՝ ծրագրի իրականացման համար:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղը» ուղիղ պայմանագրի կնքմամբ («Մեկ աղբյուր/առաջարկ (Single Source/Proposal)» (համաձայն ՋՖԳ ուղեցույցների) սույն Առաջադրանքի իրականացումը հանձնարարել է «Մոդուլ» ՍՊԸ-ին:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատի մարզում, Վեդի քաղաքից դեպի հյուսիս, Երևանից մոտ 50 կմ դեպի հարավ և Արտաշատ քաղաքից 18 կմ հարավ-արևելք: Ծրագրի ընդհանուր տեղադիրքը ցույց է տրված ստորև՝ Գծապատկեր 1-1ում:



Գծապատկեր 1-1 Ծրագրի ընդհանուր տեղադիրքը

Վեդիի ջրամբարի կառուցման նպատակն է՝ բարձրացնել գյուղատնտեսական արտադրության մակարդակը Արարատյան հարթավայրում «Արտաշատ» ՋՕԸ, «Վեդի» տեղամասի և Արարատի ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) միջոցով: Դա նախատեսվում է իրականացնել գործողությունների համապարփակ փաթեթի միջոցով՝ ոռոգման ենթակառուցվածքներ (պատվար և ոռոգման ցանց), ինստիտուցիոնալ մաս (ՋՕԸ-ներ, ֆերմերային կոոպերատիվներ), ինչը կապահովի լավագույն վերադարձը ներդրումներից շահառուների համար (ֆերմերներ, գյուղական համայնքներ):

Ֆերմերների հողակտորների միջին չափը փոքր է. միջինում 0,7 հա՝ «Արտաշատ» ՋՕԸ-ի «Վեդի» տեղամասի և 0,9 հա՝ «Արարատ» ՋՕԸ-ի դեպքում:

Արարատյան հարթավայրին բնորոշ են շոգ, չոր ամառները և ցուրտ, չոր ձմեռները: Ընդհանուր տարեկան տեղումները կազմում են 200-300մմ, որը ցածր ցուցանիշ է: Ջրի պակասը հավասարակշռվում է բաց ջրանցքներով՝ ոռոգման համակարգի միջոցով:

ՀՏԶՀ «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի» կողմից իրականացվող **«Վեդի ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցում» ծրագրի** շրջանակներում նախատեսվում է նաև Վեդի ջրամբարի և Վեդի գետի իշխման գոտում ընտրված փորձնական տարածքներում կառուցել ոռոգման ներտրտեսային ճնշումային փակ ցանց, որը հնարավորություն կընձեռի **«ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ոռոգվող գյուղատնտեսության զարգացում» ծրագրի** իրականացման փուլում ապահովել աջակցություն՝ այդ տարածքներում ոռոգման արդի համակարգեր ներդնելու, կաթիլային և/կամ անձրևացման ոռոգման սարքավորումների և տեղադրման ծախսերի ֆինանսավորման նպատակով գրավադրման հիմնադրամի ստեղծմամբ ու համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ, և յուրաքանչյուր համայնքի (ընդհանուր 8 համայնք) համար կազմվել է համապատասխան արձանագրություն: Վեդի գետի իշխման գոտում փորձնական տարածքների նախնական ընտրությունն իրականացվել է համատեղ՝ ՀՀ էկոնոմիկային նախարարության, ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, «Արտաշատ» և «Արարատ» ՋՕԸ-ների և համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ: Փորձնական տարածքների նախնական ընտրությունն իրականացվել է հետևյալ հիմնական չափանիշների համաձայն.

- պ/կ-ների իշխման տակ գտնվող հողատարածքներ,
- ոռոգման պակասորդ ունեցող և/կամ առկա ոռոգման համակարգի, ինչպես նաև նախագծված ոռոգման ներտնտեսային ճնշումային փակ ցանցի վերջնամասում գտնվող հողատարածքներ,

- սեփականաշնորհված հողատարածքներ (գյուղատնտեսական նշանակության) /ոչ տնամերձ/,
- ոռոգման ջրի բացակայության պատճառով ներկայումս չմշակվող հողատարածքներ,
- գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներ,
- ցրված տեղաբաշխումից խուսափելու համար փորձնական տարածքների համախմբում հիմնական բաժանարարների/ֆիլտրացիոն կայանների (ՖԿ) իշխման տակ,
- այլ ծրագրերի շրջանակներում ներտնտեսային ցանցի վերակառուցված և/կամ նախատեսվող վերակառուցման աշխատանքների համադրում՝ խուսափելու համար նույն տարածքը փորձնական տարածքում ներառելուց:

Ներտնտեսայի ցանցի արդիականացման նպատակները

Վեդի ջրամբարի և Վեդի գետի իշխման գոտում փորձնական տարածքների նախնական ընտրությունն իրականացվել է համատեղ՝ ՀՀ Էկոնոմիկային նախարարության, ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, «Արտաշատ» և «Արարատ» ԶՕԸ-ների ու համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ, և յուրաքննաչուր համայնքի (ընդհանուր 8 համայնք) համար կազմվել է համապատասխան արձանագրություն (տես կից ԱՊ-ի հավելված N2): Փորձնական տարածքների նախնական ընտրությունն իրականացվել է հետևյալ հիմնական չափանիշների համաձայն.

- պ/կ-ների իշխման տակ գտնվող հողատարածքներ,
- ոռոգման պակասորդ ունեցող և/կամ առկա ոռոգման համակարգի, ինչպես նաև նախագծված ոռոգման ներտնտեսային ճնշումային փակ ցանցի վերջնամասում գտնվող հողատարածքներ,
- սեփականաշնորհված հողատարածքներ (գյուղատնտեսական նշանակության) /ոչ տնամերձ/,
- ոռոգման ջրի բացակայության պատճառով ներկայումս չմշակվող հողատարածքներ,
- գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներ,
- ցրված տեղաբաշխումից խուսափելու համար փորձնական տարածքների համախմբում հիմնական բաժանարարների/ֆիլտրացիոն կայանների (ՖԿ) իշխման տակ,
- այլ ծրագրերի շրջանակներում ներտնտեսային ցանցի վերակառուցված և/կամ նախատեսվող վերակառուցման աշխատանքների համադրում՝ խուսափելու համար նույն տարածքը փորձնական տարածքում ներառելուց:
- Փորձնական հողատարածքների սահմանափակում և հավասարության սկզբունքի ապահովում՝ Վեդի ջրամբարի իշխման տակ գտնվող 8 համայնքների համար նախատեսել փորձնական տարածքներում ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցում:

Նախնական ընտրությունն իրականացվել է համաձայն վերոնշյալ չափանիշների:

1.3. ՓՈՂՁՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր համայնքի համար

➤ «Ուրցաձոր ճյուղի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 3 լոտ 1 նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել Վեդի ջրամբարի Ջրի փոխադրող համակարգի ՆԿ62+23 -ում կառուցված Ջրթողի (N9 դատարկման հոր/ նախագծային N4 ֆիլտրացիոն կայան) իշխման տակ գտնվող Ուրցաձոր համայնքի ամբողջ 156.49հա հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի (ճնշումային) կառուցումը, որպես փորձնական տարածք:

Վեդի ջրամբարի Ջրի փոխադրող համակարգի ՆԿ62+23-ում կառուցված Ջրթողով (N9 դատարկման հոր) նախատեսվում է Վեդի գետից ոռոգում իրականացնել Ուրցաձոր համայնքի 156.49 հա հողատարածքներում, որոնք ներկայումս ինքնահոս եղանակով ոռոգվում են Վեդի գետից սկիզբ առնող «Կարակուշ» (վերջնամաս), «Գյուղի մեջի առու» (վերջնամաս) և «Դաշտավան» (վերջնամաս) ջրանցքներով: Նշված հողատարածքները ոռոգվում են միայն Վեդի գետով և գտնում են ջրանցքների վերջնամասում, որտեղ առկա է ոռոգման ջրի պակասորդ:

➤ «Ուրցաձոր ճյուղի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 3 լոտ 2 նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել ՆԿ27+80-ում կառուցված վերջնային Ջրթողի (նախագծային ՖԿ N5) իշխման տակ գտնվող Ուրցաձոր համայնքի հողատարածքներից մոտ 28.17 հա-ի («Կարակուշ» ջրանցքի իշխման տակ/ վերջնամասում) ներտնտեսային ոռոգման ցանցի (ճնշումային) կառուցումը, որպես փորձնական տարածք:

Ոռոգման համակարգի Ուրցաձոր ճյուղի ՆԿ 4+60-ում կառուցված Ջրթողով և ՆԿ27+80-ում կառուցված վերջնային Ջրթողով ջրամբարից ոռոգում է իրականացվելու Ուրցաձոր համայնքի շուրջ 99.9 հա հողատարածքներում, որոնք ներկայումս ինքնահոս եղանակով ոռոգում են Վեդի գետից սկիզբ առնող «Կարակուշ» (գտնվում են ջրանցքի վերջնամասում), «Գյուղուկ N1» և «Գյուղուկ N2» ջրանցքներով: Նշված հողատարածքները ոռոգվում են միայն Վեդի գետով և գտնում են ջրանցքների վերջնամասում, որտեղ առկա է ոռոգման ջրի պակասորդ: Բացի դա նախնական ընտրված հողատարածքները գտնվում են նաև Վեդի ջրամբարի Ուրցաձոր ճյուղի վերջնամասում:

ՀՀ Արարատի մարզի Դաշտաքար համայնքի համար

➤ **«Միսավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 4 լոտ 1** նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել ՆԿ22+00-ում կառուցված N15 Ջրթողի (նախագծային N3 ֆիլտրացիոն կայան) իշխման տակ գտնվող ամբողջ 35.46 հա հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի (ճնշումային) կառուցումը, որպես փորձնական տարածք:

Ոռոգման համակարգի Միսավան ճյուղի ՆԿ22+00-ում կառուցված Ջրթող N15-ով ջրամբարից ոռոգում է իրականացվելու Դաշտաքար համայնքի 35.46 հա հողատարածքներում, որոնք ներկայումս ինքնահոս ոռոգվում են «Գյուղուկ» (վերջնամաս) ջրանցքով և «Վեդի N4» պ/կ-ով (մեխանիկական եղանակ): Նշված հողատարածքներն ընտրվել են, քանի որ գտնվում են ջրանցքի վերջնամասում, ինչպես նաև ոռոգվում են մեխանիկական եղանակով:

➤ **«Միսավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 4 լոտ 2** նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել ՆԿ 26+23-ում կառուցված N16 Ջրթողի իշխման տակ գտնվող Դաշտաքար համայնքի ամբողջ 28.33 հա հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի (ճնշումային) կառուցումը, որպես փորձնական տարածք:

Ոռոգման համակարգի Միսավան ճյուղի ՆԿ 26+23-ում կառուցված Ջրթող N16-ով ջրամբարից ոռոգում է իրականացվելու Դաշտաքար համայնքի 28.33հա հողատարածքներում, որոնք ներկայումս ինքնահոս ոռոգվում են «Գյուղուկ» (վերջնամաս) ջրանցքով և «Վեդի N4» պ/կ-ով (մեխանիկական եղանակ): Նշված հողատարածքներն ընտրվել են, քանի որ գտնվում են ջրանցքի վերջնամասում, ինչպես նաև ոռոգվում են մեխանիկական եղանակով:

➤ **«Միսավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 4 լոտ 1** նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել ՆԿ 65+40-ում կառուցված N18 Ջրթողի (նախագծային N6 ֆիլտրացիոն կայանի (ՖԿ)) իշխման տակ գտնվող Դաշտաքար համայնքի շուրջ 35.2հա հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի (ճնշումային) կառուցումը, որպես փորձնական տարածք:

Ոռոգման համակարգի Միսավան ճյուղի ՆԿ65+40-ում կառուցված N18 Ջրթողով ջրամբարից ոռոգում է իրականացվելու Դաշտաքար համայնքի 160.95հա հողատարածքներում, որոնք ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվում են «Վեդի N2» և «Միսավան» պ/կ-ներով: Ընդհանուր հողատարածքներից ընտրվել են միայն 35.2 հա, որտեղ գրեթե ամբողջությամբ բացակայում է ներտնտեսային ցանցը:

ՀՀ Արարատի մարզի ք. Վեդի համար

➤ **«Միսավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 4 լոտ 2** նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել ՆԿ 26+23-ում կառուցված N16 Ջրթողի (նախագծային N4 ֆիլտրացիոն կայան) իշխման տակ գտնվող Վեդի քաղաքի 70հա («Վեդի N4» պ/կ-ի իշխման տակ) հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի (ճնշումային) կառուցումը, որպես փորձնական տարածք:

Ոռոգման համակարգի Միսավան ճյուղի ՆԿ 26+23-ում կառուցված N16 Ջրթողով ջրամբարից ոռոգում է իրականացվելու Վեդի քաղաքի 421.4 հա հողատարածքներին (այդ թվում տնամերձ 260 հա), որոնք ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվում են «Վեդի N3», «ՎեդիN5» և «Վեդի N6» պ/կ-ներով, ինչպես նաև ինքնահոս եղանակով՝ «Բազկի առու» և «Միջագետ» ջրանցքներով: Սույն ԱՊ-ի շրջանակներում չի նախատեսվում տնամերձ հողատարածքներում ներտնտեսային ցանցի կառուցում: Այդպիսով ընտրվել է միայն 70 հա փորձնական հողատարածքների հատվածը, որը գտնվում է Վեդի N4 Պ/կ-ի իշխման տակ:

➤ **«Միսավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 4 լոտ 1** նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել ՆԿ 47+87-ում կառուցված N17 Ջրթողի (նախագծային N5 ֆիլտրացիոն կայան) իշխման տակ գտնվող Վեդի քաղաքի 105հա հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի (ճնշումային) կառուցումը, որպես փորձնական տարածք:

Ոռոգման համակարգի Միսավան ճյուղի ՆԿ47+87-ում կառուցված N17 Ջրթողով ջրամբարից ոռոգում է իրականացվելու Վեդի քաղաքի 231.71 հա հողատարածքներին, որոնք ներկայումս

մեխանիկական եղանակով ոռոգվում են «Վեդի N1», «Վեդի N2» և «Վեդի N3» պ/կ-ներով, ինչպես նաև ինքնահոս եղանակով՝ «Բազկի առու» (վերջնամաս) և «Միջագետ» (վերջնամաս) ջրանցքներով: Ջրամբարից նշված հողատարածներն ամբողջությամբ ոռոգելու համար անհրաժեշտ կլինի առնվազն Միսավան ճյուղի ՆԿ 47+87-ից կառուցել ոռոգման համակարգ մինչև պոմպակայանների ջրթափ ավազանները: Այդ իսկ պատճառով և հաշվի առնելով, որ նշված տարածքներն ոռոգվում են մեխանիկական եղանակով և գտնվում են ինքնահոս ջրանցների վերջնամասում, փորձնական տարածքներն ընտրվել են ներտնտեսային ցանցի հեռեցնող խողովակաշարի վերջնամասում և սկզբնամասում (պ/կ-ների իշխման տակ):

ՀՀ Արարատի մարզի Գոռավան համայնքի համար

➤ **«Գոռավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 1 լոտ 1** նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել Ոռոգման համակարգի Գոռավան ճյուղի ՆԿ23+10-ում կառուցված N7 Ջրթողի (նախագծային N4ՖԿ) իշխման տակ գտնվող Գոռավան համայնքի 73 հա (հիմնական հեռացնող խողովակաշարի վերջնամասում) հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի (ճնշումային) կառուցումը, որպես փորձնական տարածք:

Ոռոգման համակարգի Գոռավանի ճյուղի ՆԿ 23+10-ում կառուցված N7 Ջրթողով ջրամբարից ոռոգում է իրականացվելու Գոռավան համայնքի 98.56 հա հողատարածքներին (Թալասավան ջրանքի իշխման տակ գտնվող հեղատարածքների վերջի հատված), որոնք ներկայումս ինքնահոս եղանակով ոռոգվում են Վեդի գետից սնվող «Թալասավան» ջրանքով, ինչպես նաև «Գոռավանի» պ/կ-ով (մեխանիկական ոռոգում): Նշված հողատարածքներն ընտրվել են հաշվի առնելով գերնորմատիվային ջրապահանջարկը, ինչպես նաև այն, որ գտնվում են ջրանցքի վերջնամասում և ոռոգվում են մեխանիկական եղանակով:

«Գոռավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 1 լոտ 2 նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել Ոռոգման համակարգի Գոռավան ճյուղի ՆԿ73+54-ում կառուցված N12 Ջրթողի (N8 ՖԿ) իշխման տակ գտնվող Գոռավան համայնքի 130 հա (հիմնական հեռացնող խողովակաշարի վերջնամասում) հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի (ճնշումային) կառուցումը, որպես փորձնական տարածք:

Ոռոգման համակարգի Գոռավանի ճյուղի ՆԿ73+54-ում կառուցված N12 Ջրթողով ջրամբարից ոռոգում է իրականացվելու Գոռավան համայնքի 212.08 հա (այդ թվում տնամերձ 55 հա) հողատարածքներին, որոնք ներկայումս ինքնահոս եղանակով ոռոգվում են Վեդի գետից սկիզբ առնող «Կզլ Առու» (վերջնամաս) և «Գյուղի տակի առու» (վերջնամաս) ջրանցքներով, ինչպես նաև «Գոռավան» պ/կ-ով (մեխանիկական եղանակ): Նշված հողատարածքներն ընտրվել են հաշվի առնելով գերնորմատիվային ջրապահանջարկը, ինչպես նաև այն որ գտնվում են ջրանցքի վերջնամասում և ոռոգվում են մեխանիկական եղանակով:

Փորձնական տարածքները հեռացնող խողովակաշարի վերջում ընտրելու համար հիմքն են հանդիսացել նաև հեռացնող խողովակաշարի ամբողջական կառուցման անհարժեշտությունը՝ հետագայում հիմնական կառուցված խողովակաշարից բաժանարար ճյուղեր կառուցելու նպատակով:

ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի համար

➤ **«Արարատ ճյուղի Արարատ համայնքի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 5 լոտ 2** նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել ոռոգման համակարգի Արարատի ճյուղի ՆԿ156+32-ում կառուցված Ջրթողի (նախագծային N1 Ֆիլտրացիոն կայան) իշխման տակ գտնվող ամբողջ 97հա հողատարածքների («Չախ ճյուղ» պ/կ իշխման տակ/ճանապարհի վերնի հատվածը) հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի (ճնշումային) կառուցումը, որպես փորձնական տարածք:

Նշված հատվածն ընտրվել է հաշվի առնելով, որ այն գտնվում է «Չախ ճյուղ» պ/կ-ի մղման խողովակաշարի վերջում, որտեղ շահագործումն ու պահպանումը դժվար է և ծախսատար:-

➤ **«Արարատ ճյուղի Արարատ համայնքի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 5 լոտ 2** նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել ոռոգման համակարգի Արարատի ճյուղի ՆԿ156+32-ում կառուցված Ջրթողի (նախագծային N2 Ֆիլտրացիոն կայան) իշխման տակ գտնվող Արարատ համայնքի 109 հա (Արարատ հորիզոնական պ/ի իշխման տակ) հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի (ճնշումային) կառուցումը, որպես փորձնական տարածք:

Նշված հատվածն ընտրվել է հաշվի առնելով, որ հեռացնող խողովակաշարի կառուցմամբ «Արարատ հորիզոնական» պ/կ-ով ոռոգվող հողատարածքներն ամբողջությամբ կարող են անցնել

ինքնահոս ոռոգման եղանակի և պոմպակայանի հետագա շահագործումը հնարվոր կլինի դադարեցնել:

ՀՀ Արարատի մարզի Նոյակերտ համայնքի համար

➤ **«Արարատ ճյուղի Նոյակերտ համայնքի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 2 լուտ 1** նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել ոռոգման համակարգի Արարատի ճյուղի կառուցված Ջրթողի (նախագծային N1 Ֆիլտրացիոն կայանի) իշխման տակ գտնվող Նոյակերտ համայնքի 110 հա հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի (ճնշումային) կառուցումը, որպես փորձնական տարածք: Նախատեսել N1 ՖԿ-ի հիմնական հեռացնող խողովակաշարի կառուցումը մինչև վերջ, իսկ փորձնական տարածքներն ընտրել հեռացնող խողովակաշարի վերջնամասում, ինչպես նաև նախատեսել դոտացիա պ/կ-ների մղման խողովակաշարերի ջրթափ ավազաններին և/կամ հեռացնող ջրանցքերին:

Ընտրված հողատարածքները գտնվում են բաժանարար ցանցի հեռացնող խողովակաշարի վերջնամասում և ներկայումս ոռոգվում են մեխանիկական եղանակով: Վեղի ջրամբարի Ոռոգման համակարգից ինքնահոս ոռոգումը համայնքի տարածում ապահովելու նպատակով անհրաժեշտ է հեռացնող խողովակաշարն ամբողջությամբ կառուցել մինչև փորձնական տարածքներ:

Փորձնական տարածքները հեռացնող խողովակաշարի վերջում ընտրելու համար հիմքն են հանդիսացել նաև հեռացնող խողովակաշարի ամբողջական կառուցման անհարժեշտությունը՝ հետագայում հիմնական կառուցված խողովակաշարից բաժանարար ճյուղեր կառուցելու նպատակով:

ՀՀ Արարատի մարզի Այգավան համայնքի համար

➤ **«Արարատ ճյուղի Այգավան համայնքի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 2 լուտ 2** նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել ոռոգման համակարգի Արարատի ճյուղի վրա կառուցված Ջրթողի (նախագծային N1 Ֆիլտրացիոն կայանի) իշխման տակ գտնվող Այգավան համայնքի 25.4 հա հողատարածքների ներտնտեսային ցանցի (ճնշումային) կառուցումը, որպես փորձնական տարածք: Նախատեսել N1 ՖԿ-ից հիմնական հեռացնող խողովակաշարը կառուցել մինչև վերջ, իսկ փորձնական տարածքներն ընտրել հեռացնող խողովակաշարի վերջնամասում:

Փորձնական տարածքները հեռացնող խողովակաշարի վերջում ընտրելու համար հիմք են հանդիսացել նաև հեռացնող խողովակաշարի ամբողջական կառուցման անհարժեշտությունը՝ հետագայում հիմնական կառուցված խողովակաշարից բաժանարար ճյուղեր կառուցելու նպատակով:

ՀՀ Արարատի մարզի Ավշար համայնքի համար

➤ **«Արարատ ճյուղի Ավշար համայնքի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 5 լուտ 1** նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել ոռոգման համակարգի Արարատի ճյուղի ՆԿ122+10-ում կառուցված Ջրթողի N2ՖԿ իշխման տակ գտնվող Ավշար համայնքի հողատարածքներից 51.8հա և կառուցել ճնշումային ներտնտեսային ոռոգման ցանցն ամբողջությամբ, որպես փորձնական տարածք նոր տեխնոլոգիաների (կաթիլային ոռոգում և անձրևացում) կիրառման նպատակով: Նախատեսել ֆիլտրացիոն կայանից հիմնական հեռացնող խողովակաշարի կառուցումը մինչև վերջ, իսկ փորձնական տարածքներն ընտրել հեռացնող խողովակաշարի վերջնամասում:

Փորձնական տարածքները հեռացնող խողովակաշարի վերջում ընտրելու համար հիմքն են հանդիսացել նաև հեռացնող խողովակաշարի ամբողջական կառուցման անհարժեշտությունը՝ հետագայում կառուցված խողովակաշարից ջրառ իրականացնելու համար բաժանարար ճյուղեր կառուցելու նպատակով:

➤ **«Արարատ ճյուղի Ավշար համայնքի ոռոգման ցանցի կառուցում» Փաթեթ 5 լուտ 1** նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակմամբ նախատեսել ոռոգման համակարգի Արարատի ճյուղի ՆԿ129+93-ում կառուցված Ջրթողի N3 ՖԿ իշխման տակ գտնվող Ավշար համայնքի հողատարածքներից 77.0 հա և կառուցել ճնշումային ներտնտեսային ոռոգման ցանցն ամբողջությամբ, որպես փորձնական տարածք նոր տեխնոլոգիաների (կաթիլային ոռոգում և անձրևացում) կիրառման նպատակով: Նախատեսել ֆիլտրացիոն կայանից հիմնական հեռացնող խողովակաշարի կառուցումը մինչև վերջ, իսկ փորձնական տարածքներն ընտրել հեռացնող խողովակաշարի վերջնամասում:

Փորձնական տարածքները հեռացնող խողովակաշարի վերջում ընտրելու համար հիմքն են հանդիսացել նաև հեռացնող խողովակաշարի ամբողջական կառուցման անհարժեշտությունը՝

հետագայում հիմնական կառուցված խողովակաշարից բաժանարար ճյուղեր կառուցելու նպատակով:

Ներքո Աղյուսակ 1-1 ում ամփոփված են նախնական ընտրված տարածքները:

Ընդհանուր: Բոլոր կառավարման հանգույցների էլեկտրամագնիսական կափույրները պետք է ղեկավարվեն մեկ կետից՝ կառավարման կենտրոնից (նախատեսվում է 2 կառավարման կենտրոն՝ համապատասխանաբար Վեդի և Արարատ տարածաշրջաններում):

Աղյուսակ 1-1 Նախագծման նախնական տարածքները

Վեդի ջրավարի և Վեդի գետի իջնամասում գունդի ճեղքումային ոռոգման և երևույթային ցանց							
Համաձայն մշակված Նախագծա-Նախահաշվային փաստաթղթերի						Փորձական տարածքների ընտրություն	
հհ	ՋՕԸ	Հանայք	Ընդհանուր (հա)	այդ թվում սեփականաշնորհված (հա)	այդ թվում տևալեր (հա)	սեփականաշնորհված (հա)	Նախագծային սույակներ
1	"Արտաշատ" ՋՕԸ Վեդի ստեղծման	Դաշտաքար	402.84	374	29	35.5	Փայթեթ 4 Լոտ 1 "Սիսավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՆԿ 22+00, N15 Ձրթողից/ՖԿN3:
						35.2	Փայթեթ 4 Լոտ 1 "Սիսավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՆԿ 65+40 N18 Ձրթող:
						28.3	Փայթեթ 4 Լոտ 2 "Սիսավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՆԿ 26+23 N16 Ձրթող:
2		ք. Վեդի	674.73	415	260	70	Փայթեթ 4 Լոտ 2 "Սիսավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՆԿ 26+23 N16 Ձրթող:
						105	Փայթեթ 4 Լոտ 1 "Սիսավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՆԿ 47+87 N17 Ձրթող:
3		Գոռավան	701.09	586	115	73	Փայթեթ 1 Լոտ 1 "Գոռավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՆԿ 23+10, N7 Ձրթող:
						130	Փայթեթ 1 Լոտ 2 "Գոռավան ճյուղի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՆԿ 73+54, N12 Ձրթող:
4		Ուրցածոր	630.21	504	126	28	Փայթեթ 3 Լոտ 2 "Ուրցածոր ճյուղի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՆԿ 27+80, ՖԿ N5
						156	Փայթեթ 3 Լոտ 1 "Ուրցածոր ճյուղի ոռոգման ցանցի կառուցում"՝ Դատարկման հոր ՆԿ 62+23
Ընդամենը "Արտաշատ" ՋՕԸ		4	2408.87	1878.57	530	661.7	10.0
5	"Արարատ" ՋՕԸ	Նոյակերտ	285.4	285.4	0	110	Փայթեթ 2 Լոտ 1 "Արարատ ճյուղի Նոյակերտ համայնքի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՖԿ N1
6		Այգավան	92.3	92.3	0	25.4	Փայթեթ 2 Լոտ 2 "Արարատ ճյուղի Այգավան համայնքի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՖԿ N1
7		Ավշար	501.3	389.8	111.5	51.8	Փայթեթ 5 Լոտ 1 "Արարատ ճյուղի Ավշար համայնքի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՆԿ 122+10, ՖԿ N2
						77	Փայթեթ 5 Լոտ 2 "Արարատ ճյուղի Ավշար համայնքի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՆԿ 129+93, ՖԿ N3
8	Արարատ	733.5	733.5	0	97	Փայթեթ 5 Լոտ 2 "Արարատ ճյուղի Արարատ համայնքի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՆԿ 156+32, ՖԿ N1	
					109	Փայթեթ 5 Լոտ 2 "Արարատ ճյուղի Արարատ համայնքի ոռոգման ցանցի կառուցում"՝ ՆԿ 156+32, ՖԿ N2	
Ընդամենը "Արարատ" ՋՕԸ		4	1612.5	1501	111.5	470.2	
Ընդամենը		8	4,021.37	3379.57	641.8	1,131.85	

2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. ՈՌՈԳՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ և ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ոռոգման ջրի աղբյուրները հանդիսանում են հիմնական ջրանցքները՝ Հրազդանի-Արաքս կոլեկտորը, Արտաշատի ջրանցքը և Վեդի գետը: Առկա ոռոգման ցանցը կառուցված է տարբեր ժամանակահատվածներում, այդ պատճառով դրա շահագործումը բավականին բարդ է: Ոռոգման ջրի մի մասը մատակարարվում է հենց իրենց տարածքում գտնվող պոմպակայանների միջոցով, որոնք գտնվում են վատ վիճակում: Վեդու ջրամբարի կառուցման հիմնական նպատակներից էր՝ այդ կառույցների մի մասը շահագործումից հանելը:

Ինքնահոս եղանակով մատակարարվում է պահանջվող ելքի մեկ քառորդը, իսկ մնացածը՝ պոմպերի միջոցով: Պոմպերի միջոցով ջուրը մատակարարվում է խորքային հորերից կամ Արտաշատի ջրանցքից - 20%, Վեդի գետից և Հրազդան-Արաքսյան կոլեկտորից - 57%:

Տարածաշրջանում ոռոգման համար օգտագործվում են նաև խորքային հորեր, որպեսզի ջրամատակարարումը համապատասխանեցվի բերքի պահանջներին՝ այն դեպքում, երբ մակերևութային ջրերը հասանելի չեն կամ բավարար չեն առավելագույն ջրապահանջի ժամանակահատվածում:

Ներկայումս ոռոգումն իրականացվում է մակերեսային եղանակով՝ հիմնականում հողային առուների միջոցով: Վերջին 3-5 տարիների ընթացքում վերականգնվել են այդ հողատարածքներին «Հրազդան-Արաքսյան կոլեկտորից» ջրամատակարարող պոմպակայանների հեռացնող ջրանցքները՝ երկաթբենոնյա վաքերից:

2017թ-ին մեկնարկել է «Վեդի ջրամբարի կառուցում Արարատյան հարթավայրի ոռոգման համար» ծրագրով հեռացնող ինքնահոս խողովակաշարի շինարարությունը, որը բաղկացած է գլխավոր խողովակաշարից և չորս հիմնական ճյուղերից՝ D=1220-400մմ տրամագիծ ունեցող ստորգետնյա մետաղական և պոլիէթիլենային խողովակաշարերից: «Արարատի ճյուղ»-ը նախատեսված է «Արարատ» ՋՕԸ՝ Այգավան, Ավշար, Նոյակերտ և Արարատ շահառու համայնքներին Վեդի ջրամբարից ոռոգման ջրի մատակարարման համար, որտեղ արդեն կառուցված են 8 հատ ջրթող/ջրչափ («Յարց» տիպի) կառուցվածքներ: Մնացած 3 ճյուղերը՝ 19 հատ ջրթող/ջրչափ կառուցվածքները, որոնց կառուցումը ընթացքի մեջ է սպասարկելու են «Արտաշատ» ՋՕԸ-ն «Վեդի» տեղամասի 4 շահառու՝ Ուրցաձոր, Դաշտավան, Գոռավան և Վեդի համայնքներին:

2.2. ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԱՀԱՌՈՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ

Նախագծային աշխատանքների շրջանակներում հետազոտություններ և քննարկումներ են իրականացրել առանձին համայնքներում՝ պատասխանատուների մասնակցությամբ, ճշտելով ծառայությունների մատուցման պայմանագրի առաջադրանքի պայմաններով առաջարկված ոռոգվող հողատարածքները: Հետազոտությունները կատարվել են կադաստրային քարտեզների, համայնքների դեկավարների կողմից տրամադրված նյութերի օգտագործումով, որոնք համադրվել են իրականացված գեոդեզիական հանութագրման նյութերի և տեղում ակնադիտական ուսումնասիրությունների հետ:

Հետազոտությունների արդյունքում հստակեցվել է՝

- հետագա կառուցման կամ վերականգնման աշխատանքներում ներառվող տարածքների կարգավիճակը, տարածքների սեփականության ձևերը, տարածքների ընթացիկ կիրառության մանրամասները և այլն,
- հստակեցվել են վերջնական փորձնական տարածքները,
- շրջակա բնական միջավայրի կամ մշակվող լանդշաֆտների կազմը և բնութագիրը՝ բնապահպանական տեսանկյունից,
- շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ տարածքների Հարկադիր/ Ոչ կամավոր վերաբնակեցման վերաբերյալ՝ համաձայն ՀԲ-ի 4.12 գործառնական քաղաքականության (ԳՔ),
- առկա ոռոգման ցանցերի փաստացի վիճակի և դրանց հետագա օգտագործման հնարավորությունը:

2.3. ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Համաձայն ԱՊ-ի հանձնարարականի, ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցման/արդիականացման նախագիծն իրականացվել է ոռոգման փակ տարբերակով, որը հնարավորություն կտա հետագայում կաթիլային (օր. այգիների համար) կամ անձրևացման (օր. առվույտի համար) ոռոգման տեսակներն իրականացնելու համար:

Ծրագրի իրականացման համար դիտարկվել են ԱՊ-ով գերակայություն տրված ոռոգման տարբերակներին ապահովելով հետագայում կառուցման համար անհրաժեշտ չափորոշիչները, ըստ նորմատիվների անհրաժեշտ կառույցները և ջրաչափությունը, ինչպես նաև գոյություն ունեցող հողատարածքներին անմիջապես ջրատվության հնարավորությունը:

Ոռոգման ներտնտեսային ցանցերի նախագծման ժամանակ հիմք են հանդիսանալու ոռոգման եղանակները, որոնք դասակարգվում են և գնահատվում հետևյալ կերպ.

❖ Ավանդական մակերեսային ոռոգում

1. սկզբնական ցածր ներդրումներ,
2. ցածր բերքատվություն,
3. շահագործման բարձր ծախսեր,
4. Պարարտացման առանձին իրականացում,
5. բարդ ռելիեֆի պայմաններում դժվար իրականացնելի:

❖ Անձրևացում

1. սկզբնական բարձր ներդրումներ,
2. ճանապարհային կորուստների նվազեցում,
3. շահագործման զգալի ծախսեր,
4. լրացուցիչ պայքար հիվանդությունների դեմ,
5. ռելիեֆի գործոնի ազդեցության նվազեցում,
6. բարձր բերքատվություն,
7. պարարտացում համակարգի միջոցով:

❖ Ենթահողային ոռոգում

1. սկզբնական բարձր ներդրումներ,
2. ջրի հսկայական խնայողություն,
3. բարձր բերքատվություն,
4. ռելիեֆի գործոնի ազդեցության բացակայություն,
5. պարարտացում համակարգի միջոցով:

❖ Կաթիլային ոռոգում

1. սկզբնական զգալի ներդրումներ,
2. ջրի հսկայական խնայողություն,
3. բարձր բերքատվություն,
4. ռելիեֆի գործոնի ազդեցության բացակայություն,
5. պարարտացում համակարգի միջոցով:

Դաշտում ջրօգտագործման արդյունավետությունը հիմանականում կախված է կիրառվող ջրման եղանակից, ջրվորի փորձառությունից և ճշգրիտ ոռոգման պլանավորումից (Աղյուսակ 2-1):

Աղյուսակ 2-1 Ջրօգտագործման արդյունավետությունը

Ջրման եղանակը	Արդյունավետությունը (%)
Մակերեսային	50
Անձրևացում	80
Կաթիլային	95

2.3.1. Մակերեսային ջրման եղանակները

Մանրամասն նախագծման նախնական փուլում ելնելով կոնկրետ իրավիճակներից, ինչպես նաև այն հանգամանքից, որ մինչև հողօգտագործողների կողմից ամբողջական ոռոգման արդիական մեթոդների ներդրումը, որոշ ժամանակահատվածում ոռոգումները շարունակվելու են իրականացվել ավանդական մեթոդներով, ոռոգման ջրապահանջի հաշվարկման ընթացքում հաշվի է առնվել նաև մակերեսային ոռոգման պահանջները:

Հիմնականում լայն տարածում են ստացել ակոսներով, մարգերով և բնաթասերով ջրման տեխնիկաները: Մակերեսային ջրման եղանակը պարզ է, ունի լայն տարածում և ամենաեժան է: Մակերեսային ջրման եղանակով կարելի է ոռոգել բոլոր տեսակի մշակաբույսերը:

Նախագծման ենթակա հողատարածքներում որոշակի մաս են կազմում հացահատիկային մշակաբույսերով և խոտաբույսերով զբաղեցված մակերեսները, որոնք ենթակա չեն կաթիլային ոռոգման, ինչպես նաև կիրառելի չէ անձրևացմամբ ջրումը՝ հողատարածքների խիստ մասնատվածության հետևանքով: Ոռոգման փակ համակարգի պայմաններում նշված տարածքների ոռոգման համար նպատակահարմար է կիրառել մակերեսային ջրման եղանակը օգտագործելով դաշտում ջրի բաշխման ու կարգավորման ժամանակակից պարզագույն միջոցները, ինչպիսիք են՝ փականներով խողովակաշարերը, ճկափողերը, հիդրանտները և այլն:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ մնացյալ մշակաբույսերը ևս մինչև կաթիլային ջրման եղանակի անցնելը ջրվելու են մակերեսային եղանակով:

2.3.2. Կաթիլային ջրման եղանակները

Կաթիլային ոռոգման բնորոշ հատկությունն է դանդաղ և փոքր ջրաքանակներով հողի տեղայնացված խոնավացումը բույսի արմատաբնակ շերտին մոտ անցնող պոլիէթիլենային խողովակների վրա որոշակի հեռավորություններով տեղադրված փոքր արտադրողականությամբ ջրթողների՝ կաթոցիկների միջոցով: Ջուրը հողի մեջ ներծծվելով տարածվում է ջրով չհագեցած միջավայրում, որը արմատաբնակ շերտում ստեղծում է մշակաբույսի համար նախընտրելի ջրային, օդային և սննդային լավագույն ռեժիմ:

Ոռոգման այս եղանակը խիստ տարբերվում է մակերեսային և անձրևացման եղանակներից: Պարբերաբար մեծաքանակ ջրման նորմաների փոխարեն հնարավորություն է ստեղծվում հաճախակի իրականացնել քիչ քանակություններով և սննդարար նյութերով ջրամատակարարում՝ անմինջապես բույսի արմատային համակարգին: Կաթիլային ոռոգման դեպքում հողից դուրս չի մղվում օդը, ապահովելով լավագույն աէրացիոն պայմանները, որն ի տարբերություն մակերեսային ոռոգման եղանակի, հնարավորություն է տալիս բույսերին նորմալ “շնչել” առանց դադարի՝ անգամ ջրման ընթացքում: Միաժամանակ, մեկ այլ ոռոգման եղանակից կաթիլային ոռոգման եղանակի անցման դեպքում արմատային համակարգի ադապտացիան տեղի է ունենում շատ արագ և առանց որևէ բարդությունների: Կաթիլային ոռոգման եղանակը համարվում է առավել արդյունավետ մեխանիզմ՝ հողում անհրաժեշտ սննդարար նյութերի ապահովման և պահպանման գործում: Սննդարար նյութերի մատուցումը ջրի հետ անմիջապես բույսերի արմատային համակարգի գոտում ստեղծում և պահպանում է բարենպաստ պայմաններ: Սննդարար նյութերի արագ և էֆեկտիվ յուրացումը տեղի է ունենում հողում պահպանվող օպտիմալ խոնավության, բարենպաստ աէրացիոն պայմանների և խիտ զարգացած արմատային համակարգի հաշվին: Նշված գործոնների շնորհիվ կաթիլային ոռոգման եղանակի առավելություններն արտահայտվում են բերքատվության և բերքի որակի բարձրացմամբ, ոռոգման ջրի տնտեսմամբ, բարդ ռելիեֆային և մեծ թեքություններով տարածքների օգտագործմամբ և մի շարք այլ գործոններով: Այսպիսով՝ կաթիլային ոռոգման եղանակը հնարավորություն է ստեղծում իրականացնել բույսերի ջրամատակարարումը լավագույն պայմաններով, անհրաժեշտության դեպքում՝ հագեցած սննդարար նյութերով: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ճիշտ կառուցված կաթիլային ոռոգման համակարգը անհամեմատ թեթևացնում է նաև ջրվորի աշխատանքը, ինչը նպաստում է հիմնականում համակարգի աշխատանքի օպերատիվ կառավարմանը:

Առավելություններ.

Կաթիլային ոռոգման եղանակի կիրառումն առավել արդյունավետ է այլ եղանակների համեմատությամբ.

- բույսերի միջև ջուրը բաշխվում է հավասարաչափ,
- բույսի արմատաբնակ շերտում ստղծվում են աէրացիոն լավագույն պայմաններ,
- սննդարար նյութերը (պարարտանյութերը) տրվում են ջրի հետ՝ լուծված վիճակում, անհրաժեշտ օպտիմալ քանակով,
- մուլախոտերի դեմ պայքարի անհրաժեշտությունը նվազում է,
- ոռոգման նորման կրճատվում է 2-ից 3 անգամ, նվազում են ջրի ֆիլտրացիոն և գոլորշիացման կորուստները (3 և ավելի անգամ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող տարածքներում),
- հնարավոր է ոռոգել մեծ թեքությամբ, բարդ ռելիեֆով լանջեր,
- ստեղծվում է ջրման գործընթացի ավտոմատացման հնարավորություն,

- հողի մակերեսը չի խտանում, չի կեղևակալում՝ առավել նպաստելով աերացիային,
- բացակայում է իրիգացիոն էռոզիայի վտանգը,
- չի նպաստում գրունտային ջրերի մակարդակի բարձրացմանը, հետևաբար՝ հողերի աղակալմանը:

Կաթիլային ոռոգման եղանակն առավել արդյունավետ է խաղողի, պտղատու այգիների, ինչպես նաև բոլոր շարահերկ մշակաբույսերի ոռոգման համար՝ միաժամանակ հնարավորություն տալով իրականացնել արդյունավետ ոռոգում բոլոր տեսակի հողերում, ներառյալ բարձր ջրաթափանցելիություն ունեցող հողերի պայմաններում:

Հիմնական ցուցանիշներ.

- Ջուրը տնտեսվում է 30-70%-ով
- Մշակաբույսերի բերքատվությունը ավելանում է 20-50%-ով
- Ջրվորի աշխատանքի արտադրողականությունը բարձրանում է 90%-ով

Տեխնիկական հնարավորություններ.

Առկա են բազմաթիվ տեխնիկական լուծումներ ցանկացած հնարավոր իրավիճակի համար.

- Կաթիլային գծերը կարող են տեղադրվել վերգետնյա և ստորգետնյա
- Ներդրված կաթոցիկները կահավորված են ճնշման կարգավորման, հակասիֆոնային, հակադրենաժային և ինքնամաքրվող համակարգերով.
- Տարբեր տիպի հողերի համար (ծանր կավայինից մինչև ավազային) նախատեսված են տարբեր արտադրողականության կաթոցիկներ.
- Առկա են տարբեր տիպերի ֆիլտրեր՝ բոլոր հնարավոր տեսակի պղտորության ջրերի մաքրման համար.
- Գոյություն ունեն միանգամյա և բազմատարյա օգտագործման կաթիլային խողովակներ.
- Փոքր հողամասերի համար (մինչև 1.0 հա) մշակված են ցածր ճնշումով (1.0մ-ից սկսած) աշխատող համակարգեր:

Հետևություններ (ակնկալվող արդյունքներ)

- Ջրօգտագործողի (ֆերմերի) ֆինանսատնտեսական և սոցիալական վիճակի բարելավում, վճարունակության բարձրացում,
- գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող տարածքների խնդրի մեղմացում՝ ընդհուպ մինչև բացառում,
- ոռոգման համակարգի արդիականացման խթանում, ոռոգման շրջանում լարվածության նվազում, հաշվառման և կառավարման արդյունավետության բարձրացում,
- հանրապետության ջրային, էներգետիկ և հողային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում,
- պոտենցիալ ոռոգելի, սակայն փաստացի չմշակվող տարածքների մշակման խթանում,
- ընդհանուր բերքի քանակական և որակական աճի ապահովում:

Կաթիլային ոռոգման եղանակով նախընտրելի է ջրել պտղատու և խաղողի այգիները, բարձրարժեք բանջարանոցային մշակաբույսերը:

2.3.3. Անձրևացմամբ ջրման եղանակները

Անձրևացմամբ ջրման եղանակի դեպքում անձրևացման կցափողերի կամ ապարատների միջոցով ջրի շիթը նետվում է օդի մեջ, վերածվում է կաթիլների և անձրևի տեսքով ընկնում է հողի և բույսերի վրա:

Անձրևացումով կարելի է ջրել հացահատիկային, կերային և որոշ պայմաններում բանջար-բոստանային մշակաբույսերը:

Անձրևացումով ջրումը կիրառելի է այն տարածքներում, որտեղ տեղանքի թեքությունները փոքր են, բացակայում են հաճախակի քամիները և հողակտորի չափերն ու երկրաչափական ձևերը են տալիս:

Հաշվի առնելով տեղագրական պայմանները, առաջարկվում է կիրառել շարժական հենարանների (եռոտանի) վրա տեղադրված կամ միջինաշիթ անձրևացման ապարատներով ոչ ստացիոնար անձրևացման համակարգ:

Ոռոգման համակարգի արդյունավետ լինելու պայմաններից՝ կախված ջրման մեթոդներից, պահանջվող ոռոգման տակտերից, անհրաժեշտ է ամբողջ հողատարածքում կազմակերպել ոչ միաժամանակյա ոռոգում:

Կաթիլային կամ անձրևացման ոռոգման համակարգի ստեղծումը պահանջում է սկզբնական կապիտալ ներդրումներ, չնայած որ այս եղանակը կարող է ապահովել մեծ եկամտաբերություն և կարճ ժամանակահատվածում ներդրումների հետքերում:

Այս ծրագրով կապիտալ ներդրումները բաժանվելու են երկու մասի՝

ա/ ֆերմերների կողմից ներդրումների մաս, այսինքն՝ կաթիլային/անձրևացման ցանցի կառուցում, բ/ ներդրումներ, որոնք իրականացվելու են այս ծրագրով, որի արդյունքում կկառուցվի ամբողջական փակ ճնշումային խողովակաշարերով ներտնտեսային ցանց ու արդյունքում ջուրը կհասնի բոլոր ֆերմերների հողակտորներին:

Փակ համակարգերի կիրառումը հնարավորություն կստեղծի նաև ավտոմատ հեռակառավարման և ջրաչափական արդիական համակարգերի ներդրման գործընթացի իրականացման համար:

2.4. ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՆԱԽԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԴԻՏԱՐԿՎՈՂ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Նախնական նախագծում հաշվի է առվել Վեդի ջրամբարի և ոռոգման ինքնահոս համակարգի, ինչպես նաև ներտնտեսային ցանցերի ջրի ավտոմատ կառավարումն ապահովելու ծրագրի պահանջը, որն իրականացվելու է կառավարման կենտրոնական գրասենյակից՝ կամ առանձին համայնքներում հատուկ առանձնացված գրասենյակային տարածքներում: Գրասենյակի վայրը ընտրված է այն պայմանից, որպեսզի հնարավոր լինի ապահովել բավարար ռադիոկապ ծրագրով նախատեսված բոլոր համայնքներում վերակառուցվող ոռոգման ներտնտեսային ցանցերում ջրաչափման-ջրատրման հանգույցների մետաղական արկղերում տեղադրված բոլոր էլեկտրամագնիսական փականների կառավարման համար: Այդ աշխատանքները կիրականացնի ՋՕԸ-ի օպերատորը՝ համակարգի ոռոգման կառավարման ծրագրի միջոցով: ՋՕԸ-ի կողմից կազմվելու են ջրման ժամանակացույցեր և տեղեկացվելու են ջրօգտագործողներին/ֆերմերներին: Այդ ժամանակացույցերում տրվելու են օրերը, ժամանակահատվածները և ֆերմերի հողակտորի գլխամասում ոռոգման ջրի հստակ մատակարարումը:

Ջրի բաշխումը կատարվելու է բոլոր ջրթողներից, համաձայն հաշվարկային ծախսերի: Ոռոգումն իրականացվելու է տակտերով/բլոկներով, որի դեպքում տվյալ ոռոգման բլոկին տրվելու է ջրի հաշվարկային ծախսը:

Այդ կենտրոնական գրասենյակից կառավարվելու են նաև.

- առաջին կարգի բաժանարարների սկզբնամասերում տեղադրված բոլոր ֆիլտրացիոն կայանները: Հնարավոր կլինի ստանալ ինֆորմացիա բոլոր ֆիլտրացիոն կայաններում հեռացնող ջրատարների սկզբնամասերում տեղադրված էլեկտրամագնիսական հոսքաչափերից,
- «Կառավարման հանգույցներում» տեղադրված սարքավորումները (էլեկտրամագնիսական փականներ ճնշման կարգավորիչով և իմպուլսային ջրաչափեր) հնարավորություն են տալիս իրականացնել ամեն մի ջրօգտագործողի համար առանձին ջրի բաշխումը և կառավարումը, ինչպես նաև ջրաչափությունը՝ ջրաչափերից տվյալների ստացման միջոցով:

Ջրատարների ծրագծերի համար դիտարկել է տարածքներում դաշտամիջյան ճանապարհների առկայությունը, որտեղով հնարավոր կլինի ոռոգման ջուրը փակ ցանցով հասցնել յուրաքանչյուր հողակտորի, հետագայում հողատարածքներում կաթիլային և անձրևացման ոռոգման նոր տեխնոլոգիաներ, ավտոմատ կառավարում ապահովելու համար:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ ոռոգման փակ ցանցի բաժանարարները և ճյուղերի դասավորությունը ընտրվել է ամենաարդյունավետ տարբերակով գրեթե վերջնական:

Հատակագծերը համաձայնեցված են նաև համայնքների ղեկավարների հետ քննարկումներով:

Քանի որ նախագծվող ներտնտեսային ոռոգման ցանցերի կառուցումից հետո հող օգտագործող տնտեսությունները հնարավոր է, որ անմիջապես չկարողանան նոր տեխնոլոգիաներով ոռոգման ներքին ցանցեր ներդնել, ապա անցումն իրականացվելու է փուլ առ փուլ և մինչ այդ ֆերմերները ոռոգումը կշարունակեն իրականացնել մակերեսային եղանակով, հետևաբար ոռոգման ցանցը նախագծելիս հաշվի է առնվել վերը նշվածները և մակերեսային ոռոգման ընթացքում անհրաժեշտ ջրի քանակության ապահովումը ներտնտեսային փակ ցանցով:

Ոռոգման փակ համակարգերի կիրառումը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր հողօգտագործողի և ընդհանուր համայնքի /հետագայում նաև ՋՕԸ-ի/ ավտոմատ կառավարման համար նախագծել հեռակառավարման և ջրաչափական արդիական համակարգեր:

Նորագույն ոռոգման տեխնոլոգիաներից կաթիլային ոռոգումն ամենազգայունն է և նրա համար անհրաժեշտ կլինի ապահովել ավտոմատացված ճնշումային համակարգ ու մաքուր ջուր: Քանի որ կառուցված ինքնահոս համակարգն ապահովված է համապատասխան աշխատանքային ճնշումներով, ապա ապագայի կաթիլային ոռոգման ցանցի համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև հետևյալ պայմանները.

1. ցանցին տրվող ջուրը պետք է լինի մաքուր, որպեսզի չխցանվեն կաթոցիկները և անձրևացման ապարատները, դրա համար պետք է տեղադրվեն ջրի ֆիլտրման կայաններ,
2. ջուրը խողովակաշարերով և անհրաժեշտ ճնշման առկայությամբ պետք է հասցնել յուրաքանչյուր հողամասին և ապահովել կաթիլային կամ անձրևացման նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ոռոգման կազմակերպման հնարավորություն,
3. խողովակաշարերով ջրի փոխադրման արդյունավետությունը բարձրացնելու համար ամեն մի հողակտորի ջրաչափությունը և ջրի կարգավորումը ավտոմատացնել կառավարման համակարգով:

Նորագույն ոռոգման տեխնոլոգիաների (կաթիլային և անձրևացման եղանակով ոռոգում) կիրառումն առանց ջրի մաքրման գործնականում անհնար է:

Օառայությունների մատուցման ժամանակ դիտարկել և Պատվիրատուի մասնագետների, ինչպես նաև մաքրման կայանների նախագծման և շահագործման մեծ միջազգային փորձ ունեցող ընկերության մասնագետների հետ քննարկել է ջրի մաքրման կազմակերպման երեք տարբերակ.

Դիտարկված տարբերակ 1 - Ջրի մաքրման կայանի նախագծում Վեդի ջրամաբարի հեռացնող ինքնահոս խողովակաշարի գլխամասային հատվածում՝ նպատակ ունենալով կենտրոնացնել ջրի մաքրման շահագործման աշխատանքները:

Միջազգային փորձ ունեցող ընկերության մասնագետները այս տարբերակին մոտենում են վերապահումով, չնայած որ այս տարբերակը կենտրոնացնում է ջրի մաքրման աշխատանքները մեկ տեղում և շահագործումն իրականացվելու է կենտրոնացված, սակայն հաշվի առնելով մեկ մեծ ֆիլտրոկայանի հնարավոր խափանումը կամ աշխատանքների ձախողումը, ռիսկային է դառնում ամբողջ տարածքի ոռոգման ջրամատակարարումը: Դաշտերում կորուստների վնասը և վերականգնման համար մեծ ծախսեր կպահանջվեն, ինչպես նաև ջուրը հետագայում տեղափոխվելու է 1200-ից 600մ մետաղական խողովակի միջոցով, որը կաթիլային և անձրևացման տեխնոլոգիաներով ոռոգման համակարգերի համար ընդունելի չէ:

Դիտարկված տարբերակ 2 - Ջրի մաքրման կայանի նախագծում հեռացնող ինքնահոս խողովակաշարի առանձին 4 ճյուղերի սկզբնամասերում:

Այս տարբերակը նույնպես միանշանակ չընդունվեց, քանի որ ինքնահոս համակարգի համար ինչպես 1-ին այնպես էլ 2-րդ տարբերակների դեպքում ջուրը հետագայում տեղափոխվելու է 1200-ից 600մ մետաղական խողովակի միջոցով, որը կաթիլային և անձրևացման տեխնոլոգիաներով ոռոգման համակարգերի համար ընդունելի չէ: Սակայն նախագծող Խորհրդատուն Ուրցաձոր ճյուղի իշխման տակ ընկնող տարածքի ներտնտեսային ցանցի նախագծման ընթացքում նախընտրել է այս տարբերակը, հաշվի առնելով կառուցված ճյուղի պոլիէթիլենային խողովակի և ՆԿ0+00-ում փականային կառավարման շինության առկայությունը, ինչպես նաև այն հանգամանք, որ ճյուղի արտադրողականությունը չի գերազանցում այլ համայնքներում որոշ առանձնացված գոտիների հիմնական բաժանարարների արտադրողականությունից:

Դիտարկված տարբերակ 3 - Ջրի մաքրման հանգույցների նախագծում հեռացնող ինքնահոս ճնշումային խողովակաշարի առանձին ճյուղերի ջրթող հանգույցներում:

Այս տարբերակն ավելի արդյունավետ կերպով կկարողանա հեռակառավարվել:

Ընկերությունը համապատասխան արտադրողականությունների համար հաշվարկել և տրամադրել է համայնքի կայանների տիպարային սխեմաները, տարածքի չափերը և դրանց հնարավոր արժեքները, որոնք հաշվի են առնվել ծախսերի հաշվարկման նախահաշիվներում:

2.4.1. Ուրցածոր համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի հատուկ պայմաններ

Ծրագրի բոլոր շահառու համայնքների ոռոգելի հողատարածքների համար ոռոգման ջրաղբյուր է հանդիսանալու կառուցվող Վեդի ջրամբարի հեռացնող ինքնահոս խողովակաշարը, իսկ Վեդի գետի վերին հովիտներում՝ Ուրցածոր համայնքի 488հա հողատարածքները ոռոգվելու են Վեդի ջրամբարի մոտեցնող ինքնահոս խողովակաշարից:

Համաձայն ԱՊ-ի, փոխադրող համակարգի (ՆԿ 19+20, ՆԿ41+37 և ՆԿ55+20) դատակման հորերի և գլխավոր գծի ՆԿ 14+20-ում կառուցված ջրթողի համար, որոնք ներառված չեն փորձնական տարածքներում, սակայն մաս են կազմում ընդհանուր ներտնտեսային ցանցի նախագծում, նախատեսվել է ջրաչափական հանգույցներ՝ «Ջրառ» ՓԲԸ-ի շահագործման և ջրաչափության նպատակով:

ՄԽ-ի նախատեսված դատարկման հորերից ջրատվությունը իրականացվել է չխոչընդոտելով դատարկման հորերի անխափան աշխատանքը, ինչպես նաև սիֆոնային հատվածների անհրաժեշտ լվացման գործընթացները:

2.5. ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

2.5.1. Ոռոգման ներտնտեսային ցանցերի էլեմենտները

Ներտնտեսային ոռոգման համակարգի էլեմենտները սկսվում են Վեդի ջրամբարի ինքնահոս հեռացնող խողովակաշարից սկիզբ առնող 28 հատ ջրթողներից և Ուրցածոր համայնքի համար վերը նշվածով՝ ջրամբարի մոտեցնող խողովակաշարի 4 դատարկման հորերից: Համապատասխան ԱՊ-ի լրամշակվում է Վեդի ջրամբարի ինքնահոս հեռացնող խողովակաշարից սկիզբ առնող 13 հատ բաժանարարների և Ուրցածոր համայնքի համար ջրամբարի մոտեցնող խողովակաշարի 1 դատարկման հորից սնուցվող ցանցի համար: Քանի որ կառուցված ինքնահոս համակարգը ապահովված է համապատասխան աշխատանքային ճնշումներով, ապա հետագայում կաթիլային ոռոգման ցանցի համար հնարավորություն կստեղծվի ունենալ հետևյալ տարրերը

- Ջրի մաքրման համար Ֆիլտրացման համակարգ,
- Ճնշման կարգավորման հանգույց,
- Ոռոգման ներտնտեսային ցանցի բաժանարար ջրատարների ճյուղերից,
- Ներտնտեսային ոռոգման բաժանարար ցանցից ջրաչափման/ջրթող ավտոմատ կառավարման հանգույցներ, որը հետագայում հեշտությամբ կմիացվի նոր տեխնոլոգիաներով ցանցերին,
- այլ օժանդակ կառուցվածքներ/պարագաներ, որոնք կհանդիսանան ներտնտեսային փակ ցանցի շահագործման կարևորագույն հանգույցները:

2.5.2. Ջրի մաքրում/ֆիլտրացիա և ֆիլտրացիոն կայաններ

Զմաքրված ջուրը կարճ ժամանակահատվածում շաքից դուրս կրերի ոռոգման համակարգը, և մենք կկորցնենք մեր կապիտալ ներդրումը: Այսպիսով, կախված ջրի աղտոտվածությունից և տեղադրվող համակարգի տեսակից (կաթիլային, անձրևացման եղանակ կամ ենթահողային ոռոգում) ընտրվում են ֆիլտրերի տեսակները և տեղադրման հերթականությունը: Շատ աղտոտված ջրերում կաթիլային համակարգի տեղադրման համար անհրաժեշտ է ապահովել ջրի մաքրման մի քանի փուլ՝ սկզբում տղմազատարան, ցանցեր, ավազային ֆիլտեր, սկավառակային ֆիլտեր և այլն:

Ջրի մաքրման ֆիլտրացիոն կայանը համակարգի կարևորագույն օղակներից է: Կախված ջրի պղտորության աստիճանից, ոռոգման մակերեսների չափերից և ջրման աղբյուրի տեսակից, նախագծում ընտրված են ցանցային ֆիլտրեր և հիդրոցիկլոններ:

Ավտոմատ ինքնամաքրվող ցանցային ֆիլտրը մաքրվում է ինքնուրույն՝ հատուկ վաակում գլխիկների միջոցով: Սա ջրի զտման ավտոմատ համակարգ է, որն ապահովում է ֆիլտրի հետադարձ լվացման 100%-անոց հնարավորություն, նվազեցնում է սպառող էներգիայի կորուստները և երաշխավորում է ոռոգման պատշաճ իրականացումը: Այն կարող է օգտագործվել ջրի բոլոր տեսակի աղբյուրներում:

Ընտրված ցանցային ֆիլտրերը ունեն ավտոմատ լվացման հնարավորություն, որը մուտքամասի և ելքամասի ելքերի ճնշումների տարբերության մեծացման արդյունքում մեխանիկորեն կատարում է լվացում՝ ջրի հոսքը ֆիլտրում հակառակ ուղղությամբ ուղղելով և կեղտոտ ջուրը լվացման ջրթողով հեռացնելով:

Ֆիլտրերի լվացման համար պահանջվում է ապահովել 3 մթն.-ից ոչ պակաս ճնշում:

Ֆիլտրացիոն կայանները կոմպլեկտավորվում են համապատասխան ծախսերով հաշվարկների հիման վրա: Ֆիլտրների (**ցանցային և հիդրոցիկլոնային ֆիլտրերի համակարգ**) արտադրողականությունները և քանակները կարող են տարբեր լինել, միայն պետք է պահպանվի ֆիլտրացիոն կայանի ընդհանուր արտադրողականությունը:

Ֆիլտրացիոն հանգույցը տեղադրվում է ճնշման կարգավորման հանգույցից հետո, մեկ ընդհանուր բետոնային հարթակի վրա: Էլեկտրասնուցման աղբյուրը արևային վահանակներ են: Հանգույցը ցանկապատվում ծածկվում և լուսավորվում է:

Հաշվի առնելով կառուցվող Վեդի ջրամբարը, ինչպես նաև դրանից անմիջապես սկիզբ առնող հեռացնող ինքնահոս խողովակաշարի առկայությունը, այս նախագծում չի դիտարկվում «շատ աղտոտված» ջրի առկայությունը: Ֆիլտրերի տիպերի և տեղադրման հերթականության ընտրությունը կատարվում է նախագծման փուլում, որտեղ դիտարկվել են հետևյալ տիպերը.

- **Ցանցային ֆիլտրերը** պատրաստվում են գլանաձև խիտ փաթաթված ցանցերի շերտերից, որոնք ջուրը գտում են մինչև ցանկալի միկրոնային մակարդակը: Դրանք ունեն հաճախակի մաքրման կարիք:
- **Ավտոմատ ինքնամաքվող ցանցային ֆիլտրը** մաքրվում է ինքնուրույն՝ հատուկ վակուում գլխիկների միջոցով: Սա ջրի գտման ավտոմատ համակարգ է, որն ապահովում է ֆիլտրի հետադարձ լվացման 100%-անոց հնարավորություն, նվազեցնում է սպառող էներգիայի կորուստները և երաշխավորում է ռոռզման պատշաճ իրականացումը: Այն կարող է օգտագործվել ջրի բոլոր տեսակի աղբյուրներում:
- **Հիդրոցիկլոնային ֆիլտր.** Այս ֆիլտրը հեռացնում է ջրի տեսակարար կշիռը գերազանցող բոլոր խոշորաչափ մասնիկները՝ արգելելով դրանց մուտքը համակարգ: Հիդրոցիկլոնային ֆիլտրերը հիմնականում օգտագործվում են բաց ջրավազաններում՝ ջրում գտնվող քարի, կոպճի, ավազի և այլ մասնիկների արդյունավետ գտման համար:
- **Սկավառակային ֆիլտր.** Չտող օրգանը որոշակի քանակի սկավառակների հավաքածու է՝ միմյանց վրա առավելագույնս խիտ դասավորությամբ: Սկավառակների երկու կողմերում կան բարակ ակոսիկներ, որոնք որոշում են ֆիլտրի ֆիլտրողունակությունը միկրոնային մակարդակի վրա: Հարևան սկավառակների ակոսիկները հատելով միմյանց ստեղծում են ֆիլտրացման տարբեր շերտեր, որոնց միջով անցնող ջուրը գտվում է մինչև մասնիկների ցանկալի չափը:
- **Ավազակոպճային ֆիլտր.** Այս ֆիլտրերը նախատեսված են լճերի, ջրամբարների, ջրանցքների, ավազանների և այլ ջրերի գտման համար, որոնք պարունակում են օրգանական բաղադրիչներ, ինչպես օրինակ ջրիմուռները: Ավազակոպճային ֆիլտրերի առավելությունը համեմատած այլ տեսակի ֆիլտրերի հետ կայանում է նրանում, որ ապահովվում է գտման առավելագույն արդյունավետություն՝ արագ և մանր գտում: Ավազակոպճային ֆիլտրերը հնարավոր է մաքրել ձեռքով կամ ավտոմատ՝ հետադարձ մատուցվող ջրի հոսքի համակարգի միջոցով: Ավազը, որն օգտագործվում է որպես ֆիլտրող նյութ, պետք է թարմացվի ռոռզման մեկ կամ երկու սեզոնից հետո՝ կախված ջրի որակից: Ավազակոպճային ֆիլտրերը բաղկացած են երկու խցիկներից, վերին խցիկում՝ կախված ֆիլտրացման անհրաժեշտ մակարդակից, լցվում են տարբեր տիպի մանրահատիկ ֆիլտրող լցանյութեր (կվարց, բազալտ, ավազակոպիճ, անթրացիտային ածուխ, կվարցավազ, մարմարային բեկորներ և այլն): Ստորին խցիկն օգտագործվում է գտված, մաքուր ջրի ընդունման համար: Վերին և ստորին խցիկների միջև առկա է բաժանիչ թիթեղ դիֆուզորներով, որոնք կանխում են ֆիլտրող լցանյութերի տեղափոխումը վերին խցիկից ստորին խցիկ, ինչպես նաև նպաստում են հետադարձ հոսքով ֆիլտրող լցանյութի լվացման գործընթացի արդյունավետ իրականացումը՝ ապահովելով լցանյութի ամբողջ շերտի վրա հավասարաչափ ճնշում: Ելքի/մուտքի հատվածում 2"-ից 4" չափերի շնորհիվ մեր կոպճային ֆիլտրերը կարող են ապահովել սկսած 10 մ³/ժամ-ից մինչև 110 մ³/ժամ արտադրողականություն, և նախատեսված են հետադարձ լվացման գործընթացն ապահովելու համար՝ զուգահեռաբար միացված լինելով, ինչպես ձեռքով կառավարվող, այնպես էլ՝ կիսաավտոմատ և ավտոմատ սարքերին՝ կախված ջրահոսքից:

Ֆիլտրի ճիշտ ընտրության համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ պարամետրերը.

- ռոռզման ջրի աղբյուրը,
- ռոռզման ջրի աղտոտվածության աստիճանը,
- ջրի հոսքը:

Հաշվի առնելով 2022 թվականի մարտի 16 ՀՏԶ «ՁՏ ԾԻՄ»-ում տեղի ունեցած քննարկումը և Վեդի համակարգի առանձնահատկությունները, նեկայացրել է ավագակոպճային և ցանցային ֆիլտրացիոն կայանների տեխնիկական համեմատությունը ջրի մաքրման միևնույն աստիճանի ապահովման դեպքում: Հարցում է կատարվել ֆիլտրերի արտադրությամբ զբաղվող մի շարք առաջատար ընկերությունների: Նախագծվող ֆիլտրացիոն կայանների տվյալներին համապատասխան, ստացվել են գնառաջարկներ, որոնք ներկայացվել են Պատվիրատուին:

Քննարկումների արդյունքում որոշվել է ֆիլտրացիոն կայանները իրականացնել ցանցային ֆիլտրերով և հիդրոցիկլոններով, որոնց ձեռքբերման, շահագործման և պահպանման ծախսերը ավելի ցածր են ավագակոպճային ֆիլտրերով իրականացված կայանների համեմատ:

Ընտրված ցանցային ֆիլտրերը ունեն ավտոմատ լվացման հնարավորություն, որը մուտքամասի և ելքամասի ելքերի ճնշումների տարբերության մեծացման արդյունքում մեխանիկորեն կատարում է լվացում՝ ջրի հոսքը ֆիլտրում հակառակ ուղղությամբ ուղղելով և կեղտոտ ջուրը լվացման ջրթողով հեռացնելով:

Ֆիլտրացման արդյունքում համակարգ չեն մտնի մասնիկներ, որոնց չափը գերազանցում է 130 միկրոնը:

Ֆիլտրացիոն կայանը կոմպլեկտավորվում են համապատասխան ծախսերով հաշվարկների հիման վրա, առանձին ֆիլտրերով հավաքված (**ցանցային և հիդրոցիկլոնային ֆիլտրերի համակարգ**) և ապահովված են ավտոմատ կառավարմամբ, պահպանման անվտանգության ցանկապատ տարածքներով՝ բետոնային հարթակներով:

Ստորև աղյուսակում ներկայացված են ինքնահոս խողովակաշարից դուրս եկող բոլոր առաջին կարգի բաժանարարների վրա տեղադրված ֆիլտրացիոն կայանների հաշվարկային հզորությունները, ֆիլտրերի տիպերը, քանակները և կոմպլեկտացիան: Ֆիլտրերի արտադրողականությունը կարող է լինել տարբեր մեծությունների: Ֆիլտրացիոն կայանի ընդհանուր արտադրողականությանը պետք է մնա անփոփոխ:

Աղյուսակ 2-2 Ֆիլտրացիոն կայանները

Ֆիլտրացիոն կայանի (ՖԿ)անվանումը	Սպասարկվող տարածքը, հա	Արտադրող-կանությունը, մ ³ /ժամ	Ֆիլտրերի քանակը, հատ	Ֆիլտրերի տրամագիծը	Ֆիլտրերի արտադրող-կանությունը, մ ³ /ժամ	Հիդրոցիկլոնների քանակը, հատ	Հիդրոցիկլոնների տրամագիծը	Հիդրոցիկլոնների արտադրող-կանությունը, մ ³ /ժամ	Ֆիլտրերի և հիդրոցիկլոնների ընդհանուր հզորությունը, մ ³ /ժամ
ԳՖԿ-4	98.56	280.3	2	6''	160	1	8''	230-360	320
ԳՖԿ-8	233.7	676.9	4	8''	220	3	8''	230-360	880
ՈԻՖԿ-4	156.49	372.7	3	6''	160	2	6''	140-230	480
ՈԻՖԿ-5	155.61	320.9	2	8''	220	2	6''	140-230	440
ՍՖԿ-3	35.5	101.8	1	6''	160	1	6''	140-230	160
ՍՖԿ-4	449.7	1224	6	8''	220	6	8''	230-360	1320
ՍՖԿ-5	231.7	590.4	3	8''	220	3	6''	140-230	660
ՍՖԿ-6	160.95	460.8	3	6''	160	3	6''	140-230	480
ՖԿ-2	109.9	334.8	2	8''	220	2	6''	140-230	440
ՖԿ-3	280.0	849.6	4	8''	220	4	8''	230-360	880
ՖԿ-1	97.0	249.1	2	6''	160	2	6''	140-230	320

ՖԿ-2	636.5	1624	8	8''	220	8	8''	230-360	1760
ՖԿ-1	92.32	266.4	2	6''	160	2	6''	140-230	320
ՖԿ-1	285.4	734.4	4	8''	220	4	6''	140-230	880

Առանձին ավտոմատացված ֆիլտրացիոն կայանների համար (ցանցային և հիդրոցիկլոնային ֆիլտրերի համակարգ) պետք է կառուցվեն անվտանգության և պահպանման գոտիներ՝ բետոնային հարթակով, ցանկապատով: Նույն բետոնային հարթակի վրա տեղադրվում է նաև ճնշման կարգավորման հանգույցը:

2.5.3. Ջրի ճնշման կարգավորման հանգույց

Քանի որ Վեդի ինքնահոս հեռացնող ճնշումային խողովակաշարերում ստատիկ ճնշումները պահանջվածից բարձր են, ապա նոր տեխնոլոգիաներին ու սարքավորումներին նորմալ ճնշումներ ապահովելու համար բաժանարարների վրա նախատեսվում են ճնշման կարգավորման հանգույցներ, ինչպես վերգետնյա՝ ֆիլտրացիոն կայանի սկզբնամասում, այնպես էլ ստորգետնյա՝ ֆիլտրացիոն կայանից հետո, հորի մեջ:

Շահագործման աշխատանքների նաև պահեստամասերի օպտիմալացման նպատակով նախնական փուլում առաջարկվում է բոլոր ջրթողներում (առաջին կարգի բաժանարարների սկզբնամասերում) տեղադրել պահանջվող տրամագիծ ունեցող կարգավորիչ, որը կկարողանա ապահովել իրենից հետո ≤ 80 մ ջրի ճնշում:

Ճնշման կարգավորիչի աշխատանքի ապահովության և պաշտպանության նպատակով տեղադրվում է նաև ճնշման ապահովման-օգնության փական/ջրթափ փական (արագ ճնշում քցող): Այն թույլ չի տա, որ ճնշումը բարձրացնա նույնիսկ հոսքի արագության հանկարծակի փոփոխության դեպքում: Երբ ճնշումը նվազում է, մեծ քանակությամբ օդ է արձակվում: Օդի հեռացման և վերոնշյալ ամրանների աշխատանքն ապահովելու համար կարգավորիչից հետո տեղադրվում է օդային փական:

2.5.4. Ոռոգման ներտնտեսային ցանցերի բաժանարարների և ճյուղերի նախագծում

Ոռոգման ներտնտեսային ցանցի նախագծման համար նախնական նախագծերի կազմման ընթացքում հաշվի է առվել ինքնահոս համակարգի ճյուղերում ջրառների հստակ տեղադիրքերը և տարածքներում, դաշտամիջյան ճանապարհների առկայությունը, որտեղով հնարավոր կլինի ոռոգման ջուրը փակ ցանցով հասցնել յուրաքանչյուր հողակտորի: Ոռոգման ներտնտեսային փակ ցանցի բաժանարարները և ճյուղերի դասավորությունը ընտրել է ամենաարդյունավետ տարբերակով՝ գրեթե վերջնական, որը չի առաջացնում նաև հողերի օտարման պահանջ:

Ոռոգման փակ ցանցի նախնական նախագծման ժամանակ դիտարկվել է նախընտրելի խողովակների լավագույն տեսակները և նախընտրությունը տրվել պոլիէթիլենային խողովակներին՝ հիմք ընդունելով համապատասխան ճնշումները և տնտեսական արդյունավետությունը, որը նաև ոռոգման նոր տեխնոլոգիաների կիրառման համար պահանջված տեսակ է:

Ոռոգման ցանցը կահավորված է լինելու նաև կարգավորման, բաժանարար, դատարկման, անհրաժեշտության դեպքում՝ օդահան հորերով, որոնք կառուցվելու են հիմնականում հավաքովի երկաթբետոնյա կոնստրուկցիաներով՝ ըստ **3,900-3 սերիական արտադրության 7-րդ թողարկման**: Հորերի չափերն ընտրվելու են համաձայն իրենց նշանակությունների և դրանցում նախատեսված և սարքավորումների տեսակից, քանակից ու չափերից:

Ներտնտեսային ոռոգման փակ ցանցի բաժանարարների և ճյուղերի խողովակների տեսակների ընտրությունն իրականացվել է համապատասխան հիդրավլիկական հաշվարկների միջոցով:

2.5.5. Հիմնական տարբերակի ընտրություն

Համաձայն ծախսերի վերլուծության արդյունքների, նպատակահարմար է կիրառել առաջին տարբերակը, սակայն պետք է հաշվի առնել նաև մյուս տարբերակի տեխնիկական հնարավորությունները, միմիանց նկատմամբ առվելությունները և հնարավոր մտահոգությունները:

Ցածր արժեքով տարբերակը նախնական նախագծի վերջնական փուլում ուսումնասիրվել և գնահատվել է մյուս համայնքների ամբողջական ռոտզման տարածքների վերակառուցման ներտնտեսային ցանցերի նախնական նախագծման համար:

2.5.6. Ջրաչափություն, ջրի բաշխման և կառավարման սյլան

Ջրի կառավարումը իրականացվելու է կառավարման կենտրոնական գրասենյակից, որը նախատեսվում է կառուցել այնպիսի վայրում, որ հնարավոր լինի ապահովել բավարար ռադիոկապ ծրագրով նախատեսված համայնքների վերակառուցվող ռոտզման ներտնտեսային ցանցերի վրա «Ջրաչափման/ջրատրման փականային հանգույց» արկղներում տեղադրված բոլոր էլեկտրամագնիսական փականների գրաֆիկով միացումը և անջատումը իրականացնելու համար:

Այդ աշխատանքները կիրականացնի ՋՕԸ-ի օպերատորը՝ համակարգի ռոտզման կառավարման ծրագրի միջոցով: ՋՕԸ-ի կողմից կազմվելու են ջրման ժամանակացույցեր և բաժանվելու են ջրօգտագործողներին/ֆերմերներին: Այդ ժամանակացույցերում տրվելու են ջրման օրերը և ժամանակահատվածները:

Ջրի բաշխումը կատարվելու է բոլոր ջրթողներից միաժամանակ, համաձայն հաշվարկային ծախսերի: Ոռոգումը իրականացվելու է տակտերով/բլոկերով, որի դեպքում տվյալ ռոտզման բլոկին տրվելու է ջրի հաշվարկային ծախսը: Մեկ տակտի օրական ջրման տևողությունը կազմում է 16-20 ժամ:

Կենտրոնական գրասենյակից կիրականացվի նաև առաջին կարգի բաժանարարների սկզբնամասերում տեղադրված բոլոր ֆիլտրացիոն կայանների կառավարում: Հնարավոր կլինի ինֆորմացիա ստանալ բոլոր ֆիլտրացիոն կայաններում հեռացնող ջրատարների սկզբնամասերում տեղադրված էլեկտրամագնիսական հոսքաչափերից:

3. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

3.1. ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 12-րդ հոդվածը (ընդունվել է 1995թ., փոփոխվել է 2015թ) սահմանում է. «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև»:

Այդ պարտավորություններն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը, 1991թ-ին անկախության ձեռք բերելուց ի վեր, մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր ընդունեց, ինչպես նաև միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ ստորագրեց: Աղյուսակ 2-1-ում ներկայացված են ՀՀ շրջակա միջավայրի պահպանության մի շարք օրենքներ, որոնք վերաբերում են ոռոգման հուսալիության և արդյունավետության ծրագրի տարբեր բաղադրիչների իրականացմանը:

Աղյուսակ 3-1 ՀՀ բնապահպանական օրենքները

Օրենքի անվանումը	Ընդունման տարին
«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը	1994
«Պատմամշակութային հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» ՀՀ օրենքը	1998
«ՀՀ հարկային օրենսգիրք»	2016
«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը	1999
«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը	2000
«ՀՀ հողային օրենսգիրքը»	2001
«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը	2001
«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրության և օգտագործման համալիր ծրագրի մասին» ՀՀ օրենքը	2001
«ՀՀ ջրային օրենսգիրքը»	2002
«Զրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործող ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքը	2002
«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը	2003
«Թափոնների մասին» ՀՀ օրենքը	2004
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը	2004
«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը	2005
«ՀՀ Անտառային օրենսգիրքը»	2005
«Զրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքը	2005
«Զրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը	2006
«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը	2006
«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը	2008
«ՀՀ Ընդերքի օրենսգիրքը»	2011
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը	2014
ՀՀ կառավարության որոշում «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»	2014

Ստորև հակիրճ ներկայացվում են այն օրենքների հիմնական դրույթները, որոնք վերաբերում են Վեդիի ջրամբարի ոռոգման ցանցի կառուցման ծրագրի բնապահպանական և սոցիալական վերլուծության հարցերին:

Սահմանադրություն

Համաձայն ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ-ին, լրամշակվել է 2005թ և 2015թ) Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է: ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն՝ պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը, վերարտադրությունը և բնական պաշարների ողջամիտ օգտագործումը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենք (2014թ.)

Յուրաքանչյուր նախատեսվող, կառուցվող, վերակառուցվող, վերազինվող, ընդլայնվող կամ այլ գործունեություն, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թ. Հայաստանի Հանրապետության օրենքի: Օրենքը սահմանում է փորձաքննության ենթակա գործունեության տեսակները և չափանիշները: Գործունեության տեսակներն ըստ դրանց ազդեցության փաթեթի բաժանվում է երեք կատեգորիայի: Կատեգորիաները սահմանված են էլեկտրոկառուցման ծավալներից, բնութագրերից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից: Ա կատեգորիան ընդգրկում է այնպիսի մեծածավալ արտադրական գործընթացներ, որոնք էլեկտրոկառուցման ծավալներից, բնութագրերից և շրջակա միջավայրի վրա, մասնավորապես հանքարդյունաբերությունը, քիմիական արտադրությունները, վտանգավոր թափոնների տեղափոխումը, վերամշակումը կամ թաղումը, մետաղների, շինանյութերի և այլ ապրանքատեսակների մեծ արտադրողականությամբ կայանքները, ջերմային էներգիայի արտադրության խոշոր կայանքները և այլն: Բ կատեգորիան ներառում է գործնականում նույն գործունեության տեսակները, սակայն ավելի փոքր մասշտաբների կամ արտադրողականությամբ: Գ կատեգորիան դա այն գործունեության տեսակներն են, որոնք ունեն ոչ մեծ ազդեցություն շրջակա միջավայրի վրա և չեն պահանջում այդ ազդեցության խորը գնահատում:

Սույն օրենքը պարունակում է հանրային քննարկումներ կազմակերպելու ընդհանուր դրույթներ, իսկ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014թ նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշումը կարգավորում է հանրային լսումների/ քննարկումների կազմակերպման ընթացակարգը և թիվը, ինչպես նաև սահմանում գործընթացի մեջ ներգրավված կազմակերպությունների/ մասնակիցների դերերը և պատասխանատվությունները: Այսպես, «Ա» և «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների փորձաքննությունը իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական, նաև պահանջվում է իրականացնել առնվազն 4 հանրային լսում, որոնք անց է կացնում նախաձեռնողը (մեծ մասամբ, նախաձեռնողը նախագծային խորհրդատուն է), փորձաքննություն անցկացնող լիազոր մարմինը կամ տեղական իշխանությունները: Հանրային լսումներից մեկը պետք է անցկացվի մինչև ծրագիրը բնապահպանական փորձաքննության ներկայացնելը, իսկ մյուսները՝ փորձաքննության գործընթացի ավելի ուշ փուլերում: «Գ» կատեգորիայի գործունեության համար փորձաքննությունը իրականացվում է մեկ փուլով, 2 հանրային լսումներով:

Ըստ օրենքի 14-րդ հոդվածում ներկայացված դասակարգման՝ «300 մմ և ավելի տրամագծով և 1 կմ և ավելի երկարությամբ ջրամատակարարման համակարգեր կամ մայր ջրանցքներ» գործունեության տեսակները, դասվում են Գ կատեգորիայի շարքին: Ծրագրի շրջանակներում տեղադրվող 9 խողովակներ գերազանցում են սույն պարամետրերը:

Ըստ այդմ, Վեդիի ջրամբարի ոռոգման ցանցերի արդիականացման ծրագրի շրջանակներում իրականացվող շինարարությունը հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեություն:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999թ.) և «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (2000թ.)

«Բուսական աշխարհի մասին» և «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ տարածքում գտնվող բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանման,

օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության կարգավորման պետական քաղաքականություն: Այս օրենքների նպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության պահովումն է: Այն նաև սահմանում է մասնավորապես հազվագյուտ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը: Այս օրենքը համարվում է կարևոր, քանի որ Բնապահպանական պետական տեսչությունը համակարգի շինարարության ժամանակ ուղղորդվելու է այս օրենքի դրույթներով:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (1994թ., լրամշակվել է 2007թ.)

Այս օրենքը կարգավորում է արտանետման արտոնագրերը, սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման առավելագույն թույլատրելի սահմանը և այլն: Սահմանվել է նաև ենթաօրենսդրական ակտեր աշխատավայրերում, բնակելի և հասարակական կառույցներում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սահմանարկան նորմերի պահպանման համար: Շինարարության ժամանակ մթնոլորտային օդի պաշտպանության և վերահսկողության հաստատությունները (Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին) ուղղորդվելու են այս օրենքի դրույթներով:

«ՀՀ հողային օրենսգիրքը» (2001թ.)

Հողային օրենսգիրքը սահմանում է էներգետիկայի, ջրային տնտեսության (ջրամատակարարում, ջրահեռացում, պոմպակայաններ, ջրամբարներ և այլն) և այլ նպատակներով հատկացվող հողերի օգտագործման հիմնադրույթները: Օրենսգիրքը սահմանում է հատուկ պահպանվող հողատարածքները, ինչպես նաև անտառածածկ, ջրածածկ և պահուստային հողերը: Այն նաև սահմանում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները: Այս օրենքի դրույթները, հողօգտագործման թույլտվությունների տիպային ձևերը, սեփականության ձևերը, ինչպես օրենքով սահմանված այլ նորմերը հաշվի են առնվել ջրամբարի նախագծման փուլում: Այս օրենքով սահմանված դրույթները (հողային ռեսուրսների պաշտպանություն, օգտագործված տարածքի կանոնակարգում) կիրառվելու են ոռոգման ցանցը կառուցող կապալառուի, ինչպես նաև վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից:

«ՀՀ ջրային օրենսգիրքը» (2002թ.)

Ջրային օրենսգրքի հիմնական նպատակն է երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության ճյուղերի ջրային կարիքների բավարարման և ապագա սերունդներին ջրային ռեսուրսներով ապահովման համար իրավական հիմքերի ստեղծումը: Ջրային օրենսգիրքն անդրադառնում է հետևյալ առանցքային խնդիրներին՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության պարտավորությունների սահմանում, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակում, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի համակարգի ստեղծում, հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիության ապահովում, ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծում, անդրասահմանային ջրային ռեսուրսների օգտագործում, ջրի որակի չափանիշների սահմանում, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրներ, ջրային ռեսուրսների պահպանություն և պետական վերահսկողություն:

Օրենսգրքով սահմանված դրույթներն առանցքային նշանակություն ունեն ջրային ռեսուրսների ծրագրերի նախագծման բոլոր փուլերի համար: Այն կարգավորում է ջրային ռեսուրսների պահպանման, կառավարման և արդյունավետ օգտագործման իրավական հարաբերությունները: Մասնավորապես, ջրօգտագործման թույլտվությունների, առաջնահերթության և այլ հայեցակարգերը կարգավորվում են սույն օրենսգրքով՝ միգուցե ոչ ուղղակի, սակայն այս օրենսգրքից բխող կամ դրա հետ առնչվող ենթաօրենսդրական ակտերով: Բացի այդ, այդ օրենսգրքով սահմանված դրույթները հիմք են հանդիսանում ծրագրերում ներառված հաստատությունների համար ջրային ռեսուրսների պահպանման և շրջակա միջավայր դրանց հնարավոր արտահոսքը վերահսկելու համար:

«Ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) և ՋՕԸ միությունների մասին» ՀՀ օրենքը (2002թ.)

ՋՕԸ և ՋՕԸ միությունների ստեղծման նպատակն է ոռոգման ենթակառուցվածքի արդյունավետ կերպով շահագործումն ու պահպանումը, ջրօգտագործողներին անկողմնակալ և արդար ոռոգման ջրամատակարարման կազմակերպումը, ջրօգտագործման վճարների հավաքագրումը, ՋՕԸ անդամների շահերի ներկայացումն ու պաշտպանումը, նրանց մոտ ընկերության աշխատանքների մասին իրազեկվածության մակարդակի ավելացումը և մասնակցությունը ՋՕԸ-ի կառավարմանը: ՋՕԸ և ՋՕԸ միությունների հիմնական նպատակների և խնդիրների թվում (հոդված 4) կարելի է նշել շրջակա միջավայրի և սոցիալական տեսանկյունից հետևյալ կարևոր խնդիրները՝ ոռոգման համակարգի շահագործումն ու պահպանումը, սպասարկման տարածքներում շինարարական աշխատանքների իրականացում և ոռոգման համակարգի և ջրային ռեսուրսների վերականգնում, ոռոգման նոր տեխնոլոգիաների ներդրում, ուսուցման կազմակերպում նոր տեխնոլոգիաների ներդրման, ջրօգտագործողների գիտելիքների և ունակությունների բարձրացման թեմաներով, ջրամատակարարման կառավարում և աղտոտման կանխարգելում, հողի որակի բարելավման համար անհրաժեշտ աշխատանքների կատարում, դրենաժային համակարգի սպասարկում, հողի էրոզիան կանխարգելելու միջոցով էկոլոգիական անվտանգության ապահովում, հողերի աղակալման, ջրածածկման կանխարգելում և ոռոգման համակարգի պահպանության խթանում:

Այս օրենքն, ընդհանուր առմամբ, կարգավորում է ՋՕԸ-ների, ինչպես նաև այն ընկերությունների աշխատանքը, որոնք ներգրավված են նման ինքնահոս համակարգերի նախագծման, կառուցման և շահագործման փուլերում՝ ջրապահանջի ծավալները, մշակաբույսերի կազմը, ոռոգելի կամ ոռոգվող տարածքները, ոռոգման ենթակառուցվածքների ներկա վիճակը որոշելու համար:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2005թ.)

Այս օրենքը սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոնների բացասական ազդեցությունների կանխարգելման իրավական եւ տնտեսական հիմքերը: Օրենքը նաև սահմանում է ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

Այս օրենքով սահմանվող դրույթներով կարգավորվելու են թափոնների հավաքման և նախանշված տեղեր տեղափոխելու գործընթացը, ինչպես նաև դրա հետ առնչվող խնդիրները և փոխհարաբերությունները տարբեր կազմակերպությունների միջև:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2005թ.)

Սույն օրենքը կարգավորում է ՀՀ բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպումն ու իրականացումը, ինչպես նաև սահմանում վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների և բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը: Շրջակա միջավայրի պահպանությունն ու բնական ռեսուրսների օգտագործումը կարգավորող գործող օրենսդրական դաշտը ներառում է բազմաթիվ իրավական ակտեր: ՀՀ Կառավարության որոշումները բնապահպանական օրենքների գործողության հիմնական իրավական լծակներն են: Բնապահպանական ոլորտը կարգավորվում է նաև ՀՀ նախագահի, վարչապետի և նախարարների որոշումներով և հրամաններով:

«Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքը (2005թ.)

Օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի պահպանության, ռազմավարական կառավարման և օգտագործման երկարաժամկետ զարգացման հայեցակարգը: Այն հստակեցնում է երկրի ջրային ոլորտի համապարփակ կառավարման և պլանավորման առանցքային սկզբունքները՝ սահմանելով առաջնահերթ խնդիրներն ու մոտեցումները: Մասնավորապես, այս օրենքի 13 հոդվածը սահմանում է ջրային ռեսուրսների պահպանման և օգտագործման առաջնահերթությունը: Այն կիրառվելու է տարբեր ոլորտներում ջրօգտագործման առաջնահերթությունը որոշելու համար:

«Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006թ.)

Սույն օրենքի հիմնական նպատակն է սահմանել կարճաժամկետ (մինչև 2010թ.), միջնաժամկետ (2010-2015թթ.) և երկարաժամկետ (2015-2021թթ.) միջոցառումներ Ջրային օրենսգրքով, Ջրի ազգային քաղաքականությամբ և Ծրագրով սահմանված հիմնանպատակներին և խնդիրներին հասնելու համար: «Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքը «դինամիկ» փաստաթուղթ է, որը պետք է կանոնավոր կերպով նորացվի: Օրենքը նախատեսում է հետևյալ առանցքային միջոցառումների իրականացում. միջոցառումների մշակում, որոնց նպատակն է ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների սահմանումը և ազգային ջրային պաշարի ավելացումն ու պահպանությունը, ջրային համակարգերի դասակարգումը, պետական նշանակության ջրային համակարգերի չափանիշների սահմանումը, ջրի պահանջարկի և առաջարկի գնահատում, ջրային ռեսուրսների կուտակման/ պահուստավորման, բաշխման և օգտագործման ռազմավարության մշակում, միջոցառումների սահմանում՝ ուղղված ջրային նորմերի մշակմանը, էկոլոգիական/ նվազագույն հոսքի ծավալի և սպառման համար օգտագործվող ջրի առավելագույն թույլատրելի սահմանների որոշմանը, հատուկ պահպանվող ավազանային տարածքների և արտակարգ էկոլոգիական իրավիճակների և աղետների գոտիների սահմանմանը, ջրային էկոհամակարգերի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը, ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավմանը և աղտոտման կանխարգելմանը, ջրի ազգային ծրագրի իրականացման համար ֆինանսական պահանջների և առաջարկվող ֆինանսավորման աղբյուրների սահմանում, հանրության տեղեկացվածության ապահովում և այլն:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ.)

Այս օրենքը նախատեսում է Հայաստանի Հանրապետության հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

Այս օրենքով սահմանված դրույթները կարող են կիրառելի լինել հատկապես շինարարության փուլում՝ հողային ռեսուրսների պաշտպանության, պատասխանատու կազմակերպությունների, գործընկերների՝ հատկապես տեղական իշխանությունների/ ինքնակառավարվող մարմինների միջև հարաբերությունների կարգավորման ենթատեքստում:

«Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք (1993թ.)

Օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների եւ ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների եւ արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները:

Ոռոգման ջրի բաշխման ժամանակ պետք է հաշվի առնել սույն օրենքի պահանջները, վստահ լինելու համար, որ հաշմանդամների իրավունքները պաշրպանված են:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք (2013թ.)

Սույն օրենքը սահմանում է քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային եւ հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները և կարգավորում է դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները:

Ծրագրի իրականացման ընթացքում կարող են խնդիրներ առաջանալ ոռոգման ջրի բաշխման և կապալառուի կողմից տեղական աշխատուժի ներգրավման ժամանակ:

Ի լրացում վերոնշյալ օրենսդրական ակտերի՝ Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող մի շարք կոնվենցիաներ և

արձանագրություններ, որոնք ներկայացվում են ստորև՝ Աղյուսակ 2-2-ում: Ընդգծվածներն ամենաշատն են առնչվում սույն ՇՄԱԳ-ին:

Աղյուսակ 3-2 ՀՀ կողմից վավերացված բնապահպանական կոնվենցիաներն ու արձանագրությունները

Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է մտել (թ.)	Ստորագրվել է (թ.)	Վավերացվել է (թ.)	Առնչվում է ծրագրին	Ծանոթություն
1. Միջազգային նշանակության գերխոնավ տարածքների, հատկապես որպես ջրաթոշունների բնակավայրերի մասին կոնվենցիա (Ռամսար, 1971)	1975	1993	Հաստատվել է ԽՍՀՄ-ի կողմից		
2. Կենսաբազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992)	1993	1992	1993	x	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993թ
3. Կենսաբանական անվտանգության Կարտախենայի արձանագրություն (Կարտախենա, 2000)		2000	2004		
4. Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան (Նյու Յորք, 1992)	1994	1992	1993		Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993թ
5. Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)			2002		Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2003
6. Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (ժնև, 1979)	1983		1996		Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997
7. Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիա (Էսպո, 1991)	1997		1996	x	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997
Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման մասին արձանագրություն (Կիև, 2003)		2003	2011	x	
8. Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցությունների մասին կոնվենցիա (Յեյսինկի, 1992)	2000		1996		
9. Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (Փարիզ, 1994)	1996	1994	1997	x	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997
10. Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիենա, 1985)	1988		1999		Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999
Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987)	1989		1999		Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999
11. Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացման գործընթացում հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրիուս, 1998)	2001	1998	2001	x	

Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է մտել (թ.)	Ստորագրվել է (թ.)	Վավերացվել է (թ.)	Առնչվում է ծրագրին	Ծանոթություն
12. Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին կոնվենցիա, (Ռոտերդամ, 1998)		1998	2003		
13. Կայուն օրգանական ադոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001)		2001	2003		
14. Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ տեսակի թշնամական օգտագործումը արգելելու մասին կոնվենցիա (Շնև, 1976)	1978		2001		Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2002
15. Լանդշաֆտների Եվրոպական կոնվենցիան (Ֆլորենցիա, 2000)			2004		
16. Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972)			1993	x	
17. Էներգետիկ խարտիայի համաձայնագիր (Լիսաբոն, 1994)			1997		
18. Էներգետիկ արդյունավետության և դրան առնչվող շրջակա միջավայրի համապատասխան հարցերի մասին Էներգետիկ խարտիայի արձանագրություն (Լիսաբոն, 1994)			1997		
19. Վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոպայի կոնվենցիա (Բեռն, 1979)	1982	2006	2008	x	

3.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԲ Բնապահպանական և սոցիալական ստանդարտներ 1-ը (ԲՄՄ1/ESS1)՝ բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների գնահատում և կառավարում, հավակնում է լինել երաշխիքային քաղաքականությունների հովանոց բանկի՝ շրջակա միջավայրի պահպանության ամբողջ քաղաքականության համար: Այս քաղաքականությունը կարևոր է շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր բացասական հետևանքները հայտնաբերելու, կրճատելու և հնարավորինս մեղմացնելու համար: Այս քաղաքականությունը մեծ ուշադրության է արժանանում ծրագրի նախապատրաստման և հաստատման փուլերում:

Վեդիի ջրամբարի ներտնտեսային ցանցերի արդիականացման ծրագրի շրջանակներում իրականացվող շինարարությունը կունենա որոշակի սոցիալական ու բնապահպանական ազդեցություններ:

Հետևաբար, ծրագրով կկիրառվի ՀԲ ԲՄՄ1-ը «Բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների գնահատում և կառավարում»:

Անհրաժեշտ է իրականացնել ՇՄՄԱԳ և ստանալ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության դրական եզրակացությունը:

3.3. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՍՔԵՐ

Ստորև համառոտ ներկայացվում են ծրագրին առնչվող (մասնավորապես՝ բնապահպանության տեսանկյունից) պետական գերատեսչությունների դերերը:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԵՆ)

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը տարածքային կառավարման և ինքնակառավարման ոլորտներում: Մարզպետարանները (տարածքային կառավարման մարմիններ) պատասխանատու են տարածքային իրավասության մեջ մտնող հասարակական ենթակառուցվածքների ղեկավարման համար: Տեղական ինքնիշխան մարմինները (համայնքներ) պատասխանատու են համայնքների սեփականություն հանդիսացող տեղական նշանակության հասարակական ենթակառուցվածքների ղեկավարման համար: Այս նախարարությունը և մարզպետարանները համակարգում են այն տեղական իշխանություններին, որոնք սերտորեն առնչվում են ծրագրի հետ:

Նախարարությունը նաև պատասխանատու է էներգետիկայի ոլորտի, բնական պաշարների պահպանման, կայուն օգտագործման և ռեզեներացիայի համար և իր գործառույթներն իրականացնում է Ջրային կոմիտեի միջոցով:

Ջրային կոմիտե (ՋԿ)

Կոմիտեն ջրային գործունեության մեջ ներգրաված ընկերությունների կառավարումը բարելավող մանդատ ունի: Ի թիվս այլ նպատակների ՋԿ-ն նպաստում է սպառողների համար ջրային ծառայությունների բարելավմանը և ջրի ենթակառուցվածքների ու ծառայությունների մատուցման բարեփոխումների իրականացմանը: ՋԿ-ն ունի հետևյալ գործառույթները՝ մասնակցել ՀՀ ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակմանն ու իրականացմանը, ՀՀ կառավարությանը ներկայացնել ջրօգտագործման տարեկան հաշվետվությունները, իրականացնել կոմերցիոն գործունեությամբ զբաղվող ընկերությունների պետական բաժնետոմսերի հեղինակային կառավարումը, ինչպիսիք են հիդրո-տեխնիկական կառույցների շինարարությունը, տեխնիկական շահագործումը, ջրամատակարարման և կոյուղու ծառայությունները, ոռոգման, խմելու ջրի և կոյուղու ոլորտներում, ինչպես նաև պետական մարմինների կառավարումը, որոնք վերը նշված ոլորտներում օտարերկրյա ֆինանսավորմամբ ներդրումային նախագծեր են իրականացնում բնական և արհեստական ջրավազաններում:

Ջրային կոմիտեն գտնվում է ՏԿԵ նախարարության կազմում և նրա ենթակայությամբ:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶ) «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղը» պատասխանատու է որը Վեդիի ջրամբարի ոռոգման ցանցի վերակառուցման ծրագրի իրականացման պատասխանատու կառույցն է:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն (ՇՄՆ)

Պատասխանատու է ՀՀ բնական ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման և վերարտադրության, ինչպես նաև շրջակա միջավայրի բարելավման համար: Այդ ոլորտներում ՇՄՆ՝ որպես լիազոր մարմնի լիազորություններն ընդգրկում են ազգային քաղաքականության մշակման վերահսկումը, բնապահպանական չափանիշների և ուղեցույցների մշակումը և կիրառումը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (ԷՆ)

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն, ի թիվս այլ գործառույթների, մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության ագրարային ծրագիրը, որով նպատակ է դրվել չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործումը, ոռոգման ջրի հասանելիության մակարդակի բարձրացումը, ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառումը, մեքենատրակտորային համակազմի թարմացումը և ագրոպարենային համակարգի սարքավորումների, սննդի անվտանգության համակարգերի ներդրման աջակցությունը այլն:

Մեխորացիայի զարգացման վարչությունը պատասխանատու է կոլեկտորա-դրենաժային համակարգերի կառուցման, շահագործման, վերականգնման և մաքրման ամենամյա ծրագրերի մշակման, իրականացման և համակարգման համար:

ՀՀ առողջապահության նախարարություն (ԱՆ)

Պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը պատասխանատու է սանիտարական նորմերի և խմելու ջրի որակի ստանդարտների մշակման, առողջությանն առնչվող բոլոր տեսակի խնդիրների վերացման, կազմակերպությունների և քաղաքացիների կողմից սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման, և հակահամաճարակային միջոցառումների իրականացման վերահսկողության համար: Այս նախարարության հաստատությունները պետք է վերահսկեն և իրականացնեն շինարարության աշխատողների անվտանգ աշխատանքի պայմանների ապահովումը և սանիտարական պայմանները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ԱՍՀՆ)

ԱՍՀՆ այլ գործողությունների հետ մեկտեղ պատասխանատու է հետևյալ ոլորտներում պետական քաղաքականության, օրենսդրության և ծրագրերի մշակման և իրագործման հարցում. սոցիալական ապահովություն, աշխատուժ և զբաղվածություն, սոցիալական օգնություն հաշմանդամություն ունեցող մարդկանց և ծերերին, ընտանիքներին, կանանց և երեխաներին սոցիալական պաշտպանվածություն:

4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն ՇՄՍԱԳ-ն իրականացվել է առաջադրանքի պայմանների համաձայն: Այն ընդգրկում է նախագծի ամբողջ շրջանակը, այդ թվում Վեդիի ջրամբարի ոռոգման ցանցի շինարարությունը և շահագործումը: Սույն հաշվետվության գնահատման գործընթացը ներառում է նախագծային փաստաթղթերի և գիտական գրականության ուսումնասիրում, ինչպես նաև առկա ելակետային տվյալների ստուգման համար անհրաժեշտ դաշտային աշխատանքներ, բացակայող տեղեկությունների հավաքագրում և ոչ պաշտոնական հանրային խորհրդատվություններ տեղական շահագրգիռ կողմերի հետ:

4.1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՇՄՍԱԳ թիմի բուսաբանը, կենդանաբանը և ջրային էկոհամակարգերի մասնագետը ուսումնասիրել են Վեդիի ջրամբարի համար հայցվող տարածքը և կատարել են տեղանքի տեսողական գննություն:

Ուսումնասիրություններն իրականացվել են դաշտային աշխատանքների դասական եղանակների՝ երթուղային և աշխատանոցային մեթոդներով:

Նմուշների մշակումն ու տեսակների որոշումը կատարվել է գրասենյակային պայմաններում: Տեսակների որոշումը և անվանումների ճշգրտումը կատարվել է «Հայաստանի ֆլորայի» 11 հատորյակի միջոցով /1954-2010թթ/, օգտագործվել են մի շարք լրացուցիչ աշխատություններ, մասնագիտական գրականություն: Հազվագյուտ և անհետացող տեսակների կարգավիճակը ճշտվել է ըստ Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքերի և Բնության և նրա ռեսուրսների պահպանության Միջազգային միության հանձնաժողովի կողմից մշակված չափանիշների:

Հողածածկի ուսումնասիրությունը կատարվել է ինչպես գրականության տվյալների, այնպես էլ տեղում հողաշերտի կտրվածքի նկարագրության և նմուշների վերլուծության միջոցով:

Բոլոր տվյալների հիման վրա որոշվել են զգայուն բնապահպանական բաղադրիչները, որոնց հիման վրա գնահատվել են հնարավոր բնապահպանական ազդեցությունները, որոնք ներառում են ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման փուլերը:

Կատարվել է նախնական նախագծի լուծումների ուսումնասիրություն, որոշվել են նախատեսվող աշխատանքների ազդեցության ցուցանիշները, որոնց հիման վրա գնահատվել է դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների և մերձակա բնակչության վրա:

Մանրամասն Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը (ԲՄԿՊ) մշակվել է որոշակի գործողությունների դասակարգման արդյունքում, որոնք հանդեսում են տարբեր բնապահպանական և սոցիալական ռիսկերի, և դրանց նվազեցմանն ուղղված մեղմացնող միջոցառումների իրականացմանը: Կանխատեսվող ծախսերը հաշվարկվել են մի քանի առանձին ամենակարևոր մեղմացման միջոցառումների համար, ներառելու համար դրանք առաջիկա շինարարական աշխատանքների ամփոփագրի մեջ:

4.2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախագծման աշխատանքների շրջանակներում խորհրդատուն իրականացրել է սոցիալական հետազոտություններ, այդ թվում որակական ուսումնասիրություններ և սոցիալ-տնտեսական վերլուծություններ՝ ազդակիր և շահառու համայնքներում սոցիալական ազդեցությունը գնահատելու նպատակով: Որակական հարցումների նպատակն էր բացահայտել և քննարկել համայնքներին հուզող ոռոգման ոլորտի խնդիրները, բացահայտել համայնքների տարբեր խմբերի մտահոգություններն ու կարիքները, նրանց ակնկալիքները ոռոգման ցանցի կառուցման ծրագրից:

Սոցիալական ազդեցության գնահատման շրջանակներում կատարվել են հետևյալ հետազոտություններն ու աշխատանքները.

- Ուսումնասիրվել են Այգավան, Ավշար, Նոյակերտ, Արարատ, Վեդի, Դաշտաքար, Ուրցաձոր և Գոռավան համայնքների վերաբերյալ առկա ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական

- տվյալները և մատչելի տեղեկությունները ԱՎԾ և Արարատի մարզպետարանի կայքերից,
- Իրականացվել է ծրագրի հնարավոր բացասական սոցիալական ազդեցության ծավալի բացահայտում և գնահատում՝ սոցիալ-տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների, ինչպես նաև անմիջապես տեղի բնակիչների հետ անցկացրած քննարկումների արդյունքների համաձայն:

5. ԾՐԱԳՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրին առնչվող բնապահպանական ազդեցությունները որոշվում, նկարագրվում և գնահատվում են ներկայացված էկոլոգիական ռիսկի վերլուծության միջոցով:

5.1. ԾՐԱԳՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ուղղակի (կամ առաջնային) – ազդեցություններ, որոնք բխում են գործունեության/ասպեկտի և ընդունող միջավայրի միջև անմիջական փոխազդեցության արդյունքում (օրինակ՝ արտահոսքի հեռացման և ընդունող ջրի որակի միջև):

Երկրորդային – Ծրագրի և դրա միջավայրի միջև առաջնային փոխազդեցություններից բխող ազդեցությունները, որոնք հանդիսանում են շրջակա միջավայրում հետագա փոխազդեցությունների հետևանք (օրինակ՝ բնական միջավայրի մասնակի կորուստը ազդում է ավելի մեծ տարածքում տեսակների պոպուլյացիայի կենսունակության վրա):

Անուղղակի – Ազդեցություններ, որոնք բխում են նախնական զարգացման արդյունքում առաջացող այլ զարգացումներից կամ գործունեություններից (օրինակ՝ նոր զարգացումը խթանում է ճանապարհի հասանելիության բարելավման պահանջը):

Կուտակային (կումուլյատիվ) – ազդեցություններ, որոնք այլ ազդեցությունների հետ միասին գործելով՝ ազդում են շրջակա միջավայրի միևնույն ռեսուրսի կամ ընկալիչի վրա:

Մշտական – ազդեցություններ, որոնք Ծրագրի մշակման ընթացքում, առաջանալով մեկ անգամ, մշտական փոփոխություններ են առաջացնում ազդակիր ընկալիչում կամ ռեսուրսում (օրինակ՝ հին անտառի հատում տեղանքի զբաղեցման արդյունքում, ջրի հունի շեղում):

Կարճատև – ազդեցություններ, որոնց տևողությունը կանխատեսվում է միայն սահմանափակ ժամանակահատվածի համար (օրինակ՝ շինարարության, սեյսմիկ ուսումնասիրությունների, հորատման կամ շահագործումից հանելու ընթացքում), և որոնք կդադարեն գործունեության ավարտին, կամ վերականգնողական/մեղմացման միջոցառումների և բնական վերականգնման արդյունքում:

Երկարատև – ազդեցություններ, որոնք կշարունակվեն երկար ժամանակ, (օրինակ՝ զարգացման շահագործումից առաջացող աղմուկը, շահագործման հետևանքով առաջացող հեռացման կամ արտահոսքերի ազդեցությունները): Դա ավելի շատ ներառում է ընդհատվող կամ կրկնվող, քան շարունակական ազդեցությունները, եթե դրանք տեղի են ունենում տևական ժամանակահատվածում (օրինակ՝ ջրհորների շահագործման արդյունքում՝ տեսակներին պատճառվող կրկնվող սեզոնային անհանգստություն, ամենամյա սպասարկման գործունեությունից առաջացող ազդեցություններ):

Ոչ նորմալ ազդեցություններ – ազդեցություններ, որոնք առաջանում են Ծրագրի շրջանակներում ոչ նորմալ իրադարձություններից (օրինակ՝ վթարներ, ձախողումներ և արտակարգ իրավիճակներ) կամ, որոնք առաջանում են Ծրագրի վրա ազդող արտաքին միջավայրում (օրինակ՝ ջրհեղեղներ, սեյսմիկ ակտիվություն, սողանք): Այդ դեպքում, գնահատումը պետք է հաշվի առնի իրադարձության հավանականությունը:

Տեղական – ազդեցություններ, որոնք ազդում են տեղական նշանակություն ունեցող բնապահպանական ռեսուրսների վրա կամ որոնք սահմանափակվում են մեկ բնական միջավայրով, մեկ (տեղական) վարչական տարածքով, մեկ համայնքով:

Շրջանային – ազդեցություններ, որոնք ազդում են շրջանային կարևորություն ունեցող բնապահպանական ռեսուրսների վրա, կամ զգացվում են շրջանի մասշտաբով՝ ըստ դրա վարչական սահմանների, բնական միջավայրի տեսակի բնորոշման:

Ազգային – ազդեցություններ, որոնք ազդում են ազգային նշանակություն ունեցող բնապահպանական ռեսուրսների վրա, կամ, որոնք ազդում են պետական նշանակություն ունեցող/պաշտպանված տարածքի վրա:

Միջազգային – ազդեցություններ, որոնք ազդում են միջազգային նշանակություն ունեցող բնապահպանական ռեսուրսների, ինչպես օրինակ միջազգային Կոնվենցիաներով պաշտպանվող տարածքների վրա:

Վեդիի ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ռոտման ցանցի վերակառուցման/արդիականացման ծրագիրը համարվում է շրջակա միջավայրի վրա կարճատև ազդեցությամբ նախագիծ:

5.2. ԾՐԱԳՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԽԵՄԱ

Ազդեցության տևողություն

Ըստ Ծրագրի տեսակի, տարբերակվում են տևողության երեք կատեգորիաներ՝

- մշտական
- կարճատև և
- երկարատև:

Ազդեցությունը մշտական է, եթե այն ազդակիր ընկալիչում կամ ռեսուրսում առաջացնում է մշտական փոփոխություն (օրինակ՝ հին անտառի հատում տեղանքի զբաղեցման արդյունքում, ջրի հունի շեղում):

Կարճատև ազդեցության տևողությունը միայն սահմանափակ ժամանակահատվածով է և, հիմնականում, կապված է Ծրագրի շինարարության փուլում առաջացող վնասների (բեռնատարների, էքսկավատորների, հորատիչների կողմից առաջացրած աղմուկ/ փոշի) հետ:

Երկարատև ազդեցությունը կապված է կառուցված օբյեկտների շահագործման հետ (հեռացում, աղմուկ, հոտ և այլն) և կառուցված օբյեկտների համար տարածքի ձեռքբերման հետ, ներառյալ պարբերական և կրկնվող ազդեցությունները, ինչպես օրինակ՝ տեխնիկական սպասարկման աշխատանքները, մոնիթորինգը:

Ազդեցությունների տարածական չափերը

Ազդեցությունների տարածական չափերը բաժանվում են չորս կատեգորիաների՝

- տեղական,
- շրջանային,
- ազգային և
- միջազգային:

Ազդեցությունը տեղական չափերի է, եթե վնասվում են տեղական նշանակություն ունեցող բնապահպանական ռեսուրսները, կամ եթե դրանք սահմանափակվում են մեկ բնական միջավայրով կամ մեկ համայնքով:

Շրջանային ազդեցությունները կապված են շրջանային նշանակություն ունեցող բնապահպանական ռեսուրսի վնասման կամ վատթարացման հետ (բնության պահպանվող տարածք, շրջանային վտանգված տեսակներ կամ բնական միջավայրեր):

Ազդեցությունն ազգային կամ միջազգային չափերի է, եթե Ծրագրի ազդեցությանը կենթարկվեն պետական/միջազգային նշանակություն ունեցող էկոլոգիական ռեսուրսներ, տեսակներ, բնական միջավայրեր, զբոսաշրջային հանգստավայրեր, կամ պետականորեն կամ միջազգայնորեն պաշտպանվող տարածքներ (Ազգային պարկ, Տեսակների պաշտպանության Վաշինգտոնի կոնվենցիա և այլն):

Էկոլոգիական ռիսկի ուժգնությունը

Էկոլոգիական ռիսկերը բաժանվում են երեք կատեգորիաների՝

- ցածր
- միջին և
- բարձր:

Էկոլոգիական ռիսկը ցածր է, եթե շրջակա միջավայրի տուժած մասի զգայունությունը ցածր է, Ծրագրին առնչվող ազդեցության ուժը՝ ցածր կամ միջին (բնական միջավայրի արժեքը բնապահպանական տեսանկյունից ցածր է, Ծրագրի հետ կապված աղմուկի մակարդակի ավելացումը՝ փոքր):

Ծրագրին առնչվող ազդեցությունը կապված է միջին էկոլոգիական ռիսկի հետ, եթե շրջակա միջավայրի տուժած մասի զգայունությունը և պատճառված տհաճության մակարդակը՝ ցածր կամ միջին են, կամ, երբ Ծրագրին առնչվող ազդեցությունները՝ բարձր են և զգայունությունը՝ ցածր:

Բարձր էկոլոգիական ռիսկն այն դեպքն է, երբ շրջակա միջավայրի բարձր կամ միջին զգայունությամբ մասերը կապված են բարձր ազդեցությունների կամ միջին ազդեցությունների և շրջակա միջավայրի բարձր զգայունությամբ մասի հետ:

Վեղիի ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի վերակառուցման/արդիականացման ծրագրի ազդեցությունների ուժգնությունը շրջակա միջավայրի զգայունության վրա բերված է Աղյուսակ 4-1-ում:

Աղյուսակ 5-1 Էկոլոգիական ռիսկերի սխեմա

Ազդեցությունների ուժգնությունը	Շրջակա միջավայրի զգայունություն		
	Ցածր	Միջին	Բարձր
Ցածր	✓		
Միջին	✓		
Բարձր			

5.3. ԾՐԱԳՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՇԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրին առնչվող ազդեցությունը ցածր է, եթե շրջակա միջավայրի տուժած մասի գործառույթների խաթարման մակարդակը շատ բարձր չէ և/կամ եթե այն չի գերազանցել սահմանային թույլատրելի չափի 50%-ը:

Այն միջին է, եթե շրջակա միջավայրի տուժած մասը կարող է իրականացնել իր գործառույթները, սակայն դրանց որակի մակարդակը նվազել է (գրունտի խտացում, 49 դԲ(Ա) գերազանցող աղմուկը կարող է խանգարել թռչունների բուժմանը: Խաթարման մակարդակը սահմանային թույլատրելի չափի 50%-ից-99%-ի միջակայքում է):

Ազդեցության ուժգնությունը բարձր է, եթե շրջակա միջավայրի մի մասի գործառույթը խափանվել է (գրունտի կնիքում, բնական միջավայրերի կորուստ) կամ, եթե գերազանցվել են աղմուկի/փոշու սահմանային թույլատրելի արժեքները:

5.4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի զգայունությունը գնահատվում է Ծրագրին առնչվող ազդեցությունների հարաբերակցությամբ: Այս դեպքում, օրինակ՝ դա վերաբերվում է աղմուկին, հոտին, կնիքմանը, կորուստին, և այլն:

Շրջակա միջավայրի մասն ունի ցածր զգայունություն, եթե դրա նշանակությունը բնական հավասարակշռության համար ցածր է և/կամ եթե այն նախնական խիստ ծանրաբեռնված է (ցածր կենսաբազմազանությամբ բնական միջավայրեր, արդեն իսկ կնիքված գրունտ):

Դրա զգայունությունը միջին է, եթե այն նախնական գրեթե ծանրաբեռնված չէ և դրա նշանակությունը բնական հավասարակշռության համար՝ միջին է (բնական միջավայրներ՝ լանդշաֆտին բնորոշ կենսաբազմազանությամբ, շրջանին բնորոշ հողեր):

Զգայունությունը բարձր է, եթե աղտոտիչները նախնական չեն ծանրաբեռնում շրջակա միջավայրի համապատասխան մասը և, եթե այն բնական հավասարակշռության հետ կապված հատուկ գործառույթ ունի (օրինակ՝ վտանգված տեսակների բնական միջավայրեր, շատ բերրի հող, շրջանի հազվագյուտ հողեր, բարձր գեղեցկության լանդշաֆտներ, զբոսաշրջային

հանգստավայրեր, բնակելի տարածքներ, մշակութային ժառանգության դասակարգված վայրեր և այլն):

Աղյուսակ 5-2 Ծրագրի ազդեցությունները

№	Ազդեցությունը	Ընկալիչ (ազդեցության ուղին)
1.	Փոշու և աղմուկի առաջացում	<ul style="list-style-type: none"> Ֆլորա և ֆաունա, բնական միջավայր (f) Լանդշաֆտ (l) Բնակելի տարածք և հանգստյան գոտի (c, l) Օդի որակ (c) Մշակութային ժառանգություն (c)
2.	Ժամանակավոր տարածքի պահանջ	<ul style="list-style-type: none"> Հող (so, v) Ջուր (v) Ֆլորա և ֆաունա, բնական միջավայր (f, so) Բնակելի տարածք և հանգստյան գոտի (so, f, v) Մշակութային ժառանգություն (so, c) Նյութական ակտիվներ (so)
3.	Հողի մակերեսային օգտագործումը/ հողի աղտոտումը, փափուկ նստվածքների պեղումը	<ul style="list-style-type: none"> Հող (so) Ջուր (g) Կլիմա և օդի որակ (c) Ֆլորա և ֆաունա, բնական միջավայր (so, f, v) Բնակելի տարածք (so, l) Մշակութային ժառանգություն (so, l)
4.	Մշտական տարածքի պահանջ	<ul style="list-style-type: none"> Հող (so) Ջուր (v) Կլիմա և օդի որակ (c) Ֆլորա և ֆաունա, բնական միջավայր (so, f, v, g) Բնակելի տարածք (c, g) Մշակութային ժառանգություն (c, g)
5.	Շինությունների կառուցում	<ul style="list-style-type: none"> Կլիմա և օդի որակ (c) Ֆլորա և ֆաունա, բնական միջավայր (c) Բնակելի տարածք, օդի որակ (c) Հանգիստ (c, l) Մշակութային ժառանգություն (c, l)
6.	Աղմուկ	<ul style="list-style-type: none"> Ֆլորա և ֆաունա, բնական միջավայր (f) Հանգստյան գոտի (c, f) Բնակելի տարածք (c, f)

Ազդեցությունների ուղիները. *F* = ֆաունա; *v* = բուսականություն / բույսեր; *c* = կլիմա; *l* = լանդշաֆտ; *g* = խորքային ջրեր; *s* = մակերևութային ջուր; *so* = հող

6. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6.1. ՏԵՂԱԴԻՐՔԸ և ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ

Վեդի ջրամբարի իշխման տակ գտնվող ոռոգման ցանցի առաջարկվող տեղամասի տույրգրաֆիան ներկայացվում է Գծապատկեր 2. -ում:



Գծապատկեր 6-1 Ծրագրի տեղամասի տույրգրաֆիա

Հիմնվելով կայունության և բնապահպանական համատեղելիության սկզբունքների վրա, ընդհանուր առմամբ, տեղանքի ընտրությունից տարածքը կբացառվի, եթե այն գտնվում է հետևյալ պայմաններում, կամ, եթե չեն կարող իրականացվել շրջակա միջավայրի վրա ազդեցություններից խուսափելու կամ դրանք մեղմացնելու արդյունավետ միջոցառումները:

Աղյուսակ 6-1 Բացառման չափանիշները ոռոգման ցանցի մշակման համար

Բացառման չափանիշներ Տեղանքը պետք է բացառվի, եթե այն գտնվում է.	Կիրառելի է Վեդի ջրամբարի իշխման տակ գտնվող ոռոգման ցանցի համար, այո/ոչ
1 = զգայուն լանդշաֆտում	
2 = գոյություն ունեցող կամ պլանավորվող ջրապաշտպան գոտու I կամ II գոտիներում	
3 = բնական ջրհեղեղի տարածքում կամ պաշտոնապես ջրհեղեղից պաշտպանվող տարածքում	
4 = Գոյություն ունեցող կամ պլանավորվող խմելու ջրի աղբյուրից՝ 2 կմ հոսանքն ի վեր գտնվող գոտում	

5 = Բնության պահպանվող տարածքի սահմաններում կամ դրան մոտ, երբ տարածքը բնութագրվում է կենսաբազմազանության առումով բարձր նշանակություն ունեցող տեսակների և բնական միջավայրերի առկայությամբ	
6 = Պատմական լանդշաֆտի, կամ հնագիտական, կամ ճարտարապետական, կամ մշակութային առումով բարձր նշանակությամբ տարածքում կամ դրան մոտ	
7 = Ստորգետնյա ջրերի զգայուն տարածքում (ստորգետնյա ջրերի մակերևութային մակարդակ և/կամ ծածկաշերտի բարձր թափանցելիություն)	
8 = ներկայիս կամ ապագա զբոսաշրջային գործունեության համար բարձր նշանակությամբ տարածքում	
9 = գոյություն ունեցող կամ պլանավորվող բնակելի տարածքներից կամ խառը գոտիներից 1 կմ հեռավորության վրա	
10 = առևտրային կամ արդյունաբերական գոտիներից 500 հեռավորության վրա	
11 = անկայուն տարածքում (երկրաշարժ, էրոզիա, նստում)	

Հաշվի առնելով վերոնշյալը, ընտրված տեղանքը բնապահպանական տեսանկյունից հարմար է ոռոգման ցանցի կառուցման և շահագործման համար:

6.2. ՌԵԼԻԵՖ և ԵՐԿՐԱԶՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզի հարավարևմտյան եզրին գուգահեռ 6-13 կմ լայնությամբ ընկած է Արարատյան հարթավայրի հարավարևելյան մասը: Հյուսիսում Երանոսի լեռնաշղթան է: Հյուսիսային սահմանն անցնում է Ագատ և դրա վտակ Գողթ գետերով: Հյուսիս-արևելքում Գեղամա լեռնաշղթայի հարավարևմտյան հատվածն է: Արևելքում Մժկատարի լեռներն են, որից արևմուտք ընկած է Դահնակի լեռնաշղթան, սրանից էլ հարավ գտնվում է Ուրծի լեռնաշղթան: Մարզի կենտրոնում Երասխի լեռներն են, Կոտուց, Խոսրովասար լեռնագագաթները և այլ լեռնագագաթներ:

Տարածքի ամենացածր կետը հարավում է՝ Արաքսի հունի մոտ՝ 801 մ: Ամենաբարձր կետը հյուսիս-արևելքում գտնվող Սպիտակասար լեռնագագաթն է՝ 3555,7 մ:

Տարածքի միայն մոտ 30%-ն է հարթավայրային:

Մարզի խոշոր գետերն են Արաքսը, Հրազդանը, Ագատը, Վեղին: Համեմատաբար փոքր գետերից են Արածոն, Չորասու հեղեղատարը, Ագատի ու Վեղիի վտակները՝ Քաջառուն (Դարբանդ), Խոսրովը և այլն: Արարատյան հարթավայրով անցնող գետերը ունեն ոռոգիչ նշանակություն: Ագատի վրա Լանջագատ գյուղի մոտ կառուցված է Զովաշենի ջրամբարը և համանուն ՀԷԿ-ը:

Արարատի մարզում տարածված են ՀՀ-ում առկա բոլոր 8 լանդշաֆտային գոտիները: Ցածրադիր շրջաններից մինչև բարձրադիր շրջաններ դրանք հաջորդում են իրար այս հերթականությամբ. անապատային, կիսաանապատային, չոր տափաստանային, տափաստանային, լեռնաանտառային, մերձալպյան, ալպյան, ձյունամերձ: Բայց սրանցից հիմնականներն են կիսաանապատային (Արարատյան հարթավայրում), չոր տափաստանային (միջին բարձրության լեռներում), ալպյան (Գեղամա լեռնաշղթայի լանջերին):

Երկրաձևաբանության տեսակետից տարածքը բավական հարթ է, մինչև 0-5°-ի թեքությամբ և հանդիսանում է լճա-գետային նստվածքների տարածք:

6.3. ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ և ՀՈՂԵՐ

Երկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտական աշխատանքները նախնական նախագծման համար իրականացվել են շահառու համայնքների ներտնտեսային ցանցի մագիստրալ և բաժանարար ջրատարների ուղեգծերի երկարությամբ: Այս աշխատանքների նպատակն է եղել ճշտել և հիմնավորել ուղեգծերի երկարությամբ տեղադրված ապարների տեսակները, գնահատել տարածքի սեյսմիկ վտանգի չափը, գրունտային ջրերի նիշերը, հնարավոր բնական և տեխնոգեն վտանգների առկայությունը (փլուզումներ, քարաթափություն և այլն): Այս աշխատանքները կատարվել են տեսական և փորձարարական առկա տեղեկատվության հիման վրա:

Ուսումնասիրվող տարածքների երկրաբանական կտրվածքներն ունեն հետևյալ նկարագիրը՝ **Վեղի գետի վերին հոսանքում**՝ միջին և վերին կավիճի հասակի ապարներ, որոնք ներկայացվում են կրաքարերով, ավազաքարերով, տուֆոավազաքարերով, մերգելներով և տուֆորրեկչաներով (Cr₂, Cr₁₋₂): Այս ապարները մերկանում են Վեղի գետի վերին լանջերին, մնացած մասերում դրանք ծածկված են այլուվիալ-դելյուվիալ-էյլուվիալ ծագման ապարներով, որոնք ներկայացված են բեկորա-խճաքարերով, ավազակավերով և ճալաքարա-կոպճաքարերով:

Վեղի գետի միջին հոսանքներում երկրաբանական կտրվածքում մասնակցում են չորրորդական հասակի այլուվիալ-դելյուվիալ-պրոյուվիալ ծագման նստվածքները, որոնք ներկայացված են ավազակավերով, խճաքարերով և գլաքարա-ճալաքարա-կոպճաքարերով, որոնց հզորությունը հասնում է մի քանի մետրից մինչև մի քանի տասնյակ մետրի:

Վեղի գետի հովտային մասերում գրունտային ջրերի մակարդակը տատանվում է 40÷15մ-ի վրա: Ուսումնասիրվող տարածքում ֆիզիկաերկրաբանական երևույթներն արտահայտված են մայր ապարների հողմնահարմամբ և մանր սելավատարների առկայությամբ:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքն համարվում է ստորերկրյա ջրերի տարանցման գոտի: Կախված ռելիեֆից և երկրաբանական կտրվածքից՝ տարածքն համարվում է թույլ ջրատար գոտի: Մթնոլորտային տեղումների հիմնական մասը մինչև Վեղի քաղաք ունի մակերեսային հոսքեր, որոնք ցածր գոտիներում մտնելով դելյուվիալ ծագման ապարների մեջ՝ սնում են Արարատյան արտեզյան ավազանը: Այս տարածքում ստորերկրյա ջրերը չունեն աղբյուրների տեսքով ելքեր, իսկ եթե որոշ հատվածներում դրանք կան, ապա կրում են ժամանակավոր բնույթ:

Ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների և արխիվային նյութերի հիման վրա նախագծվող ոռոգման ցանցերի տարածքներում առանձնացված գրունտային շերտերի լիթոլոգիական կտրվածքները և դրանց ֆիզիկամեխանիկական հատկությունները (վերնից ներքև) ներկայացված են ստորև.

Շերտ – 1 Բուսահող, հզորությունը 0,1÷0,2մ, գրունտի մշակման խումբն ըստ ՇՆևԿ IV-2.82, ժող.1 – ի՝ 9^ա:

Շերտ – 2 Գլաքարաճալաքարային գրունտներ ավազների և ավազակավերի լցուկով մինչև 20÷25%, հզորությունը 0,5÷2,5մ և ավելի, գրունտի մշակման խումբն ըստ ՇՆևԿ IV-2.82, ժող.1 – 6^ա:

Տեսակարար կշիռը – 2,70 ÷ 2,72 գ/սմ³
Ծավալային կշիռը – 2,08 ÷ 2,13 գ/սմ³
Ներքին շփման անկյունը – 32° ÷ 36°
Շաղկապման լարումը – 0,03 ÷ 0,05 կգ/սմ²
Դեֆորմացիայի մոդուլը - 250 ÷ 300 կգ/սմ² :

Շերտ – 3 Ավազակավեր խճաքարերի և ճալաքարերի խարնուրդներով մինչև 25÷30%, հզորությունը 0,5÷2,5մ և ավելի, գրունտի մշակման խումբն ըստ ՇՆևԿ IV-2.82, ժող.1 – 33^ա:

Տեսակարար կշիռը – 2,69 ÷ 2,71 գ/սմ³
Ծավալային կշիռը – 1,78 ÷ 1,83 գ/սմ³

Ներքին շփման անկյունը – $18^{\circ} \div 19^{\circ}$

Շաղկապման լարումը – $0,31 \div 0,36$ կգ/սմ²

Դեֆորմացիայի մոդուլը - $90 \div 105$ կգ/սմ² :

Շերտ – 4 Խճաքարեր ավազակավերի լցուկով մինչև 20%, հզորությունը 0,4÷0,7մ, գրունտի մշակման խումբն ըստ ՇՆևԿ IV-2.82, ժող.1 – 13:

Տեսակարար կշիռը – $2,68 \div 2,70$ գ/սմ³

Ծավալային կշիռը – $1,95 \div 1,98$ գ/սմ³

Ներքին շփման անկյունը – $28^{\circ} \div 30^{\circ}$

Դեֆորմացիայի մոդուլը - $150 \div 200$ կգ/սմ² :

Շերտ – 5 Բեկորախճաքարային գրունտ ավազակավերի լցուկով մինչև 20%, հզորությունը 0,5÷2,5մ և ավելի, գրունտի մշակման խումբն ըստ ՇՆևԿ IV-2.82, ժող.1 – 12:

Տեսակարար կշիռը – $2,70 \div 2,72$ գ/սմ³

Ծավալային կշիռը – $1,97 \div 2,03$ գ/սմ³

Ներքին շփման անկյունը – $36^{\circ} \div 38^{\circ}$

Դեֆորմացիայի մոդուլը - $300 \div 350$ կգ/սմ² :

Շերտ – 6 Կրաքարեր, մերգելներ հողմնահարված, ձեղքավորված, հզորությունը 2,5մ-ից ավելի, գրունտի մշակման խումբն ըստ ՇՆևԿ IV-2.82, ժող.1 – 15^բ:

Տեսակարար կշիռը – $2,72 \div 2,74$ գ/սմ³

Ծավալային կշիռը – $2,2 \div 2,3$ գ/սմ³

Ներքին շփման անկյունը – $55^{\circ} \div 65^{\circ}$

Դեֆորմացիայի մոդուլը - $600 \div 700$ կգ/սմ² :

Ամփոփելով արդյունքները՝ կարելի է ասել, որ տարածքի երկրաբանական պայմանները բավարար են շինարարության համար:

ՀՀ սեյսմիկ գոտևորման քարտեզի համաձայն տարածքը գտնվում է III գոտում, ունի 0.4g առավելագույն արագացում, 32սմ/վ տարածման արագություն և 9 բալ սեյսմիկություն:

Ստորև ներկայացված են նաև գրունտների մշակման խմբերը տոկոսային հարաբերակցությամբ՝ ըստ համայնքների:

Ուրցաձոր համայնք

II կարգ - 5% - 9^ա

III կարգ - 45% - 33^ա

IV կարգ - 20% - 13

V կարգ - 25% - 12 և 6^բ

VI կարգ - 5% - 15^բ

Դաշտաքար համայնք

II կարգ - 3% - 9^ա

III կարգ - 42% - 33^ա

IV կարգ - 20% - 13

V կարգ - 25% - 12 և 6^բ

VI կարգ - 10% - 15^բ

Գոռավան համայնք

II կարգ - 5% - 9^ա

III կարգ - 70% - 33^ա

IV կարգ - 10% - 13

V կարգ - 15% - 12 և 6^բ

Վեղի համայնք

III կարգ - 45% - 33^ա

V կարգ - 40% - 12 և 6^բ

VI կարգ - 15% - 15^բ :

6.4. ՄԱԿԵՐԻՆՈՒԹԱՅԻՆ և ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արարատի մարզի գետերը պատկանում են Արաքսի ավազանին: Նրա տարածքով են անցնում Հրազդան գետն իր ստորին հոսանքով, իսկ Ազատ, Վեդի և Արածո գետը՝ ամբողջ ընթացքով՝ ակունքից գետաբերան: Մի քանի տասնյակ գետակներ էլ ամռանը բոլորովին ցամաքում են: Գետերից միայն Արածո գետն է, որ իր ստորին հոսանքում անցնում է ՀՀ-ից դուրս: Մնացած գետերի ջրերն ամռանը լիարժեք օգտագործվում են ոռոգման կարիքների համար: Մտումը ձնհալքային, անձրևաջրային, վարարում են ապրիլ-մայիս ամիսներին: Ոռոգման նպատակով Ազատ գետի վրա կառուցվել է համանուն ջրամբարը, Արածո գետի վրա՝ Զանգակատան ջրամբարն է Հորթուն բնակատեղիի մոտ: Մարզում կառուցվել է Կախանովի և Արտաշատի ջրանցքները 19-20-րդ դարերում: Կախանովի ջրանցքը կառուցվել է 1870-1874 թվականներին Անդրկովկասյան փոստային օկրուգի պետ գեներալ Ն.Ն.Կախանովի նախաձեռնությամբ դեռևս հնագույն ժամանակներից գոյություն ունեցող ջրանցքի ընթացքով: 1870 թվականին Կախանովը Արազդայանի (Երասխավան) կիսաանապատները 65 տարով վարձակալեց՝ նպատակ ունենալով այնտեղ զբաղվել շաքարի ճակնդեղի մշակությամբ: 1874 թվականի նոյեմբերի 5-ին շինարարությունն ավարտվեց: Ջրանցքն ունի 36 կմ երկարություն: Այն վերակառուցվել է 1930 թվականին: Արտաշատի ջրանցքը կառուցվել է 1930 թվականին: Սկիզբ է առնում Հրազդան գետի ձախ ափից՝ Երևանի տարածքում, ունի 61 կմ երկարություն: Վեդի գետն ու իր Քարաղբյուր, Շաղափ վտակներն ունեն տեղական ոռոգիչ նշանակություն: Մարզի հողատարածքների ոռոգումն ապահովելու նպատակով կառուցված են Մխչյանի, Ազատի, Արմաշի, Քաղցրաշենի, Մասիսի, Արագափի խոշոր ջրհան կայանները:

6.5. ԿԼԻՄԱ

Պայմանավորված Հայկական լեռնաշխարհի լեռնային մակերևույթով՝ այս ամբողջ տարածաշրջանում՝ այդ թվում Արարատի մարզում, կլիման ենթակա է վերընթաց գոտիականության: Մասնավորապես այս մարզում առկա են ՀՀ-ում տարածված կլիմայի 8 տիպերից 6-ը, որոնք հարթավայրային շրջաններից մինչև լեռնային շրջաններ իրար հաջորդում են հետևյալ հաջորդականությամբ.

- չոր խիստ ցամաքային
- չոր ցամաքային
- չափավոր ցամաքային
- բարեխառն
- ցուրտ լեռնային
- ձյունամերձ

Ազդակիր տարածքում տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է +11,6 °C-ի և +13 °C-ի միջև: Ձմռանն անհողմ եղանակի պայմաններում տեղի է ունենում ջերմաստիճանային շրջադասություն. սառն ու ծանր օդը կուտակվում է Արարատյան դաշտում: Այդ պատճառով միջին գոտում՝ մինչև 2000 մետր բարձրությունները, ձմեռը լինում է ավելի տաք և արևոտ, քան Արարատյան գոգավորությունում: Գարունն անցողիկ է և կարճատև: Մայիսի երկրորդ տասնօրյակից օդի ջերմաստիճանն անցնում է 15 °C-ից, սկսվում է չոր, հաճախ խորշակներով երկարատև ամառը, որը շարունակվում է մինչև սեպտեմբերի երկրորդ կեսը: Աշունը մեղմ է, անհողմ, հաճախ են թույլ անձրևները: Բնորոշ են լեռնահովտային քամիները: Ամռանը՝ կեսօրից հետո, քամին Գեղամա լեռներից փչում է հովիտներ՝ մեղմացնելով ամառվա տապը: Հունվարյան միջին ջերմաստիճանն այդ շրջաններում -2,6 °C-ից -3,4 °C է, հուլիսյան ջերմաստիճանը՝ +24,7 °C-ից +27,7 °C, միջին տարեկան տեղումները՝ 231մմ և 360մմ: Ընդհանուր առմամբ Արարատի մարզն աչքի է ընկնում կլիմայի չորությամբ:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են օդի ջերմաստիճանը, օդի հարաբերական խոնավությունը, մթնոլորտային տեղումներն Արարատում, Վեդիում և Ուրցածորում, ինչպես նաև քամու արագությունն ու ուղղությունը Արարատում:

Աղյուսակ 6-2 Օդի ջերմաստիճանը¹

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակար դակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Արարատ	818	-3.3	-0.3	6.5	13.3	18.0	22.4	26.2	25.8	20.9	13.7	6.2	-0.2	12.4	-32	42
Վեղի	833	-2.6	0.2	6.7	12.7	18.1	22.0	26.7	26.6	22.8	15.5	7.6	0.2	13.0	-26	42
Ուրցաձոր	1064	-3.4	-1.0	5.3	12.1	16.6	20.8	24.7	24.6	20.0	13.4	6.2	-0.4	11.6	-23	41

Աղյուսակ 6-3 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %													Միջին ամսական ժամը 15-ին	
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
Արարատ	78	71	61	56	55	49	45	45	49	61	72	79	60	66	29
Վեղի	72	68	61	51	50	46	45	30	40	46	65	80	55	-	-
Ուրցաձոր	74	69	60	55	56	50	47	45	46	56	66	74	58	67	33

Աղյուսակ 6-4 Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական /օրական առավելագույն, մմ													Ձնածածկույթ		
	ըստ ամիսների												Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				Տարեկան
Արարատ	16	18	25	35	35	23	10	6	8	18	21	16	231	35	28	61
	22	34	26	31	33	37	20	31	28	32	32	28	37			
Վեղի	19	14	21	45	46	30	19	4	13	30	29	16	286			
	19	13	23	24	36	22	17	5	13	14	22	14	36			
Ուրցաձոր	26	29	40	51	53	32	17	11	13	30	33	25	360	44	56	118
	25	29	45	41	37	40	32	31	35	32	51	28	51			

¹ http://www.minurban.am/lows/files/26_10_11_h.pdf

Աղյուսակ 6-5 Քամի

Բնակավայրի, օբյեկտի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ձնշումը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անհողությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥ 15 մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Միջին արագությունը, մ/վ												25	50	100
			ըստ ուղղությունների														
1	2	3	Հյուսիսային (Հս)	Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-արևելյան (ՀվԱրլ)	Հարավային (Հվ)	Հարավ-արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-արևմտյան (ՀսԱրմ)	12	13	14	15	16	17	18
Արարատ	921,6	Հունվ	16	3	8	18	10	5	11	29	50	1,3	1,9	18	25	27	29
			1,9	1,6	1,7	2,7	2,1	1,5	1,9	2,2							
		Ապրիլ	13	4	8	29	15	5	8	18	28	2,3					
			2,7	2,3	2,7	3,4	2,8	2,7	2,4	2,8							
		Հուլիս	18	3	6	14	12	5	10	32	23	2,3					
			2,6	2,7	2,2	2,7	2,2	2,1	2,6	3,0							
		Հոկտ	17	3	8	18	13	4	11	26	39	1,5					
			2,3	1,8	1,7	2,3	2,0	1,9	2,1	2,5							

ՈՒՐՑԱՁՈՐ - Կլիման չոր, խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5 °C: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 °C, իսկ առավելագույնը՝ 42 °C: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վերածվել են կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում: Ունի արտեզյան աղբյուրներ:

ԳՈՌԱՎԱՆ - Ծովի մակարդակից ունի 925 մ բարձրություն: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5 °C: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 °C, իսկ առավելագույնը՝ 42 °C: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վերածվել են կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

ՎԵՂԻ - Վեղին գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտում, որտեղ ձևավորվել է կլիմայի չոր, խիստ ցամաքային տիպը: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, նվազագույն ջերմաստիճանը դիտվել է - 32 °C: Կայուն ձյունածածկույթ ձևավորվում է ոչ ամեն տարի: Բնորոշ է ջերմաստիճանային շրջադասությունը: Ամառը շոգ է, տևական՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմաստիճանը հասնում է 24 °C-ից 26 °C, իսկ առավելագույնը՝ 42 °C: Բնորոշ են լեռնահովտային քամիները, որոնք մեղմացնում են քաղաքի ամառային տապը: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Վեղիում բնական լանդշաֆտը

կիսաանապատային է: Հումուսից աղքատ գորշ հողերը վերածվել են կուլտուր ոռոգելի հողերի: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 200-250 մմ է:

Վեդին ունի զարգացած գյուղատնտեսություն, որն ունի մերձքաղաքային տնտեսության ուղղվածություն, այսինքն մատկարարում է գյուղատնտեսական թարմ մթերքներով նաև մայրաքաղաքին: Շոգ կլիմայի շնորհիվ գյուղատնտեսական հողահանդակները պարտադիր ոռոգման կարիք ունեն: Ունի ոռոգման խիտ ցանց և օգտագործվում է Ազատ գետի, Արտաշատի ջրանցքի և ստորգետնյա արտեզյան ավազանի ջրերը:

Քաղաքի միջով է հոսում Վեդի գետը, բացի այդ կան նաև ստորգետնյա հանքային ջրերի պաշարներ:

ԴԱՇՏԱՔԱՐ - Կլիման չոր, խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5 °C: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 °C, իսկ առավելագույնը՝ 42 °C: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վերածվել են կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում: Հարուստ է արտեզյան ջրավազաններով, որոնք էլ օգտագործվում են որպես խմելու ջուր:

ԱՐԱՐՍ - Գյուղը տեղադրված է ծովի մակարդակից 856 մ բարձրության վրա: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 26-ից 28 աստիճան, իսկ առավելագույնը 42 աստիճան: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են անվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում: Գյուղում կան կվարցի և օնիքսային սև մարմարի պաշարներ, որի մշակումից ստացվում է դեկորատիվ սալիկներ:

Ոռոգումը կատարվում է Ազատ և Արաքս գետերի ջրերով, խմելու ջուրը բերվում է Գառնուց: Ունի գինու գործարան, որը հիմնադրել է Շուստովը 1906 թվականին, հետագայում կողոպտվել է և վերաբացվել է 1925 թվականին:

ԱՅԳԱՎԱՆ - Կլիման չոր, խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -13-ից -15 °C: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 °C, իսկ առավելագույնը՝ 42 °C: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 570 հա: Գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են, դրանք զբաղեցնում են ողջ մակերեսի 70%:

Համայնքի հիմնախնդիրներից է ոռոգման և խմելու ջրի ջրագծերի վերանորոգումը:

ԱՎՇԱՐ - Կլիման չոր, խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 °C, իսկ առավելագույնը՝ 42 °C: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են անվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:


Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 1410 հա: Գյուղատնտեսական նշանակության հողերի գրեթե կեսն օգտագործվում է որպես վարելահողեր: Պտղատու և խաղողի այգիները համապատասխանաբար կազմում են 62 և 54 հեկտար:

6.6. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ և ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

6.6.1. Մթնոլորտային օդը

Մթնոլորտային օդի որակի 2022թ. նոյեմբեր ամսվա մոնիթորինգի տվյալների համաձայն

փոշու նոյեմբեր ամսվա միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՄԹԿ-ն Արարատ և Հրազդան քաղաքներում՝ համապատասխանաբար 1.2 և 1.9/մ³ անգամ: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդի և Ազոտի երկօքսիդի նոյեմբեր ամսվա միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ն:



Գծապատկեր 6-2 Փոշու մակարդակը


6.6.2. Մակերևութային ջրերի որակը

2022թ-ի հուլիսի մակերևութային ջրերի որակի ցուցանիշների համաձայն Վեղի գետի ջրերի որակը 2-րդ դասի է:



Գծապատկեր 6-3 Վեղի գետի ավազանը

**ՀՀ մակերևութային ջրերի որակը
հուլիս / 2022 թվական**



Գծապատկեր 6-4 ՀՀ մակերևութային ջրերի որակը

6.7. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

6.7.1. Բուսական աշխարհը

Ծրագրի բոլոր բաղադրիչների համար որոշված են տեղանքի համար բնորոշ բուսատեսակները և աճելավայրերը: Ուսումնասիրության տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզում, որն ընդգրկված է Երևանի ֆլորիստիկ շրջանի մեջ: Տարածքում, որը պետք է ենթարկվի ազդեցության Ծրագրի իրականացման ընթացքում շինարարության և շահագործման փուլերում, առանձնացվում են մի շարք տեղամասեր, որոնց էկոհամակարգերը ենթարկվելու են տարբեր աստիճանի տրանսֆորմացիայի: Ծրագրի բոլոր հատվածներում անտառներ չկան և որևէ ծառահատման խնդիր չի առաջանալու:

Ուսումնասիրվող տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Երևանի ֆլորիստիկ շրջանին, որտեղ յուրահատուկ են կիսաանապատային և անապատային բուսածածկույթը, ինչը հիմնականում յուրացված է գյուղատնտեսական կուլտուրաներով: Տարածքի բուսատեսակների զգալի մասը քսերոֆիտներ (չորասերներ) են: Սակայն դիտարկվող տարածքների

ընդհանուր ֆոնի վրա, վեգետացիայի ողջ ժամանակահատվածում ջրանցքների և ջրատարների շրջակայքը տեղ-տեղ առանձնանում է նաև՝ ջրաճահճային, կամ վայրի ծառաթփուտային բուսականության տարրերով:

Չնայած իրենց քսերոֆիտ բնույթին, օշինդրային կիսաանապատների բուսածածկն աչքի է ընկնում տեսակային հարուստ բազմազանությամբ: Որպես կանոն, այս տեսակները տարածված են ոչ աղակալված, մակերեսային քարքարոտ գորշ հողերի վրա և ներկայացված են օշինդրաէֆեմերային-կիսաանապատային և հալոֆիլ-անապատային տիպերով:

Օշինդրային կիսաանապատների հիմնական բաղադրիչը օշինդր բուրավետն է (*Artemisia fragrans*), որը մինչև 50սմ բարձրության, փայտացած առանցքով կիսաթփիկ է: Այն զարնանը և ամռանը պահպանում է իր մոխրագույն տեսքը, աշնանը ծածկվում է մանր դեղին ծաղիկներով: Գարնանը այդ թփերի միջև ընկած տարածությունը զբաղեցնում են էֆեմերները՝ *Ceratocephalus falcatus*, *Ziziphora tenuiflora*, *Ziziphora persica*, *Alyssium desertorum*, *Poa bulbosa*, *Bromus tectorum*, *Lepidium vesicarium* տեսակներով: Հունիսի կեսերին, տեղումների քանակի նվազեցման և օդի ջերմաստիճանի բարձրացման հետևանքով այս տեսակները չորանում են: Սակայն աշնանը տեղումների ավելացման հետ մեկտեղ օշինդրային անապատները վերակենդանանում են, ծաղկում են՝ օշինդրը (*Artemisia*), *Kochia prostrata*, *Noaea mucronata* և այլ բուսատեսակներ: Ուշ աշնանը և ձմռանը հողը ծածկվում է աճող էֆեմերների կանաչ գորգով:

Լանդշաֆտի անբաժանելի բաղադրիչներ են՝ *Populus nigra var. italica*, *P. gracilis* and *Eleagnus angustifolia*: Առանձին տեղամասերում կարող են հանդիպել՝ *Tamarix* (կարմրանը), *Halocnemum strobilaceum* (սարսազանը), *Salsola ericoides* (հավամարգանման օշանը), *Alhagi pseudalhagi* (ուղտի փուշը), *Camphorosma* (կամֆորումանը): Վայրի օգտակար բուսատեսակներից տարածված է *Peganum harmala* (սպանդ սովորականը):

Տարածաշրջանում հանդիպող, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ *Acorus calamus* L. (Խնկեղեգ ճահճային), *Lepidium lyratum* L. (Նվարդակ քնարած), *Salsola tamamschjanae* Pjin (Օշան Թամամշյանի), *Astragalus paradoxus* Bunge (Գազ տարօրինակ), *Glycyrrhiza echinata* L. (Սատուտակ խոզանավոր), *Rhizocephalus orientalis* Boiss. (Արմատագլխիկ արևելյան): Նշված բուսատեսակները հանդիպում են Երևանի ֆլորիստիկ շրջանում, սակայն ծրագրի համար նախատեսված տարածքներում տարածման արեալներ չունեն:

Դաշտային ուսումնասիրությունների և գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն ծրագրի իրականացման տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել:

6.7.2. Կենդանական աշխարհը

Ուսումնասիրվող տարածաշրջանում հանդիպում են կաթնասունների 13 (Աղյուսակ 5-5), թռչունների՝ 64 (Աղյուսակ 5-6) և սողունների՝ 7 տեսակներ, որոնցից ՀՀ Կարմիր գրքում/միջազգային կարմիր ցուցակում (IUCN) գրանցված են համապատասխանաբար 2/0, 12/2 և 1/1, Տարածքում հանդիպող սողուններից ՀՀ Կարմիր գրքում գրանցված է միայն հազվագյուտ հանդիպող Անդրկովկասյան մողեսիկը (*Eremiaspleskei*): Ուսումնասիրվող տարածքում կան ՀՀ Կարմիր գրքում գրանցված միջատների 5 տեսակներ (Աղյուսակ 5-7): Տարածքում հանդիպող սողուններից ՀՀ Կարմիր գրքում գրանցված է միայն հազվագյուտ հանդիպող Անդրկովկասյան մողեսիկը (*Eremias pleskei*):

Տարածաշրջանում կան փոքր կաթնասուններ, որոնք ապրում են բներում: Տարածքով անցնում են նաև ավելի մեծ կաթնասուններ՝ գայլեր, շնագայլեր, կզաքիսներ և աֆրիկյան վայրի կատուներ: Վերջինս գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Հիմնվելով «Խոսքովի անտառ» արգելոցի կենդանական աշխարհի մասին առկա տեղեկությունների վրա, կարելի է ենթադրել, որ տարածքով անցնում են նաև կոճղավոր կենդանիներ, ինչպես օրինակ՝ մուֆլոնը, բեզուարյան այծը: Ազդեցության գնահատման համար ենթադրվել է, որ այդ կենդանիները ներկա են: Ստորև բերված

աղյուսակներում նշված են ուսումնասիրությունների արդյունքում գրանցված **կաթնասունների և թռչունների** տեսակային կազմը, ինչպես նաև գրականության տվյալները.

Աղյուսակ 6-6 Կաթնասունների տեսակային կազմը

Կարգը	Ընտանիքը	Տեսակը	1 ²	2 ³	3 ⁴
Eulipotypla	Erinacidae	<i>Erinaceus concolor</i> - Սովորական ոզնի – Southern white-breasted hedgehog	+	+	
Lagomorpha	Leporidae	<i>Lepus europaeus</i> – Նապաստակ-European hare	+	+	
Carnivora	Mustelidae	<i>Martes foina</i> -Քարակզաքիս-Beech marten	+	+	
		<i>Meles meles</i> – Փոքրուղ - Badger	+	+	
	Canidae	<i>Canis Lupus</i> – Գայլ - Wolf	+	+	
		<i>Canis aureus</i> – Շնագայլ - Jackal	+	+	
		<i>Vulpes vulpes</i> – Սովորական աղվես - Fox	+	+	
	Felidae	<i>Velislibuca</i> -Տափաստանային կատու- Wild cat	+	+	+
Rodentia	Cricetidae	<i>Cricetulus migratorius</i> -Մոխրագույն համստերիկ– Gray hamster		+	
		<i>Microtus socialis</i> –Հասարակական դաշտամուկ – Social vole	+	+	
	Muridae	<i>Sylvaemus (Apodemus) sylvaticus</i> - Անտառային մուկ– Wood mouse		+	
	Allactagidae	<i>Allagtaga elater</i> - Փոքր ճագարամուկ–Small five-toed jeroba	+	+	+
	Gerbillidae	<i>Meriones Vinogradovi</i> -Վինոգրադովի ավազամուկ –Vinogradov's jird	+	+	

Հետազոտվող տարածաշրջանի ուսումնասիրությունների ընթացքում գրանցված, ինչպես նաև գրականության մեջ առկա տվյալ տարածքում հանդիպող բոլոր թռչնատեսակներին վերաբերվող տվյալներն ընդհանրացված են ստորև բերված աղյուսակում.

²Գրականության և հավաքածուների տվյալների

³Դաշտային ուսումնասիրությունների տվյալներ

⁴ՀՀ Կարմիր գիրք

Աղյուսակ 6-7 Թռչունների տեսակային կազմը

Թռչուններ			Գրակ. տվյալներ	Մեր տվյալները	Պատահակա ն հանդիպող	Հայաստանում նստակյաց	Հայաստանում բնադրող/չվող	Ուսումնասիրվող տարածքում բնադրվող	Կարմիր գիրք (+) և միջ. Կարմիր ցուցակ (++)
1. Ciconia	White Stork	Սպիտակ	-	+	+	+	-	-	-
2. Pernis apivorus	Honey Buzzard	Կրետակեր	-	+	+	-	+	-	-
3. Gypaetus barbatus	Bearded Vulture	Գառնանգղ	+	+	+	+	-	-	+
4. Neophron percnopterus	Egyptian Vulture	Գիշանգղ	+	+		-	+	-	++
5. Gyps fulvus	Griffon Vulture	Սպիտակագլու լիս անգղ	+	+		+	-	-	+
6. Circaetus gallicus	Short-toed Eagle	Օձակեր արծիվ	-	+		-	+	-	+
7. Accipiter nisus	Eurasian Sparrowhawk	Լորաճուռակ	+	+		-	+	-	-
8. Accipiter gentilis	Northern Goshawk	Ցախաքլորառ քս	-	+	+	+	-	-	+
9. Buteo rufinus	Long-legged Buzzard	Տափաստանա յին ճուռակ	+	+		+	-	+	-
10. Aquila chrysaetos	Golden Eagle	Քարարծիվ	+	+		+	-	-	+
11. Falco tinnunculus	Common Kestrel	Մովորական հողմավար բազե	-	+		+	-	+	-
12. Coturnix coturnix	Common Quail	Լոք	+	+		-	+	+	-

Թռչուններ			Գրակ. տվյալներ	Մեր տվյալները	Պատահակա ն հանդիպող	Հայաստանում նստակյաց	Հայաստանում բնադրող	Ուսումնասիրվող տարածքում բնադրվող	Կարմիր գիրք (+) և միջ. Կարմիր ցուցակ (++)
13. Alectoris chukar	Chukar	Քարակաքավ	+	+		+	-	+	-
14. Columba livia	Rock Pigeon	Թխակապույտ աղավնի	+	+		+	-	+	-
15. Columba oenas	Stock Pigeon	Հոբալ	-	+	+	+	-	-	-
16. Cuculus canorus	Common Cuckoo	Սովորական կկու	+	+		-	+	+	-
17. Apus apus	Common Sswift	Սև մանգաղաթև	+	+		-	+	-	-
18. Merops apiaster	European Bee-eater	Ոսկեգույն մեղվակեր	+	+		-	+	+	-
19. Coracias garrulus	European Roller	Ներկարար	-	+		-	+	-	++
20. Upupa epops	Hoppoe	Հոպոպ	+	+	+	-	+	-	-
21. Dendrocopos syriacus	Syrian Woodpecker	Սիրիական փայտփոր	-	+	+	+	-	-	-
22. Calandrella rufescens	Lesser Short-toed Lark	Մոխրագույն արտույտ	+	+		-	+	+	-
23. Alauda arvensis	Eurasian Skylark	Դաշտային արտույտ	+	-		+	-	-	-
24. Calerida cristata	Crested Lark	Փուփուլավոր արտույտ	+	+		+	-	+	-
25. Ptyonoprog nerupestis	Crag Martin	Ժայռային ծիծեռնակ	+	+		-	+	+	-

Թռչուններ			Գրակ. տվյալներ	Մեր տվյալները	Պատահակա ն հանդիպող	Հայաստանում նստակյաց	Հայաստանում բնադրող/չվող	Ուսումնասիրվող տարածքում բնադրվող	Կարմիր գիրք (+) և միջ. Կարմիր ցուցակ (++)
26. Hirundo rustica	Barn Swallow	Գյուղական ծիծեռնակ	-	+		-	+	-	-
27. Delichon urbica	House Martin	Քաղաքային ծիծեռնակ	+	+	+	-	+	-	-
28. Motacilla alba	White wagtail	Սպիտակ խաղտոնիկ	+	+		+	-	-	-
29. Lanius collurio	Red-backed Shrike	Ժուլան	+	+		-	+	+	-
30. Lanius senator	Woodchat Shrike	Կարմրակատար շամփրուկ	-	+		-	+	+	+
31. Irania gutturalis	White-throated Robin	Սպիտակափող սոխակ	-	+		-	+	+	+
32. Caprimulgus europaeus	Eurasian Nightjar	Այծկիթ	-	+		-	+	+	-
33. Phoenicurus phoenicurus	Common Redstart	Մովորական կարմրատուտ	+	+	+	-	+	-	-
34. Saxicola torquata	Common Stonechat	Սևազլուխ չքչքան	+	+		-	+	+	-
35. Oenanthe isabellina	Isabelline Wheatear	Պարող քարաթռչնակ	+	+		-	+	+	-
36. Oenanthe hispanica	Black-eared Wheatear	Արևելյան սևախայտ քարաթռչնակ	-	+		-	+	+	
37. Oenanthe finschii	Finsch's Wheatear	Սևավիզ քարաթռչնակ	+	+		-	+	+	

Թռչուններ			Գրակ. տվյալներ	Մեր տվյալները	Պատահակա ն հանդիպող	Հայաստանում նստակյաց	Հայաստանում բնադրող	Ուսումնասիրվող տարածքում բնադրվող	Կարմիր գիրք (+) և միջ. Կարմիր ցուցակ (++)
38. Monticola solitarius	Blue Rock-thrush	Կապույտ քարակեռնեխ	-	+		-	+	+	
39. Turdus merula	Blackbird	Սև կեռնեխ	-	+		+	-	-	-
40. Hippolais pallida	Olivaceous Warbler	Դալուկ մորեհավ	+	+		-	+	+	
41. Hippolais languida	Upcher's Warbler	Անապատայի ն մորեհավ	+	+		-	+	+	
42. Sylvia communis	Common Whitethroat	Մոխրագույն շահրիկ	-	+		-	+	-	
43. Muscivora striata	Spotted Flycatcher	Մոխրագույն ճանճորս	-	+	+	-	+	-	
44. Parus major	Great Tit	Մեծ երաշտահավ	+	+	+	+	-	-	-
45. Sitta neumayer	Western Rock Nuthatch	Ժայռային փոքր սիտեղ	+	+		+	-	+	-
46. Emberiza melanocephala	Black-headed Bunting	Սևագլուխ դրախտապան	-	+		-	+	+	
47. Emberiza cia	Rock Bunting	Լեռնային դրախտապան	+	+		+	-	+	+
48. Emberiza buchanani	Grey-necked Bunting	Ժայռային դրախտապան	-	+		-	+	+	+
49. Serinus pusillus	Fire-fronted Serin	Կարմրաճակատ սերինոս	-	+		+	-	-	-
50. Fringilla coelebs	Chaffinch	Ամուրիկ	+	+	+	+	-	-	-

Թռչուններ			Գրակ. տվյալներ	Մեր տվյալները	Պատահակա ն հանդիպող	Հայաստանում նստակյաց	Հայաստանում բնադրող	Ուսումնասիրվող տարածքում բնադրվող	Կարմիր գիրք (+) և միջ. Կարմիր ցուցակ (++)
51. Carduelis chloris	Green finch	Կանաչ սերինոս	-	+	+	+	-	-	
52. Petronia brachydactyla	Pale Rock Sparrow	Կարճամատ ճնճղուկ	+	+		-	+	+	
53. Rhodopechys sanguineus	Asian Crimson-winged Finch	Կարմրաթև ոսպնուկ	-	+		+	-	+	+
54. Petronia petronia	Rock Sparrow	Ժայռային ճնճղուկ	+	+		-	+	+	-
55. Passer domesticus	House Sparrow	Տնային ճնճղուկ	+	+	+	+	-	-	-
56. Passer montanus	Tree Sparrow	Դաշտային ճնճղուկ	+	+		+	-	+	-
57. Carduelis cannabina	Eurasian Linnet	Կանեփնուկ	-	+		+	-	-	
58. Sturnus vulgaris	Common Starling	Մովորական սարյակ	+	+		+	-	-	-
59. Sturnus roseus	Rosy Starling	Վարդագույն սարյակ	+	+		-	+	+	
60. Corvus monedula	Eurasian Jackdaw	Մովորական ճայ	+	+		+	-	-	
61. Corvus frugilegus	Rook	Մերմնաքաղ	+	+		+	-	-	
62. Pica pica	Magpie	Մովորական կաչաղակ	+	+		+	-	+	-

Թռչուններ			Գրակ. տվյալներ	Մեր տվյալները	Պատահակա ն հանդիպող	Հայաստանում նստակյաց	Հայաստանում բնադրողչվող	Ուսումնասիրվող տարածքում բնադրվող	Կարմիր գիրք (+) և միջ. Կարմիր ցուցակ (++)
63. Corvus corone	Hooded Crow	Մոխրագույն ագռավ	+	+		+	-	-	-
64. Corvux corax	Raven	Սևագռավ	+	+		+	-	-	-

Վեղի ջրամբարի համար նախատեսվող տարածքում հանդիպում են սողունների հետևյալ տեսակները՝

Օձեր

- Կովկասյան գյուրգա-Macrovipera lebetina obtusa
- Կարմրավոր սահնօձ-Dolichophis schmidtii
- Զիթապտղագույն սահնօձ- Platyceps najadum
- Հայկական էրենիս- Eirenis punctatolineatus

Սողուններ

- Կովկասյան ազամա- Laudakia caucasia
- Շտրաուխի մողեսիկ-Eremias strauchi
- Անդրկովկասյան մողեսիկ-Eremias pleskei

Սողուններից շատերը բազմանում են, բներ դնում գետնի վրա, ժայռերին կամ ավերին կամ օգտագործում են ջրամբարի սահմաններում գտնվող բները կամ թաքստոցները:

Տեղանքը հարուստ է նաև անողնաշարավորների, այդ թվում՝ մեղուների, թիթեռների, մրջյունների և երկթևանիների տեսանկյունից: Ուսումնասիրվող տարածքում կան ՀՀ Կարմիր գրքում գրանցված միջատների 5 տեսակներ:

Աղյուսակ 6-8 Ուսումնասիրվող տարածքում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված միջատների ցանկը

Դաս	Կարգ	Տեսակ
Միջատներ	Ուղղաթևեր - orthoptera	Phytodrymadusa armeniaca Ramme
	Կարծրաթևեր կամ բզեզներ - coleoptera	Tanyproctus vedicus Kalashian
		Craspedonotus permodicus Falderman
	Թեփուկաթևեր կամ թիթեռներ - lepidoptera	Tomares romabnovi Christoph
	Երկթևեր - diptera	Satanas gigas Eresmann

Աղյուսակ 6-9 Ուսումնասիրվող տարածքում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում և միջազգային կարմիր ցուցակում գրանցված կենդանատեսակներ

Դաս	Տեսակ	ՀՀ Կարմիր գիրք	Միջազգային կարմիր ցուցակ (IUCN)
Սողուններ	Անդրկովկասյան մողեսիկ - Eremias pleskei	+	+
Թռչուններ	Գառնանգղ - Gypaetus barbatus	+	
	Գիշանգղ - Neophron percnopterus	+	+
	Սպիտակագլուխ անգղ - Gyps fulvus	+	
	Օձակեր արծիվ - Circaetus gallicus	+	
	Ցախաքլորառու - Accipiter gentilis	+	
	Քարարծիվ - Aquila chrysaetos	+	
	Ներկարար - Coracias garrulus	+	+
	Կարմրակատար շամփրուկ - Lanius senator	+	
	Սպիտակավիղ սոխակ - Irania gutturalis	+	
	Ժայռային դրախտապան - Emberiza buchanani	+	
	Կարմրաթև նսպնուկ - Rhodopechys sanguineus	+	
Կաթնասուններ	Փոքր ճագարամուկ - Allagtaga elater	+	
Միջատներ	Ուղղաթևեր - orthoptera	+	+

Դաս	Տեսակ	ՀՀ Կարմիր գիրք	Միջազգային կարմիր ցուցակ (IUCN)
	Կարծրաթևեր կամ բզեզներ - coleoptera Tanyproctus vedicus Kalashian	+	+
	Կարծրաթևեր կամ բզեզներ - coleoptera Craspedonotus permodicus Falderman	+	+
	Թեփուկաթևեր կամ թիթեռներ - lepidoptera	+	+
	Թեփուկաթևեր կամ թիթեռներ - lepidoptera	+	+

Ներտնտեսային ռոտզման ցանցի կառուցման գործունեությունը բնական միջավայրի փոփոխություն չի ենթադրում: Ներտնտեսային ցանցերի կառուցման աշխատանքներն իրականացվելու են գյուղատնտեսական դաշտերի երկայնքով: Այս գործունեության բուն տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիները:

6.7.3. Պատմամշակութային միջավայր

Արարատի մարզի պատմամշակութային հուշարձաններից են Լուսառատ գյուղից 1,6 կմ հյուսիս-արևմուտք գտնվող բլուրների վրա տեղադրված Խոր Վիրապ վանական համալիրը և Արտաշատ հնավայրը, Դվին հնավայրը՝ Հնաբերդ և Վերին Արտաշատ գյուղերի միջև ընկած բլրի վրա, Տափի բերդը՝ ամրոցը եկեղեցիով (որը կոչվում է Գևորգ Մարգարետունու անունով)՝ Ուրցաձոր գյուղից 6-6,8 կմ հյուսիս-արևելք, Հավուց Թառ վանական համալիրը՝ Գառնի գյուղից 2,8-3,4 կմ արևելք, XII դարի Սուրբ Կարապետ վանքը՝ Լանջառ գյուղից 5,7-6,3 կմ հյուսիս-արևմուտք, Կաթավաբերդը (Գեղիի կամ Քեղիի բերդ)՝ Գառնի գյուղից 12,3-13 կմ հարավ-արևելք, Աղջոց վանքը՝ Գառնի գյուղից 6,1-6,5 կմ հարավ-արևելք:

Հիմք ընդունելով վերականգնման / արդիականացման ծրագրում ներառված ցանցերի տեղադիրքերը՝ ծրագրի իրականացման տարածքներն ակնհայտորեն հեռու են պատմական և մշակութային հուշարձաններից, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներից: Արարատի մարզում գտնվող հատուկ պահպանվող տարածքները Խոսրովի անտառի պետական արգելոցը և «Գոռավանի ավազուտներ» արգելավայրը դուրս են նախագծի ազդեցության գոտուց և սպասվող աշխատանքների արդյունքում որևէ ազդեցություն չեն ունենա:

6.7.4. Ազդակիր տարածքի պատմամշակութային հուշարձանները

Ստորև ներկայացվում է ՀՀ Արարատի մարզի ազդակիր տարածքում առկա պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն ըստ բնակավայրերի:

Այգավան բնակավայրում առկա են 18-19-րդ դարերի եկեղեցի, 12-16-րդ դարերի խաչքարեր, 12-13-րդ դարերի աղբյուր, 9-16-րդ դարերի գերեզմանոցներ, մթա 3-րդ հազարամյակի բնակատեղի և այլն:

Ավշար բնակավայրում առկա են մթա 2-1 հազարամյակի ամրոց, 12-13-րդ դարերի եկեղեցի, 12-16-րդ, 12-17-րդ, 19-20-րդ դարերի գյուղատեղիներ, 12-17-րդ դարերի գերեզմանոց, 13-րդ դարի խաչքարեր, երկրորդ աշխարհամարտում զոհվածներին նվիրված հուշաղբյուր և հուշարձան և այլն:

Արարատ բնակավայրում առկա է 10-17-րդ դարերի «Խնուտ» գյուղատեղի, 10-17-րդ դարերի գերեզմանոց, 2 եկեղեցի՝ 12-13-րդ և 19-րդ դարերի, 12-15-րդ դարերի խաչքարեր, 15-16-րդ դարերի տապանաքարեր և այլն:

Ուրցաձոր բնակավայրում առկա է 10-13-րդ դարերի «Տափի բերդ» ամրոցը («Գևորգ Մարգարետունի»), 4-13-րդ դարերի «Ուրծի բերդ» ամրոցը, 8 կիսավեր եկեղեցի՝ 5-6-րդ, 10-13-րդ, 13-14-րդ, 14-րդ, 14-15-րդ դարերի, 14-17-րդ դարերի «Ուրծի» քաղաքատեղի, 10-16-րդ դարերի գյուղատեղի,

10-17-րդ դարերի տապանաքարեր, 12-17-րդ դարերի խաչքարեր և գերեզմանոց, 15-17-րդ դարերի «Վանք» եկեղեցական համալիր և այլն:

Վեդի բնակավայրում առկա է 19-20-րդ դարերի գերեզմանոց:

Գոռավան բնակավայրում առկա է մթա 2-1 հազարամյակի դամբարանադաշտ:

Պատմամշակութային բոլոր հուշարձանները շինարարական տարածքներից հեռու են գտնվում և բացասական ազդեցության չեն ենթարկվի:

7. ԾՐԱԳՐԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

7.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արարատի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է: Մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Երասխ-Արցախ ավտոմայրուղին և Երևան-Երասխ երկաթուղին: Մարզի տարածքում է գտնվում Խոսրովի պետական արգելոցը (ծովի մակերևույթից 1600-2300մ բարձրության վրա): 2018թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 13.1%,
- գյուղատնտեսություն՝ 14.0%,
- շինարարություն՝ 5.8 %,
- մանրածախ առևտուր՝ 3.9 %,
- ծառայություններ՝ 1.7 %:



Գծապատկեր 7-1 Արարատի մարզի քարտեզը

Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է: Այն հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների արտադրություններն են, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունն, այլ ոչ մետաղական հանքային

արտադրատեսակների արտադրությունը: Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ երեք ճյուղերը. ա) սննդամթերքի և խմիչքների արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ակոհոլային խմիչքների արտադրություն), բ) ծխախոտային արտադրատեսակների (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա), գ) հիմնային մետաղների արտադրություն դ) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ապոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

7.1.1. Ազդակիր համայնքներ

Արարատ խոշորացված համայնքի կազմում են գտնվում հետևյալ վարչական բնակավայրերը՝

Արարատը⁵ (մակերես՝ 44.11կմ², բնակչություն՝ 8275) մարզկենտրոնից գտնվում է 20 կմ հեռավորության վրա: Գյուղն ունի 2315 տնտեսություն: Ունի 3 դպրոց, մանկապարտեզ, կապի հանգույց, ամբուլատորիա, Սպարապետի անվան թանգարան: Ոռոգումը կատարվում է Ազատ և Արաքս գետերի ջրերով, խմելու ջուրը բերվում է Գառնուց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Զբաղվում են են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ՝ լոլիկ, տաքդեղ, սմբուկ, ձմերուկ, սեխ, ինչպես նաև հացահատիկ: Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Պահուստային հողերը գլխավորապես օգտագործվում են որպես արոտավայրեր և խոտհարքեր: Համայնքի հիմնախնդիրների մեջ գլխավորը ոռոգման ջուրն է և ոռոգման, խմելու ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

Այգավանը (մակերեսը՝ 21.2կմ², բնակչությունը՝ 4500) գտնվում է Արարատի մարզի Արարատի տարածաշրջանում: Մարզկենտրոնից գտնվում է 12 կմ հեռավորության վրա : Գյուղը հիմնադրվել է 1828թ-ին: Գյուղն ունի 1300 տնտեսություն: Զբաղվում են այգեգործությամբ, անասնաբուծությամբ: Ունի միջնակարգ դպրոց, բուժկետ, մշակույթի տուն, գրադարան, մսուր-մանկապարտեզ: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 570 հա: Գյուղատնտեսական հողհանդակները ոռոգվում են, դրանք զբաղեցնում են ողջ մակերեսի 70%: Համայնքի հողերի օգտագործվում են որպես պտղատու և խաղողի այգիներ, համապատասխանաբար կազմելով 65 հա և 169.9 հա: Վարելահողերը զբաղեցնում են մոտ 3627 հա: Զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ՝ լոլիկ, տաքդեղ, սմբուկ, ձմերուկ, սեխ, ինչպես նաև հացահատիկ: Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Պահուստային հողերը յուրացվում են որպես այգիներ, վարելահողեր: Համայնքի հիմնախնդիրներից է ոռոգման և խմելու ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների , մշակույթի տան և մսուր-մանկապարտեզի վերանորոգումը:

Ավշարը (Մակերես՝ 17.5կմ², բնակչություն՝ 4390) մարզկենտրոնից գտնվում է 13 կմ հեռավորության վրա: Գյուղն ունի 1604 տնտեսություն: Ունի միջնակարգ դպրոց, ծննդատուն, մշակույթի պալատ, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 1410 հա: Գյուղատնտեսական նշանակության հողերի գրեթե կեսն օգտագործվում է որպես վարելահողեր: Պտղատու և խաղողի այգիները համապատասխանաբար կազմում են 62 և 54 հեկտար: Զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ՝ լոլիկ, տաքդեղ, սմբուկ, ձմերուկ, սեխ, ինչպես նաև հացահատիկ: Պահուստային հողերը հիմնականում օգտագործվում են որպես արոտավայրեր՝ 574հա,

⁵ Այս և մյուս համայնքների վերաբերյալ տվյալների աղբյուրը՝ <http://ararat.mtd.am/about-communities/>

խոտհարքերը զբաղեցնում են 22 հա մակերես: Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ գլխավորը ոռոգման ջրի հիմնախնդիրն է խմելու ջրի ջրագծերի վերանորոգումը: Կարևորվում է գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

Նոյակերտը (մակերես՝ 27.69կմ², բնակչություն՝ 2860) մարզկենտրոնից գտնվում է մոտ 20 կմ հեռավորության վրա: Գյուղն ունի առկա 840 տնտեսություն: Ունի դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, փոստի բաժանմունք: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 1450հա: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 518հա: Ունի պտղատու և խաղողի այգիներ, համապատասխանաբար կազմելով 56հա: Զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ, ինչպես նաև հացահատիկ: Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է խմելու ջրագծի ներքին ցանցի հիմնախնդիրը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

Վեդի խոշորացված համայնքի կազմում են գտնվում հետևյալ վարչական բնակավայրերը՝

Վեդին (մակերես՝ 22.9կմ², բնակչություն՝ 14800) գտնվում է Վեդի գետի աջ ափին, Երևանից 48 կմ հեռավորության վրա: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակվող արդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը դաշտավարությունն է: Ունի 2 միջնակարգ և 1 ավագ դպրոց, գրադարաններ, երաժշտական դպրոց, ուսումնարան, քոլեջ, մանկապարտեզներ, մարզական դպրոց, մշակույթի պալատ, հիվանդանոց, ծննդատուն, շտապ օգնության և համաճարակային կայաններ, կապի հանգույց, հայրենագիտական թանգարան: Գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են համայնքի վարչական մակերեսի մոտ 75%՝ 1740 հա: Մասնագիտացման ուղղությունը խաղողագործությունն է և պտղաբուծությունը: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 540 հա: Ունի պտղատու և խաղողի այգիներ, որոնք համապատասխանաբար զբաղեցնում են 167 և 160 հեկտար: Զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային, հացահատիկային և կերային կուլտուրաներ: Ունի արոտավայրեր՝ 150 հա և խոտհարքեր՝ 11հա: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման և խմելու ջրի հիմնախնդիրը, ճանապարհների վերանորոգումը, փողոցների լուսավորվածությունը, գործազրկությունը:

Դաշտաքարը (մակերես՝ 3.3կմ², բնակչություն՝ 526) մարզկենտրոնից գտնվում է 19 կմ հեռավորության վրա: Գյուղն ունի առկա 154 տնտեսություն: Ունի դպրոց, բուժկետ, կապի հանգույց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 277հա: Գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են: Գյուղատնտեսական նշանակության հողերի մոտ 70% օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 180հա: Պտղատու և խաղողի այգիները զբաղեցնում են համապատասխանաբար 12.5 և 11 հեկտար: Զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ, պտուղներ, ինչպես նաև հացահատիկ: Արոտավայրերը կազմում են 6հա: Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Պահուստային հողերը նույնպես յուրացվում են որպես այգիներ, վարելահողեր: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը և ոռոգման, խմելու ջրի ջրագծերի վերանորոգումը:

Ուրցաձորը մարզկենտրոնից գտնվում է 26 կմ հեռավորության վրա: Գյուղից 7 կմ հյուսիս-արևմուտք գտնվում է Խոսրովի անտառի արգելոցը: Գյուղն ունի առկա 806 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, հիվանդանոց, կապի հանգույց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը:

Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 5944հա: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 765 հա: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ, ծխախոտագործությամբ: Մշակում են բանջարաբուստանային, հացահատիկային և կերային կուլտուրաներ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

Գոռավանը (մակերես՝ 29.3կմ², բնակչություն՝ 2910) մարզկենտրոնից գտնվում է 19 կմ հեռավորության վրա: Գյուղն ունի առկա 749 տնտեսություն: Ունի դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 90%: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 390 հա: Ունի պտղատու և խաղողի այգիներ: Զբաղվում են այգեգործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ, ինչպես նաև ծխախոտ, հացահատիկ: Պահուստային հողերը օգտագործվում են որպես խոտհարքեր և արոտավայրեր, համապատասխանաբար կազմելով 13 և 628 հեկտար: Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը և ասֆալտապատումը:

Ստորև բերված Աղյուսակ 6-1-ը ներկայացնում է շահառու համայնքների ժողովրդագրական տվյալները 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ:

Աղյուսակ 7-1 Շահառու համայնքների ժողովրդագրական տվյալները 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ

Մարզ	Բնակավայր	Մշտական բնակչություն 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ*	Տնային տնտեսությունների /SS/ թիվը***	Ընտանեկան նպաստ ստացող SS թիվը***	Մշտական թիվը 2011թ-ի մարդահամարի տվյալներով**		
					Ընդամենը	Տղամարդ	Կին
Արարատ	Գոռավան	2,634	749	62	2,340	1,165	1,175
	Վեդի	11,675	2,910	400	11,3840	5,594	5,790
	Դաշտաքար	561	154	8	485	246	239
	Ուրցաձոր	3,152	806	88	2,587	1,284	1,303
	Նոյակերտ	1,907	840	90	1,634	816	818
	Արարատ	20,395	2,315	121	20,235	9,460	10,775
	Այգավան	4,256	1,300	70	3,914	1,971	1,943
	Ավշար	5,194	1604	72	4,929	2,451	2,478

*https://www.armstat.am/file/Map/MARZ_03.pdf; **<https://www.armstat.am/file/doc/99485653.pdf>; ***<http://ararat.mtad.am/npast-hratap-cucakner/>

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒՄ

Շինարարության փուլում հնարավոր է դիտվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության մի շարք բացասական երևույթները, ինչպես օրինակ՝ մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների աղտոտում, հողերի և լանդշաֆտի դեգրադացիա, հողերի էրոզիա, որը կարող է առաջանալ փորված/հանված հողի և շինարարական թափոնների ոչ պատշաճ հեռացման/տեղադրման, շինարարության ընթացքում վառելիքաքսուկային և այլ նյութերի արտահոսքի, ժամանակավոր շինհրապարակների օգտագործման (շին. ճամբարներ, մեքենաների ավտոկայանատեղեր, պահեստավայրեր և այլն), հանքավայրերի շահագործման հետևանքով, օդի ժամանակավոր աղտոտում՝ կապված շինարարության ընթացքում բեռնատարների երթևեկության գրաֆիկի հետ, փորման աշխատանքների ժամանակ աղմուկ և տատանումներ, երթևեկության խաթարում՝ պայմանավորված շին.մեքենաների և սարքավորումների շարժման հետ, ինչպես նաև հնարավոր ազդեցություններ բուսածածկի վրա:

Ծրագրի շինարարության փուլում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները ներկայացվում են ստորև:

(ա) Շրջակա միջավայրի օդի աղտոտում

Շինարարական աշխատանքների ընթացքում փորման-բեռնման աշխատանքների արդյունքում առաջանում են անօրգանական փոշու արտանետումներ: Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի աշխատանքի ընթացքում առաջանում են փոշու /երթևեկության ժամանակ/ և դիզելային վառելիքի այրման ընթացքում ծխազագերի արտանետումներ: Եռակցման աշխատանքների ընթացքում առաջանում են եռակցման աերոզոլի և մանգանի օքսիդների արտանետումներ: Բետոնի խառնուրդի համար տեղադրվում են բետոնախառնիչներ, որոնց աշխատանքի ընթացքում առաջանում են ցեմենտի փոշու արտանետումներ:

Ստորև ներկայացված են արտանետումների հիմնական աղբյուրները.

- անօրգանական փոշու արտանետումներ փորման-բեռնման աշխատանքների ժամանակ,
- արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման և երթևեկության ժամանակ,
- արտանետումներ բետոնի խառնուրդի պատրաստման աշխատանքների ժամանակ,
- բենզինի գոլորշի,
- արտանետումներ գողման աշխատանքների ժամանակ:
- օդի աղտոտում հողի հանման և բեռնման և շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- խողովակաշարի խցանում և ջրի արտահոսք համակարգից շահագործման ժամանակ:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են բնակելի տարածքներից զգալի հեռավորության վրա, վնասակար նյութերը չեն կարող ազդել բնակավայրերի օդային ավազանի աղտոտվածության վրա:

(բ) Ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ

Ընդհանուր առմամբ, շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները կարող են արտահայտվել՝ գետի հունում անմիջական շինարարական աշխատանքների իրականացմամբ, կախված նյութերով, առարկաներով, նավթամթերքներով գետի ջրի աղտոտմամբ, շինհրապարակներում պահեստավորված շինարարական նյութերով, շինարարական հոսքաջրերի առաջացմամբ, ինչպես նաև շինարարության ընթացքում աշխատողների կենսագործունեության արդյունքում տնտեսա-կենցաղային հոսքաջրերի և պինդ թափոնների առաջացմամբ:

(գ) Ջրօգտագործում և ջրահեռացում

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է վարչական աշխատողների և բանվորների խմելու, կենցաղային/տնտեսական նպատակների համար, ինչպես նաև շինարարական հրապարակների ջրցանի, տրանսպորտային միջոցների սպասարկման համար:

Ջրցանի համար նախատեսված ջուրը բերվելու է ջրցան մեքենաների միջոցով, իսկ խմելու համար ջուրը բերվելու է այդ նպատակի համար նախատեսված տարողություններով:

Շինարարության փուլում կենցաղային կեղտաջրերը հավաքվելու են անջրանցիկ նյութերից կառուցված կեղտաջրերի հավաքման հորում /ԿՀՀ/, որը շինհրապարակի երկարությամբ պետք է տեղափոխվի: Ելնելով կեղտաջրերի հաշվարկային ծավալներից՝ նախատեսվում է կառուցել 50մ³ օգտակար ծավալով հոր, որը կապահովի 7-օրյա աշխատանքը: Նախատեսվում է շաբաթական մեկ անգամ հատուկ մեքենաներով արտահանել հորի պարունակությունը տեղական մարմինների հետ համաձայնեցված կոյուղու կոլեկտոր:

Վերը նշված ազդեցությունը կկրի ժամանակավոր բնույթ, սակայն կմեղմացվի Հավելված 1-ում՝ Բնապահպանական կառավարման պլանում, ներկայացված միջոցառումների ժամանակին և պատշաճ իրականացման արդյունքում:

(դ) Հողային աշխատանքներ

Ջրատարների անցկացման և խրամուղիների փորման աշխատանքները, որոնք իրականացվելու են ազդակիր համայնքներում, կարող են ժամանակավոր վնասակար ազդեցություն ունենալ ոռոգման համակարգի միջանցքի հողային ծածկույթի և շրջապատող բուսական ծածկույթի վրա: Հանված գրունտի պահպանման հետևանքով, մինչև ետլիցք կատարելը կարող է վնասվել հողային ծածկույթը: Մինչև հողային աշխատանքների իրականացումը խրամուղու տարածքի երկայնքով բուսական ծածկույթը պետք է մաքրվի, ներառյալ՝ թփուտների հեռացումը:

Պահանջվում է խրամուղու տարածքի երկայնքով կատարել բուսաշերտի կտրում և պահեստավորում: Գրունտը և բուսահողը պետք է տեղադրել առանձին: Ըստ բուսաբանական հետազոտությունների, ծրագրի համար նախատեսված տարածքներում գտնվող բուսատեսակները ընդգրկված չեն ՀՀ Կարմիր Գրքում:

(ե) Շինարարական նյութերի հանում

Շինարարության համար պահանջվող լցանյութերը նախընտրելի է ձեռք բերել արտոնագրված մատակարարներից և շահագործող աղբյուրներից: Կապալառուն ունի ազատ ընտրության իրավունք և գետի հունից հանույթի կատարումը, կամ հանույթի սեփական աղբյուրի բացումը կարող է հանգեցնել լանդշաֆտի վատթարացման, էրոզիայի, տեղանքի բնական տեսքի կորստի, ջրի որակի վատացման և ջրանցքների ավիամերձ հատվածներում էրոզիոն ռիսկերի մեծացման:

(զ) Շինարարական թափոնների առաջացում

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, ծրագրի ազդակիր տարածքներում առաջացող տարբեր տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա, մասնավորապես՝ առաջացնելով լանդշաֆտի փոփոխություն, աղտոտել ջրային և հողային ռեսուրսները և մթնոլորտային օդը, ինչպես նաև ազդել մարդկանց առողջության վրա:

Թափոններ կարող են առաջանալ քիչ քանակությամբ մնացորդային հողային զանգվածների տեսքով, քանի որ փորված հողի և բուսահողի հիմնական մասն օգտագործվում է ետլիցք կատարելու համար: Կառաջանան նաև հանված ասֆալտի թափոններ, որոնք պետք է հեռացվեն շինհրապարակից շինարարական թափոնների համար նախատեսված վայր: Խողովակաշարերի անցկացման տարածքներում, որտեղ առկա է բուսական ծածկ կարող է պարունակել խոտ և թփուտներ, որոնք ևս հանդիսանում են թափոններ և պետք է հեռացվեն շինհրապարակից: Թափոնների մյուս տեսակները, որոնք առաջանում են ընդհանուր շինարարական գործողություններից, նույնպես ենթադրվում են ոչ մեծ քանակությամբ և կարող են ներառել՝ մետաղական և պլաստիկ դատարկ տարաներ, շինարարական աղբ, շինհրապարակներում կամ բակերում հավաքված կենցաղային աղբ, ինչպես նաև վտանգավոր թափոնների տեսակներ, օրինակ՝ վառելիքաքսուկային յուղեր, ներկեր, լուծիչներ, մեքենաների ֆիլտրեր, մարտկոցներ և անվադողեր:

8.2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Շինարարության հետ կապված ժամանակավոր ազդեցություններ

ա. երթևեկության աճ

Համայնքներում սպասվում է կարճաժամկետ երթևեկության աճ՝ կապված շինարարական տրանսպորտային միջոցների շարժման և մեքենաների շահագործման հետ: Մա կարող է խաթարել տեղական համայնքների խաղաղ կյանքը և երբեմն էլ արգելափակել ճանապարհները:

բ. մուտքի արգելափակում

Իրենց տներին, դաշտերին և գույքին հասնելու անհնարինության կամ անհարմարություն շինարարական ճամբարների, մեքենաների տեղադրման կամ շինարարական աշխատանքների պատճառով:

գ. աղմուկ և փոշի

Մեքենաների աշխատանքը կառաջացնի փոշի և աղմուկ, որը կարող է առողջական խնդիրներ առաջացնել համայնքներում:

դ. առողջական խնդիրներ

Շինարարության ընթացքում անորակ և անհամապատասխան շինանյութերի օգտագործման արդյունքում աշխատողների առողջությանը կարող է վնաս հասցվել:

ե. պատահարներ շինարարական հրապարակում

Շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության կանոնների խախտման պատճառով տեղի ունեցած պատահարները կարող են մարմնական վնաս հասցնել շինհրապարակում գտնվող անձանց, երբեմն նույնիսկ մահացու հետևանքներով:

Հողօգտագործում

Աշխատանքների ընթացքում նախատեսվում է համայնքային հողերի ժամանակավոր օգտագործում:

Ժամանակավոր տեղական զբաղվածություն

ա. Շինարարության փուլում դրական սոցիալական ազդեցությունը հանդիսանում է տեղի չորակավորված աշխատուժի ժամանակավոր զբաղվածության հնարավորությունը: Աշխատուժի մոտ 80%-ը կազմում է տեղի բնակչությունը: Դրանք հիմնականում բանվորներ ու վարորդներն են:

բ. Մակայն, շինարարության փուլում կանայք չեն ունենա ժամանակավոր աշխատանք գտնելու հավասար հնարավորություններ, քանի որ Հայաստանում շինարարության մեջ ավանդաբար կանայք չեն աշխատում:

Ռոռոգման ջրի մատակարարման ընդհատում

Ռոռոգման ժամանակահատվածում իրականացվող շինարարական աշխատանքները կարող են սոցիալ-տնտեսական վնաս հասցնել ազդակիր համայնքներին՝ խաթարելով ոռոգման ջրի մատակարարումն ըստ ժամանակացույցի և վնասելով բերքը:

Շինարարական ճամբարներ

Շինարարական ճամբարները պետք է տեղադրված լինեն համայնքային հողերում, ինչը նախապես պետք է համաձայնեցված լինի համայնքի հետ՝ մասնավոր հողերի օգտագործումից խուսափելու համար: Մակայն, եթե չօգտագործվող համայնքային հողերը մատչելի չլինեն, հողի սեփականատեր համայնքի հետ պետք է կնքվի վարձակալության համաձայնագիր:

Մետաղական կառույցներ

Ջրանցքների վրա երբեմն առկա են ինքնաշեն մետաղական կառույցներ՝ կամրջակներ, ջրաղացներ, որոնք կխանգարեն շինարարական աշխատանքներին և կարող են վնասվել:

Ծրագրի ազդեցության ենթակա համայնքների բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել սույն հաշվետվության բնապահպանական և սոցիալական կառավարման պլանով (ԲՄԿՊ) նախատեսված սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել շինարարության կապալառուն, տեխնիկական վերահսկման խորհրդատուները, հեղինակային վերահսկման խորհրդատու և այլ վերահսկող մարմիններ:

8.3. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶՐԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Վերանորոգված ջրանցքների վերանորոգման արդյունքում շահագործման ընթացքում հնարավոր են հետևյալ բնապահպանական ազդեցությունները.

- Հեղեղում՝ հիդրավիկ կառուցվածքների վատ պահպանման պատճառով,
- Գյուղատնտեսական դաշտերի աղտոտվածություն և վնասում՝ վթարների պատճառով, որոնք հանգեցնում են ոռոգման ջրի որակի վատթարացմանը,
- Թունաքիմիկատների օգտագործման ավելացումը, որը հանգեցնում է ջրանցքների ենթակա տարածքների գյուղատնտեսական դաշտերի և մշակաբույսերի աղտոտմանը:

8.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶՐԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Ազդակիր համայնքներում ոռոգվող հողերի ընդլայնում

Ներտնտեսային ջրանցքների առավել վթարային հատվածների վերականգնման և ոռոգման նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում զգալիորեն կպակասի ջրի կորուստը, որը դրական ազդեցություն կունենա շահառու համայնքների վրա: Հավելյալ ջրաքանակը կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը՝ խթանելով լրաչուցիչ հողատարածքների մշակումը և բարձր բերքատվությամբ առավել շահավետ մշակաբույսերի արտադրությունը:

Ջրօգտագործման մրցակցությունը

Ջրանցքների սպասարկման տարածքի գրեթե բոլոր համայնքներում առկա է ոռոգման ջրի քանակի ընդլայնման պահանջարկ, ուստի մեծ է նաև ջրօգտագործման մրցակցությունը:

9. ՄԵՂՄԱՑՄԱՆ և ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Օրագրի նախագծման, շինարարության և հետագա շահագործման փուլերի համար նախատեսված են մեղմացնող և բարելավող միջոցառումներ, որոնք կձեռնարկվեն կատարողական մարմինների կողմից՝ վերը նշված բնապահպանական և սոցիալական հնարավոր բացասական ազդեցությունները կանխարգելելու և/կամ մեղմացնելու համար:

Բնապահպանական և սոցիալական մեղմացնող միջոցառումների իրականացման պահանջները կներառվեն տեխնիկական մասնագրերում և մրցութային փաստաթղթերում: Այդ միջոցառումները կիրականացվեն շինարարության կապալառուի և համակարգը շահագործող մարմնի կողմից՝ հնարավոր ազդեցություններից խուսափելու, դրանք կանխարգելելու, մեղմացնելու կամ շտկելու համար:

Ազդակիր համայնքները նաև կտեղեկացվեն բողոքների ընթացակարգերի և բողոքների լուծման մեխանիզմների մասին, որոնց միջոցով հասարակությունը կարող է բարձրացնել հարցեր, իր մտահոգություններն ու դժգոհություններն արտահայտել, ապահովել հետադարձ կապ ՋՏՕԻՄ-ի և կապալառուի հետ շինարարության ընթացքի մասին, և ժամանակին և համակարգված կերպով ստանալ պատասխաններ: ՋՏՕԻՄ-ը և կապալառուն կհամակարգեն այս գործընթացը:

9.1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Շինարարության փուլի ընթացքում լանդշաֆտի վատթարացումը, հողերի էրոզիան, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների և հողերի աղտոտումը կանխարգելելու և/կամ նվազագույնի հասցնելու համար նախատեսված համապատասխան միջոցառումները պետք է իրականացվեն կապալառուի կողմից: Այդ աշխատանքները ներառում են՝

- Արդեն իսկ գոյություն ունեցող հանքավայրերի և թափոնների հեռացման վայրերի օգտագործում (նախագծման փուլում ձեռք բերված համապատասխան թույլտվություններում և համաձայնագրերում ամրագրված պայմանների համաձայն), թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի հստակ սահմանում (այնպես, որ այդ վայրերը որևէ վնաս չհասցնեն բուսածածկին և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչներին), որոնք պետք է պահպանվեն շինարարության կապալառուի կողմից:
- 5% թեքությամբ ավերի մակերեսի ամրացում՝ բետոնե շերտով և գաբիոններով՝ հետագա քայքայումից խուսափելու նպատակով, մեծ թեքությունների ամրացում բուսականությամբ, խոտով և այլ բույսերով:
- Վնասված բուսածածկի և սկզբնական վիճակի վերականգնում (աշխատանքները սկսելուց առաջ հողի բերրի շերտը պետք է պատշաճ կերպով հանել և պահել համապատասխան վայրում):
- Վառելիքաքսուկային և քիմիական նյութերի պահեստավորման վայրերի կահավորում համապատասխան պարագաներով՝ հողերի և շրջակա տարածքների աղտոտման վտանգը նվազեցնելու համար:
- Երթևեկության և շինարարական հրապարակների մուտքի և ելքի սկզբունքների ապահովում՝ սահմանելով հստակ երթուղիներ, կայանման վայրեր և աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Շինարարական հրապարակում առաջացած փոշու և աղմուկի նվազեցման միջոցառումներ՝ հատկապես այն դեպքում, երբ աշխատանքներն իրականացվում են բնակելի և հասարակական վայրերի մոտ: Այդ նպատակի համար շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման համար անհրաժեշտ է օգտագործել փակ կամ ծածկով բեռնատար մեքենաներ: Հողային աշխատանքները կատարել փոշեռսիչով կահավորված տեխնիկական միջոցներով և սարքավորումներով: Տրանսպորտային միջոցները և տեխնիկան պետք է պարբերաբար ստուգել, կարգավորել և ապահովել ձայնի իլաջուցիչներով: Շինարարականներն ու մոտեցնող ճանապարհները պետք է պարբերաբար ջրվեն, իսկ խիճը, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածները խոնավացվեն փոշին

նվազեցնելու նպատակով (բացի ձմռանից և տեղումներով առատ ամիսներից): Ծորուն շինանյութերը պետք է պահեստավորվեն ծածկի տակ գտնվող և հատուկ թաղանթով պաշտպանված վայրում:

Օդային ավազանի վրա ազդեցության կանխատեսման և համարժեք հակազդման համար հատուկ նշանակություն ունեն մթնոլորտի դիֆուզիայի, օդում արտանետումների տարածման օրինաչափությունների և դրանց տարածաժամանակային տեղաբաշխման առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Արդյունքները հիմք են ծառայում մթնոլորտի աղտոտման վիճակի օբյեկտիվ գնահատման և մթնոլորտի մաքրության ապահովման հնարավոր ձեռնարկումների համար:

Ընդհանրապես մթնոլորտի աղտոտումը պայմանավորված է արտանետվող խառնուրդի քանակից, մթնոլորտի վիճակից, առանձնապես՝ ջերմաստիճանային դաշտից, դիֆուզիայի ինտենսիվությունից, քամու արագությունից և այլն: Իր հերթին, մթնոլորտի վիճակը լեռնային երկրներում կախում ունի մակերևույթի խորդուբորդությունից:

Շինարարական ճամբարներ

Յուրաքանչյուր շինարարական ճամբար պետք է ստեղծվի հսկողության խորհրդատուի բնապահպանության մասնագետների հետ խորհրդակցելուց հետո: Շինարարական ճամբարները պետք է կազմակերպվեն ուղեգծին զուգահեռ՝ բուսածածկից զուրկ տարածքներում: Ժամանակավոր շինությունները նույնպես պետք է տեղադրվեն ջրատարների սպասարկման գոտիներում՝ հողի մակերեսից բարձր, բուսածածկից զուրկ վայրերում: Շինարարական ճամբարները պետք է լինեն տեխնիկական բարվոք վիճակում և ապահովված լինեն ջրամատակարարման և ջրահեռացման լուծումներով, աղբամաններով: Շինարարական ճամբարները պետք է տեղակայվեն համայնքի հետ համաձայնեցված համայնքային ազատ հողերի վրա՝ խուսափելով մասնավոր հողերի օգտագործումից:

Բուսատեսակների և հողաբուսաշերտի պահպանություն

Շինարարական բոլոր տեսակ գործողությունների համար անհրաժեշտ է հատկացնել հնարավորինս նեղ միջանցք՝ խողովակաշարի ուղեգծով: Մինչ շինարարությունը սկսելը գործունեության համար նախատեսված տարածքներում առկա թփերը պետք է հեռացվեն: Պետք է հետևել, որպեսզի բուսականության մաքրումը լինի միայն խողովակաշարի ուղեգծի երկայնքով՝ սահմանված միջանցքից դուրս ազդեցությունները կանխելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վնասվելու դեպքում ծառերի արմատները ոչ-վեգետացիոն ժամանակաշրջանում ավելի հեշտ են վերականգնվում, խրամուղիների փորման աշխատանքներն իրականացվելու են բույսերի մինչ- կամ հետ-վեգետացիոն ժամանակահատվածներում: Դա կմեղմի կամ հնարավորինս կբացառի նախատեսվող աշխատանքների վնասակար ազդեցությունը բնական բուսածածկի և ծառաթփային բույսերի վրա: Բուսատեսակներին հասցվող վնասը նվազագույնի հասցնելու համար ջրատարի անցկացման տարածքներում հողի բերրի շերտը՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված կարգի համաձայն պետք է կտրել և պահեստավորել այդ նպատակի համար նախատեսված վայրում՝ հետագայում տարածքների վերականգնման համար օգտագործելու նպատակով: Խրամուղիների հետլիցքն ու հարթեցումը ապահովելուց հետո բուսածածկով պատված տարածքների հողաբուսաշերտը վերադարձվելու է նախկին տեղը:

Թափոնների կառավարում

Թափոնների կառավարման նպատակն է՝ կապալառուի և աշխատակիցների համար սահմանել շինարարության ընթացքում առաջացող թափոնների հեռացման, տեղադրման, կամ օգտագործման ճիշտ սկզբունքներ:

Անվտանգ թափոնները ներառում են՝ շինարարական և կոշտ կենցաղային թափոնները, բուսական մնացորդները, որոնք կարող են հանդիպել ջրանցքներում, կամ շինհրապարակներում թփուտների տեսքով և խոչընդոտել շինարարական աշխատանքների իրականացմանը: Այս թափոնների ոչ պատշաճ պահեստավորումը, տեղափոխումը և հեռացումը կարող են առաջացնել բացասական ազդեցություններ՝ շրջակա տարածքների համար:

Վտանգավոր թափոններ, որոնք կարող են լինել բռնկվող, քայքայվող, ճառագայթող կամ թունավոր և ունենալ ծանր ազդեցություններ: Շինարարության ժամանակ առաջացող վտանգավոր

թափոնները կարող են ներառել՝ մարտկոցներ, ներկեր, լուծիչներ, օգտագործված յուղեր, քուրքներ և քիմիական այլ թափոններ:

Կեղտաջրերը ներառում են՝ շինարարության հոսքաջրերը (որոնք կարող են առաջանալ շինհրապարակներում) և կենցաղային կոյուղաջրերը (որոնք կարող են առաջանալ աշխատողների տնտեսական գործունեության արդյունքում) և կարող են պարունակել աղտոտիչներ և պաթոգեն տարրեր:

Վերը նշված թափոնների վնասակար ազդեցություններից խուսափելու համար նախընտրելի են կառավարման հետևյալ սկզբունքները.

- խուսափել թափոնների արտադրությունից,
- կրկնակի օգտագործել, կամ վերամշակել թափոնները, որքան հնարավոր է,
- առաջացող թափոնները հեռացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքի ղեկավարի, կամ համապատասխան մարմինների հետ համաձայնեցված,
- գոյություն ունեցող հանքավայրերի և թափոնների հեռացման վայրերի օգտագործում (նախագծման փուլում ձեռք բերված համաձայնագրերում ամրագրված պայմանների համաձայն),
- շինանյութերը (իներտ նյութեր, բետոն) ձեռք բերել լիցենզավորված մատակարարներից, կամ օգտագործել գոյություն ունեցող հանքավայրերը,
- թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի հստակ սահմանում (բնապահպանական տեսանկյունից առավել ընդունելի վայրեր, որոնք կհաստատվեն համապատասխան մարմինների կողմից):

Շինարարական աշխատանքների ընթացքում յուղի և վառելիքի պահեստավորման կամ տեխնիկայի վերալիցքավորման ժամանակ արտահոսքը շրջակա տարածքներ և ջրային հորիզոններ բացառելու նպատակով շինճամբարում պետք է կազմակերպվի վառելիքի ժամանակավոր լցակետ, որը համարված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով: Աշխատանքների ավարտից հետո այն պետք է ապամոնտաժվի: Արտահոսքերի դեպքում անհրաժեշտ է կատարել մաքրման աշխատանքներ և տեղյակ պահել ԲՆ-ին:

Օգտագործելով վերոնշյալ սկզբունքները և կիրառելով համապատասխան ուսուցողական/դասընթացների մեթոդները՝ թափոնների կառավարման հետ կապված ռիսկերը շինարարության ընթացքում կհասցվեն նվազագույնի:

Ավելցուկային բուսահողի օգտագործումը կանաչապատման նպատակով, իսկ մնացորդային հողային զանգվածի օգտագործումը ճանապարհների վերականգնման համար պետք է իրականացվի ազդակիր համայնքների ղեկավարների հետ համաձայնեցված:

Շինարարական նյութեր

Եթե Կապալառուն նախընտրում է կամ պետք է օգտագործի իր սեփական հանքը, նա պետք է խստորեն հետևի օրենսդրությամբ սահմանված պահանջներին և մշակի մեղմացնող միջոցառումներ հատուկ դեպքերի կամ հատուկ տեսակի հանքերի շահագործման համար: Մասնավորապես, պետք է իրականացվեն շրջակա միջավայրի բոլոր տարրերի (մթնոլորտային օդ, հող, ջուր, բուսական և կենդանական աշխարհը) հանքաարդյունաբերության ոլորտի համար սահմանված ընդհանուր պահանջները, ինչպես նաև ՀԲ խմբի Արդյունաբերության ոլորտի ԲԱԱ ուղեցույցները: Այս ուղեցույցները կիրառելի են ստորգետնյա և բաց հանքաարդյունաբերության, այլուվիալ նյութերի հանման, հեղուկ օգտակար հանածոների հանման և ծովային հատակի խորացման աշխատանքների համար: Շինանյութերի արդյունահանման ԲԱԱ ուղեցույցները ներառում են նաև տեղեկություն Շինարարական արտադրանքների հումքի արդյունահանման մասին, և հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների բոլոր մեղմացնող միջոցառումները պետք է իրականացվեն: Կապալառուն պետք է հատուկ ուշադրություն դարձնի փոշու հնարավոր արտանետման, հանքի շահագործման ընթացքում պայթեցման և ծանր սարքավորումների շահագործման արդյունքում ակնկալվող բարձր աղմուկի, բերի հողի շերտի, կեղտաջրերի հեռացման, վառելանյութերի արտահոսքի հնարավոր ազդեցությունների մեղմացմանը, ինչպես նաև հանքի շահագործման մեջ ներգրավված աշխատուժի անվտանգությանը և առողջությանն ուղղված մեղմացնող միջոցառումները: Հանքի

շահագործումը ավարտելուն պես Կապալառուն պետք է իրականացնի հանքի փակման ծրագիր և հողի վերականգնում՝ սահմանված ընթացակարգերի համաձայն: Այս ընթացակարգերը սահմանված են հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերով:

Մասնակիցները և այս գործընթացում նրանց դերերի բաշխումը ներկայացված են Հավելված Ա-ում:

9.2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Շինարարության հետ կապված ժամանակավոր ազդեցություններ

Շինարարության կապալառուն պետք է պատշաճ կերպով տեղեկացնի ազդակիր համայնքներին՝ շինարարական աշխատանքների սկսվելու մասին, որի արդյունքում կարող են ժամանակավորապես փակվել ճանապարհները կամ խոչընդոտներ առաջանալ ճանապարհներին, փոշու և աղմուկի մակարդակը կարող է ավելանալ, ճանապարհները ժամանակավորապես կարող են փակվել և կարող են խոչընդոտներ ստեղծվել: Նման ազդեցությունները մեղմելու նպատակով կապալառուն կիրականացնի հետևյալ միջոցառումները .

ա. երթևեկության աճ

Կապալառուն համայնքին կառաջարկի շինարարական տեղամասը շրջանցող ճանապարհ:

բ. մուտքի արգելափակում

Կապալառուն շինարարական ճամբարները, շինարարական տեղնիկան կտեղադրի բնակավայրից հեռու, հանրային կառույցների, մասնավոր գույքի և/կամ հողերի մուտքը չարգելափակելու համար:

գ. աղմուկ և փոշի

Շինարարության և սարքավորումների աշխատանքի հետևանքով առաջացող փոշու և աղմուկի ազդեցությունը մեղմելու նպատակով հարկավոր է.

- շինարարական ճամբարները կազմակերպել բնակելի տարածքներից հնարավորիս հեռու,
- աղմկոտ աշխատանքները պետք է իրականացնել ցերեկվա ժամերին, իսկ գիշերվա ժամերի աշխատանքներից պետք է խուսափել,
- հնարավորինս նվազեցնել ծանր տեխնիկայի օգտագործումը բնակավայրերի մոտակայքում,
- մեքենաների վրա պետք է ձայնախլացուցիչներ տեղադրվեն,
- բնակավայրերում աշխատանքներ իրականացնելիս, կիրառել փոշու կառավարման տեխնոլոգիաներ:

դ. առողջական խնդիրներ

Աշխատողների շրջանում ալերգիկ, շնչառական և այլ առողջական խնդիրներ չառաջացնելու նպատակով, կապալառուն պետք է կիրառի միջազգային չափորոշիչներին համապատասխանող շինանյութեր:

ե. Շինարարական աշխատանքների հետ կապված անվտանգության ռիսկերը նվազեցնելու կամ դրանցից խուսափելու համար, առաջարկվում են հետևյալ մեղմացնող միջոցառումները.

- բարձրացնել իրազեկվածությունը շինարարական աշխատանքների ժամանակ բացասական ազդեցությունների վերաբերյալ,
- ապահովել, որ բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահովված լինի և օգտագործի անձնական պաշտպանիչ արտահագուստ,
- ապահովել, որ բանվորները տեղամասի անվտանգության վերապատրաստում ստանան
- ապահովել, որ խոշոր սարքավորումներ աշխատեցնողները պատշաճ կերպով վերապատրաստված և լիցենզավորված լինեն,
- ապահովել , որ շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն,

- ապահովել, որ շինարարական տեխնիկական օգտագործվի խստորեն հետևելով շահագործման հրահանգներին,
- ունենալ առաջին օգնության բժշկական փաթեթներ և հակահրդեհային սարքավորումներ,
- աշխատանքային ժամերից դուրս արգելել գործունեությունը տեղանքում,
- ապահովել, որ ակտիվ աշխատանքային տարածքները լինեն ցանկապատված, այնպես որ երեխաները, մարդիկ չկարողանան մուտք գործել և վնասվել:

Ժամանակավոր տեղական զբաղվածություն

Կապալառուն կարող է ժամանակավոր զբաղվածության հնարավորություններ ստեղծել կանանց համար և առավելություն տալ նրանց աշխատանքի ընդունվելիս:

Ոռոգման ջրի մատակարարման ընդհատում

Ոռոգման ժամանակահատվածում կարող են իրականացվել միայն այնպիսի շինարարական աշխատանքներ, որոնք չեն պահանջում ոռոգման ջրամատակարարման դադարեցում և չեն խաթարում ջրամատակարարման գործընթացը:

Շինարարական ճամբարներ

Շինարարության կապալառուն ձեռք կբերի համայնքի հանաձայնությունը համայնքային չօգտագործվող հողի վրա շինարարական հրապարակ հիմնելու համար կամ կստորագրի հողի վարձակալության պայմանագիր:

Մետաղական կառույցներ

Ջրանցքների վրա առկա ինքնաշեն մետաղական կառույցները՝ կամրջակները, ջրաղացները կապամոնտաժվեն շինարարության ընթացքում և հետ կմոնտաժվեն աշխատանքների ավարտից հետո:

9.3. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՈՒՄԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Հիդրոտեխնիկական հանգույցների կանխարգելումը հեղեղումներից

Ջրանցքների շահագործման ընթացքում հիմնական բնապահպանական ռիսկը կապված է խողովակաշարի խցանման և խափանման հետ: Այդ երևույթը բացառելու համար, անհրաժեշտ է մշտապես հետևել խողովակաշարերի աշխատանքին և վերահսկել անցողունակությունը՝ խցանումները, հեղեղումներն ու համակարգի վնասվածքները կանխարգելելու համար:

Ալկալիացման, աղակալման և էրոզիայի կանխարգելում

Ջրանցքների սպասարկման տարածքում հնարավոր է էրոզիոն և ճահճացման ռիսկերի առաջացում, որոնք կարող են հանգեցնել հողերի աղակալմանը և ալկալիացմանը: Համակարգի ենթակայության տակ գտնվող հողատեսքերում էրոզիոն երևույթները կանխելու նպատակով անհրաժեշտ է մշակովի ոռոգվող հողատարածքներում հողը մշակելիս իրականացնել հակաէրոզիոն միջոցառումներ: Լանջերի հորիզոններով առաջարկվում է կիրառել մշակաբույսերի խիտ ցանք, ակոսավորում և թմբավորում, իսկ ոռոգումը կատարել սահմանված նորմերով՝ կարճ ակոսներով:

Տարածքներին բնորոշվում չեն գրունտային ջրերի բարձր մակարդակը: Քանի որ այդ տարածքները հակված չեն ճահճացման, պետք է փաստել, որ ավելորդ ջրերը հողամասերից ժամանակին կարող են հեռացվել:

Ոռոգման ջրի որակի պահպանում

Ջրանցքների միջոցով մատակարարվող ջրի որակը կախված է ջրաղբյուրից: Ջրի որակի մոնիտորինգը պարբերաբար իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգի կենտրոնի (ՇՄԱՄԿ) կողմից ընտրված նմուշարկման կետերում:

Ջրի որակի մոնիտորինգի տվյալները տեղադրվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (<http://www.mnp.am>) և ՇՄԱՄԿ-ի կայքերում (<http://www.armmonitoring.am>) և հասանելի են շահագրգիռ կողմերի համար: Տեղեկատվությունը թարմացվում է ամեն ամիս: ՋՕԸ-ն պետք է հետևի կայքերում

տրամադրված տեղեկատվությանը և տեղեկացնի համայնքի ղեկավարներին ջրի որակի փոփոխությունների մասին:

Ոռոգման ջրի որակի շոշափելի վատթարացման դեպքում ՋՕԸ-ն պետք է դիմի Շրջակա միջավայրի նախարարությանը և/կամ տեղական ղեկավար մարմիններին՝ աղտոտման աղբյուրները բացահայտելու և հողերի վերականգնման համապատասխան միջոցառումներ նախաձեռնելու համար:

9.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՈՒՄԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ Զրոգտագործման մրցակցությունը

Շահառու համայնքների ոռոգման ջրի մատակարարման համար պատասխանատուները պետք է ապահովեն ջրանցքների ջրի անաչառ բաշխումը համայնքների միջև, ինչպես նաև համայնքների ներսում բոլոր ջրօգտագործողների միջև՝ հաշվի առնելով ոռոգվող մշակաբույսերի ջրապահանջը:

9.5. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՈՒՄ

Եթե շինարարական աշխատանքներն իրականացնելիս ի հայտ գան պատմամշակութային հուշարձաններ և մշակութային այլ նյութական իրեր, կապալառուից կպահանջվի աշխատանքների անմիջապես դադարեցում և համապատասխան հաշվետվության ներկայացում Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալություն: Վերջինիս մասնագետները, հայտնաբերված իրերը պատշաճ ուսումնասիրելուց հետո, կտան մասնագիտական եզրակացություն, որի հիման վրա կա՛մ աշխատանքները կշարունակվեն, կա՛մ նախագիծը կվերանայվի:


10. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ) մի համակարգ է, որի միջոցով քաղաքացիները կարող են հաղորդել ծրագրին առնչվող իրենց հարցերն, առաջարկություններն ու մտահոգությունները և ժամանակին արձագանք ստանալ: ՀՏՁՀ ՁՏՕԻՄ-ում գործում է Բողոքների լուծման հանձնաժողով (ԲԼՀ) ազդեցություն կրած մարդկանց մտահոգություններին և բողոքներին պրոակտիվ և արագ կերպով արձագանքելու համար՝ օգտագործելով հասկանալի և թափանցիկ գործելակերպ, որը հասանելի է ազդեցություն կրած բոլոր մարդկանց և շահառու համայնքներին անվճար հիմունքներով:

ԲԼՀ-ն կհամագործակցի տեղական ինքնակառավարման մարմինների հետ և կներգրավվի նրանց Բողոքների լուծման մեխանիզմում: Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց համայնքներին տեղեկություն կտրամադրեն այն մասին, թե ինչպես տարբեր ուղիներով արտահայտեն իրենց բողոքները (անձամբ տեղական ֆոկուսային կետերում, հեռախոսով, էլ. փոստով կամ առցանց) և անհրաժեշտության դեպքում կաջակցեն նրանց: Շահագրգիռ կողմերի, ազդակիր համայնքների և ՀԿ-ների բողոքները և դժգոհությունները կներկայացվեն ՁՏՕԻՄ-ի ԲԼՀ:

Մեխանիզմը չի խոչընդոտի երկրի դատական և վարչական միջոցների հասանելիությանը: Շինարարական աշխատանքներից առաջ ՁՏՕԻՄ-ը շահառու համայնքներին կտեղեկացնի բողոքների լուծման մեխանիզմների մասին և կտրամադրի համայնքում բողոքների հավաքագրման և արձագանքման համար պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները: ՁՏՕԻՄ-ը նաև կբացատրի որոշ կամավորներ (միգրացիոն օգտագործողներ) ընտրելու կարևորությունը, որոնք կարող են համայնքում ծրագրի ֆոկուսային կետեր հանդիսանալ՝ անհրաժեշտության դեպքում իրենց գյուղի բնակիչներին բողոքների լուծման կամ արագացման հարցում աջակցելու համար:

Բողոքների լուծման մեխանիզմ



ԲԼՀ-ն կազմված է ՁՏՕԻՄ-ի անձնակազմից: Հանձնաժողովի նախագահը կհամակարգի հանձնաժողովի աշխատանքները:

Բնապահպանության մասնագետը պատասխանատու կլինի բնապահպանական թողքի, կենսաբազմազանության պահպանման, կլիմայի փոփոխության և այլ բնապահպանական հարցերի վերաբերյալ բողոքների և/կամ մտահոգությունների արձագանքման համար:

Սոցիալական մասնագետը պատասխանատու կլինի սոցիալական բնույթի կամ համայնքային հողերի և/կամ մասնավոր հողերի օգտագործմանն առնչվող բողոքների արձագանքման համար:

Իրավաբանը կաջակցի թիմին առավել բարդ բողոքների լուծման հարցերում, երբ համապատասխան օրենքի կամ կանոնակարգի իմացության կամ ուսումնասիրության անհրաժեշտություն լինի:

Ճարտարագետները պատասխանատու կլինեն ծրագրի նախագծի և տեխնիկական լուծումների հետ կապված բողոքների արձագանքման համար:

ՁՏՕԻՄ-ը բոլոր ստացված դժգոհությունների և հարցերի համար մանրամասն մատյան կվարի, որտեղ կնշվի ներկայացման ամսաթիվը, բողոք ներկայացնող անձի անունը, բողոքի բնույթը, պատասխանի ամսաթիվը, բողոքի վերջնական կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունը և անհրաժեշտության դեպքում ցանկացած այլ հետագա գործողությունները:

11. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11.1. ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Իրականացնող մարմինները պատասխանատու են ՇՄՍԱԳ-ում և ԲՄԿՊ-ում ներառված մեղմացնող միջոցառումների կատարման համար: Նախագծման փուլն իրականացնողը՝ նախագծող խորհրդատուն, պետք է երաշխավորի, որ նախքան շինարարական աշխատանքների համար մրցույթ հայտարարելը համապատասխան լիազորված պետական և տեղական մարմիններից ձեռք են բերվել բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և համաձայնեցումները (օր.՝ ջրային ռեսուրսների և համակարգերի օգտագործման, հանված հողի, թափոնների և շինարարական աղբի հեռացման վայրերի վերաբերյալ):

Շինարարության փուլն իրականացնող մարմինները (շինարարության կապալառուներ) պատասխանատու կլինեն ԲՄԿՊ-ում տրված մեղմացնող միջոցառումների իրականացման, ինչպես նաև շինարարական աշխատանքներին վերաբերող բոլոր թույլտվությունների և համաձայնագրերի ձեռքբերման համար (օր.՝ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության պետական գործակալության հետ համաձայնության ձեռքբերում, եթե շինարարական աշխատանքների ժամանակ անսպասելիորեն ի հայտ գան պատմական/մշակութային/հնագիտական հուշարձաններ կամ մշակութային այլ նյութական իրեր):

Այս ամենը կիրականացվի Հայաստանի Հանրապետության գործող Բնապահպանական և սոցիալական օրենսդրության պահանջների համաձայն: Բացի այդ, շինարարության կապալառուները պետք է իրականացնեն իրենց պայմանագրերում ընդգրկված հատուկ տեխնիկական պայմանները այնպես, ինչպես դրանք ներկայացվում է սույն փաստաթղթի Հավելվածում:

11.2. ՎԵՐԱՀՄԿՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Գործելով որպես Ծրագրի իրականացնող կազմակերպություն՝ ՀՏԶԷ կկրի ծրագրի վերահսկողության ընդհանուր պատասխանատվությունը և ՋՏԻՄ-ի միջոցով կապահովի իրականացման հսկողությունը: ԲՄԿՊ-ի և քաղաքաշինական աշխատանքների ամենօրյա վերահսկումն ապահովելու համար ՋՏԻՄ-ը կվարձի շինարարության տեխնիկական հսկողությունն իրականացնող լիցենզավորված ընկերություն: Ըստ Հայաստանի օրենսդրության՝ նախագծի տեխնիկական վերահսկողություն կարող է իրականացնել միայն հատուկ լիցենզավորված կազմակերպություն: Նման ընկերությունը պետք է ունենա համապատասխան կարողություններով անձնակազմ, որպեսզի բնապահպանական և սոցիալական մոնիտորինգն իրականացվի նույն մակարդակի պրոֆեսիոնալիզմով, ինչպես որ տեխնիկական ասպեկտների աշխատանքները: Լրացուցիչ վերահսկողություն կտրամադրվի տեղական համայնքների ծրագրի շահագրգիռ կողմերի և հասարակական կազմակերպությունների կողմից:

ՋՏԻՄ-ը իրականացնելու է տեխնիկական ընկերության աշխատանքի որակի հսկողություն և պարբերաբար կատարելու է այցելություններ՝ տեխնիկիչի կողմից տրամադրված տեղեկատվությունը ստուգելու նպատակով: ՋՏԻՄ-ը պետք է ստուգի և ապահովի տեխնիկական կազմակերպության հաշվետվությունների հետադարձ կապը, ինչպես նաև ժամանակին ձեռնարկի արդյունավետ գործողություններ հաշվետվություններում բարձրացված հարցերի վերաբերյալ: ՋՏԻՄը պետք է նաև հետևի կապալառուի կողմից բոլոր անհրաժեշտ թույլտվությունների, լիցենզիաների և համաձայնությունների ձեռքբերման կարգերին և աշխատանքների համապատասխանությունը դրանց պայմաններին:

Համաձայն ՀՀ օրենսդրության, հանրապետության ողջ տարածքում բնապահպանական վերահսկողությունը իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Բնապահպանության և ընդերքի պետական տեսչության կողմից, որը ՀՀ Արարատի մարզում ունի համապատասխան ստորաբաժանում: Վերջինիս մասնագետները ծրագրի իրականացման տարածքում կիրականացնեն

բնապահպանական վերահսկողական գործառույթներ ինչպես շինարարության, այնպես էլ հետագա շահագործման փուլերում:

11.3. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետական մարմինները, որոնք լիազորված են կիրառելու նախատեսված աշխատանքներին առնչվող պետական օրենքները, նորմերը և ստանդարտները, հետևյալն են.

- ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, որը հետևում է ջրի բնական աղբյուրներից ջրառին և գետի աղտոտվածությանը,
- ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը ստուգում է շինհրապարակներում սանիտարական պայմանները:

11.4. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Մոնիթորինգ իրականացնող մարմինները պատասխանատու են մեղմացնող և բարելավող միջոցառումների և մոնիթորինգի իրականացման արդյունավետության համար և անհրաժեշտության դեպքում, նաև ծրագրի հետագա համապատասխանեցման համար: Մոնիթորինգ իրականացնող մարմինները պատասխանատու են անհրաժեշտ բոլոր միջոցառումների իրականացման համար: Պետական մարմինները իրենց լիազորությունների շրջանակներում, նույնպես կարող են մոնիթորինգ իրականացնել:

11.5. ԲՅՈՒՋԵ

Շինարարական աշխատանքները մրցույթի դնելու ժամանակ ներկա ՇՄՄԱԳ հաշվետվությանը կցված Բնապահպանության և սոցիալական կառավարման պլանը (ԲՄԿՊ), ինչպես նաև հողի վարձակալության, սերվիտուտի, փոխհատուցումների հետ առնչվող ծախսերը կներառվեն մրցութային փաստաթղթերում, որպեսզի հայտատուները իրենց ծավալաթերթերում կարողանան ներառել անհրաժեշտ մեղմացնող միջոցառումների իրականացման համար պահանջվող ծախսերը:

12. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նախագծման փուլում նախագծման խորհրդատուն ծրագրի ազդակիր համայնքներում ուսումնասիրություններ և քննարկումներ է անցկացրել հիմնական ելակետային տվյալներ ձեռք բերելու, ինչպես նաև ծրագրի սոցիալական ազդեցությունը գնահատելու նպատակով: Խորհրդատուն նաև իրականացրել է հանրային քննարկումներ ազդակիր համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Այդ խորհրդատվությունների նպատակն է իրազեկել ազդակիր համայնքները նախագծի վերաբերյալ, ներկայացնել նախագծային լուծումները և նախագծին առնչվող հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցություններն ու դրանց մեղմացնող միջոցառումներն, ինչպես նաև տեղեկություն տրամադրելու արդյունքում իմանալ համայնքների մտահոգությունները և կարծիքները՝ նախագծման փաստաթղթերը ավարտին հասցնելու ժամանակ դրանք հաշվի առնելու նպատակով:

<<ՇՄԱԳ և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն, սույն նախատեսվող գործունեությունը ենթակա է նաև բնապահպանական փորձաքննության և այդ համատեքստում ևս նախատեսվում են հանրային քննարկումներ:

1-ին հանրային քննարկումները կազմակերպվել են 2022թ-ի հոկտեմբերի 11-ին, 2 ազդակիր համայնքներում՝ Վեդիում և Արարատում, որի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթի 2022թ-ի սեպտեմբերի 28-ի համարում: Հանրային քննարկումների հայտարարությունը, մասնակիցների ցանկերը և արձանգրությունները, ինչպես նաև Արարատ և Վեդի համայնքներից ստացված նախնական համաձայնության գրությունները ներառված են սույն ՆԳՀ-ի Հավելված 5-ում:

13. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Շինարարական աշխատանքների պայմանագրերում համապատասխան դրույթներ ամրագրելով՝ կմեղմացվի շինարարության ժամանակ ակնկալվող բացասական ազդեցությունների մեծ մասը: Այդ դրույթները ներկայացվում են Հավելվածներում:

ՇՄՍԱԳ-ը ներառվելու է քաղաքաշինական աշխատանքների պաշտոնական փաստաթղթերում և աշխատանքային պայմանագրերի անբաժանելի մասն է կազմելու: Կապալառուի աշխատանքների բնապահպանական և սոցիալական մոնիտորինգ իրականացնելու պահանջը ընդգրկվելու է ՋՏՕԻՄ-ի կողմից վարձած տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության Առաջադրանքի պայմաններում:

ՀՀ ազգային օրենսդրության և ԲՄԿՊ պահանջներին չհետևելու պատճառով շրջակա միջավայրին հասցված վնասի դեպքում (մասնավորապես, բնահողի վնասում, տարածքի ծածկում շինարարական աղբով և այլն) կսահմանվեն տուգանքներ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի “Վարչական խախտումների մասին” հոդվածներով և “Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին” ՀՀ օրենքով:

Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի բաժին 10՝ “Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ”, 281-298 հոդվածները վերաբերում են ջրային և հողային ռեսուրսների, մթնոլորտային օդի, ձկնային պաշարների և այլ բնական պաշարների պահպանմանը և սահմանում են պատժամիջոցներ շրջակա միջավայրին վնաս հասցնելու համար: ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենքի հոդվածներ 42-95 վերաբերում են սանիտարահիգիենիկ կանոնների, ընդերքի, ջրերի, անտառների, կենդանական և բուսական աշխարհի պետական սեփականության իրավունքի խախտման, հողի բերրի շերտի օգտագործման կարգի և ջրային ռեսուրսների պահպանության կանոնների խախտումներին: Եվ վերջապես, “Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին” ՀՀ օրենքը սահմանում է կոնկրետ սակագներ կոնկրետ տեսակների և դեպքերի համար, մասնավորապես գլուխ 3-ի 6, 7, 8 հոդվածները սահմանում են փոխհատուցման գումարի հաշվարկը, ինչպես նաև փոխհատուցման հավաքագրելու ընթացակարգերը:

Վերը նշված կանոնակարգերով նախատեսված տույժերի, տուգանքների և փոխհատուցումների չափը պարբերաբար վերանայվում և բարձրացվում են, ստեղծելով ընկերությունների համար բավարար խոչընդոտներ՝ ԲՄԿՊ պահանջները չխախտելու համար:

Բոլոր նշված օրենքներն ու կանոնները լիովին կկիրառվեն Կապալառուների կողմից ծրագրի իրականացման ֆիզիկական աշխատանքների ժամանակ: Ներկայիս ՇՄՍԱԳ-ը և ԲՄԿՊ-ն մասնագիտական բնապահպանական փորձաքննություն են անցել և ներկայացվել են տեղական պետական բնապահպանական տեսչության մարմիններին, որոնք պատասխանատվություն են կրում վերը նշված միջոցառումների վերահսկողության համար: Որևէ խախտում հայտնաբերելու դեպքում նրանք կազմում են համապատասխան վարչական խախտման ակտ՝ նշելով խախտված օրենքի կետը և համապատասխան տուգանքը:

14. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- Հավելված 1. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան. մեղմացնող միջոցառումներ
- Հավելված 2. Մոնիթորինգի պլան
- Հավելված 3. Պատահարի մասին հաշվետվության ձև
- Հավելված 4. Դաշտային ամսական բնապահպանական կառավարման հարցաթերթիկ
- Հավելված 5. Հանրային քնարկումների հայտարարությունը, մասնակիցների ցանկերը և արձանագրությունները
- Հավելված 6. Օգտագործված գրականության ցանկը

Հավելված 1. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան. մեղմացնող միջոցառումներ

Հնարավոր բացասական ազդեցություն	ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Պատասխանատու կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ժամանակը	Վերահսկող կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ծախսերը
ՇՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ					
Հողի բերրի շերտի վնասում	<ul style="list-style-type: none"> - Նախքան հողային աշխատանքներին անցնելը վերին շերտի հեռացում և պահեստավորում՝ վերականգնման փուլում օգտագործելու համար. - Շին.մեքենաների ոչ կարգավորված տեղաշարժի բացառում՝ հողի մակերեսի վրայով: Թույլ տալ դրանց տեղաշարժումը միայն գոյություն ունեցող կամ նշանակված ժամանակավոր ճանապարհներով. - Աշխատանքների ավարտից հետո՝ տարածքի մաքրում, մակերեսի վերականգնում հողի բերրի շերտով 	Կապալառու	Աշխատանքները սկսելուն պես և հողային աշխատանքների ընթացքում	ՋՏՕԻՄ -ը վերահսկող խորհրդատուի միջոցով	Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում
